Էջմիածին

1962

ՌՆԻՎ
ԺԹ ՏԱՐԻ

Մարտ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Գ

1962

ՀՐԱՏ ԱՌՈՒՅԹՈՒՆ ԱՆԼՄ
ՊՐԱՏԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Է.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Տ. Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցի մահվան տասներորդ տարելիցի առթիվ . . 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ավարայրի զյուցազնամարտը 5

Պաշտոնական հաղորդագրություն 8

Պաշտոնական ընդունելություն 9

Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության հանդեսը Մայր Աթոռում 10

Պաշտոնական հաղորդագրություն 12

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՐԵՆԼԻՑԱՆ— Վեհափառ Հայրապետի փոխայցելությունը Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ին 13

ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ ՊԱԼՅԱՆ— «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց» . . 21

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 23

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ— Մեսրոպ Մաշտոց 25

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Ցրմանյան և իր ժամանակը 33

ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱՋԻՐՅԱՆ— Շիրակի վանքերն ու եկեղեցիները 46

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅԵՆԻՔԻՑ 50

Հ. Ս. Հ.— Հանուն պատմական ճշմարտության 53

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie. URSS

Երևան. 1963 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՅ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայաստանեայց Եկեղեցին քրիստոնէական փառաւոր և հպօր եկեղեցիներէն մին է, իր հրաշափառ ծնունդով ու իր երկհազարամեայ պատմութեամբ և մեծագործ հայրապետներով ու տաղանդաշատ վարդապետներով, որոնք իրենց առաքինի վարքով, կեանքի սուրբ գործերով և հարուստ վաստակով՝ մեր լոյս հաւատքին, մեր ազգային գիտակցութեան ու մշակոյթին լուսաշող ջահերը կը հանդիսանան հայ ժողովուրդի բազմադարեան կեանքի ճանապարհին վրայ:

Մեր դարուն, հայ եկեղեցական մեծ դէմք մը և նման լուսաշող ջահ մը հանդիսացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Հայրապետը՝ Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Յովսէփեանց, որ Իր աչքերը փակեց Անթիլիասի մէջ:

Տասը տարիներ անցան այդ օրէն: Տարիներ շարունակ, Գարեգին Հայրապետը լուսատրեց ու փառաւորեց Տանն Կիլիկիոյ պանդուխտ Աթոռը, Իր հոգևոր և իմացական բացառիկ շնորհներով և հայրենասիրական բոցավառ ջուխչով:

Հանգուցեալ Հայրապետը մեծ անձնաւորութիւն մըն էր իբրև հաւատաւոր ու ներշնչուած հոգևորական, որ Իր շուրջիններուն և համայն մերազն ժողովուրդին բուռ-բուռ բաշխեց Ս. Աւետարանի լոյսը՝ հուր խօսքերով, հուր աւիւնով:

Համակ ոգի էր Ան, անսպառ եռանդ ու փայլատակող սուրբ մտածում:

Գարեգին Հայրապետ գիտական պայծառ միտք մըն էր արդիական ըմբռնումով, որ լոյս սփռեց նաև Իր ուսումնասիրած կալուածէն ներս, հայ մատենագրութեան ժառանգ թողլով մշտական արժէք ներկայացնող աշխատութիւններ: Հայ հին եկեղեցական արուեստին և մանրանկարչութեան նուիրուած Իր գործերը պիտի մնան վաւերական հեղինակութիւններ, այժմ և միշտ:

Գարեգին Կաթողիկոս մեծ եղաւ նաև իբրև եկեղեցական գործիչ և հայրենասէր հոգևորական: Իր ամբողջ կեանքը ան նուիրեց Իր Եկեղեցիին և Հայրենիքին, Հայ Ազգի գերագոյն շահերու բիւրեղեայ գիտակցութեամբ:

Աւելի քան կէս դար շարունակ, այս գիտակցութեամբ տքնեցաւ ու պայքարեցաւ, Իր արդար հոգիով կուրծք տալով ամէն տեսակի յարձակումներուն և հալածանքներուն:

Հերոսացաւ Սարդարապատի ճակատին վրայ, ու ապա այլ պայմաններու մէջ, նոյն մարտը շարունակեց Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ բազմած, նոյն ոգեշնչումով, նոյն ազգային հայրենասիրական գիտակցութեամբ: Մեր դարու հայոց պատմութեան էջերուն վրայ, Իր անունը ոսկի տառերով քանդակուած պիտի մնայ, իբրև ախոյեան իրաւ հայրենասիրութեան և հայ եկեղեցական միասնութեան:

Մեծ Հայրապետի յիշատակը, Անոր կեանքի ու գործի ուղին, եկեղեցաշէն ու հայրենանուէր փառաւոր օրինակ մը կը հանդիսանան բոլոր հայ հոգևորականներուն համար, որոնք կ'ուզեն հաւատարիմ մնալ իրենց ուխտին և իրենց ժողովուրդին:

Իր հայեացքը սևեռած միշտ դէպի վեր, միշտ դէպի պայծառ հորիզոնները ոգեկան աշխարհներու, Գարեգին Հայրապետը Իր ներշնչումը տևապէս կը ստանար Փրկչի Իշման Ս. Սեղանէն և Հայոց Աշխարհի երկնամերձ լեռներէն: Հայրենի Հողին ծայնն էր, որ Իր սրտին մէջ կը տրոփէր: Իր ամբողջ էութեամբ Ան կը սիրէր ու կը պաշտէր Իր հարազատ, չարքաշ ժողովուրդը և Մայր Երկիրը Հայաստան: Կը սիրէր Հայաստանեայց Եկեղեցին իբրև Հայ Ազգի հրաշալի ձեռակերտը և երկիւղածութեամբ կը պաշտէր, ուր որ ալ գտնուէր, աստուածակառոյց Ս. Էջմիածինը ամենայն հայոց: Գարեգին Կաթողիկոս տարիներ շարունակ Ս. Էջմիածնի անշէջ լոյսով կեանք տուաւ Կիլիկիոյ Աթոռին ու շէն պահեց կայն:

Մեծանուն Հայրապետը աւելի քան որևէ հայ հոգևորական, մտքի ու հոգիի կմայելի պայծառութեամբ ու ջերմութեամբ բիւրեղացուց ու ամրապնդեց ազգային-եկեղեցական միասնութեան ոգին, այդ ոգին դաւանելով իբրև գերագոյն գրաւականը՝ ի սփիւռս աշխարհի ցրուած պանդուխտ մեր ժողովուրդի կեանքի անվտանգ պահպանման: Այսօ՛ր ալ, կեանքի միւս ափէն, Ան կը շարունակէ մեզ լուսաւորել, զօրացնել ու առաջնորդել: Կը շարունակէ նաև յորդորել ու սաստել բոլոր անոնք, որոնք կը շեղին Իր գծած ուղիէն ու կը թափառին կորստեան ճամբաներու վրայ:

Տասը տարիներ անցան Իր մահէն, սակայն Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց կենդանի է մեր կեանքին մէջ, մեր հոգիներէն ներս, և Իր անունը սուրբ կը պահուի Ս. Էջմիածնի լոյսերուն մէջ:

Ու բազմած է Ան մահաւանդ Երևանի Մատենադարանի Իր աթոռին վրայ, առաւել փառքով քան որևէ այլ տեղ:

Լուսանբակ Հայրապետը է՛ և պիտի մնա՛յ բոլոր գալիք սերունդներուն համար՝ բոցաշունչ պատգամ մը և լուսեղէն ճանապարհ մը:

«Մահկանացու ծնեալ, անմահ փիւռն յիշատակ եթող» (Խորենացի):

Ի Տէր Քանզուցեալ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Յովսէփեանցի մահուան տասներորդ տարելիցի առթիւ, կը հրահանգենք մեր բոլոր նուիրապետական Աթոռներուն, թեմական առաջնորդներուն և եկեղեցական ազգային իշխանութիւններուն՝ Հոգեհանգստեան պաշտօն կատարել այս տարուան յունիսի 10-ին, Ս. Հոգւոյ Գալստեան տօնին, և ոգեկոչել յիշատակը մեծ Հայրապետի կեանքին ու գործին:

Թող մեր ամէնուս սրտերուն մէջ և Հայ Եկեղեցւոյ կամարներուն տակ միշտ պայծառ մնայ մեծագործ Հայրապետի նուիրական անունը:

Ցաւերձական լո՛յս և խաղաղութի՛ւն Իր անմահ հոգւոյն:

«Ցաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 12-ն մարտի 1962 Փրկչական ամի,
և ի տուամարիս Հայոց ՌՆԾԱ. ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՎԱՐԱՅՐԻ ԴԵՊՔԵՐԸ

Մեկ տարի, Մեծ պահոց բարեկենդանի նախընթաց շաբթուն, խանդավառորեն և համազգային հանդիսությամբ, նշվում են մի քանի զուտ ազգային-եկեղեցական տոներ, ե դարի պատմական և հերոսական իրադարձությունների և մի շարք մեծ դեմքերի նվիրված:

Այդ տոները ըստ էության ամենասերտ կապ ունեն միմյանց հետ, լրացնում և գեղեցկացնում են միմյանց իրենց հիշատակով և խորհրդով:

Այդ տոներից առաջինն է, ըստ եկեղեցական օրացույցի, «Սրբոյն Սահակայ Պարթեի Հայրապետին մերոյ» տոնը:

Ս. Սահակ ե դարի մեր նշանավոր ազգային-եկեղեցական գործիչներից մեկն է, հայ մատենագրության նահապետը և Աստվածաշնչի թարգմանիչը:

Ըստ Կորյունի և Փարպեցու վկայության, Ս. Սահակի մահվան հաջորդ տարվանից սկսած, հայ ժողովուրդը սովորություն է դարձրել տոնելու հիշատակը Ս. Սահակ Պարթև հայրապետի: Տարվա մեջ մեր եկեղեցին երկու անգամ է մեծարում հիշատակը Ս. Սահակ Պարթև Հայրապետի: Այդ երկու տոները շարժական են, առաջինը տոնվում է միշտ Առաջավորաց պահքի կիրակիից հետո, տասնչորսերորդ օրը, որ լինում է շաբաթ և տատանվում է հունվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը: Ս. Սահակի երկրորդ տոնը նշվում է Հոգեգալստյան տոնից հետո, 33-րդ օրը, որը միշտ պատահում է հինգշաբթի օրվա և տատանվում է հունիսի 12-ից մինչև հուլիսի 16-ը:

Երկրորդ տոնը «Սրբոց Վեղանյանց քահանայից» տոնն է: Վեղանյանք նահատակվեցին 454 թվականի հուլիս ամսի 31-ին, Ապար աշխարհի Ռեան գյուղում: Վեղանյանք, նահատակ հոգևորականների այդ լուսե փաղանգը, Հայ եկեղեցու պարծանք սրբերն են և «ախոյեան եկեղեցւոյ», որոնք երջանիկ արիությամբ «ճեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ», և նրանց անձնուրաց նահատակությամբ «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»:

Իսկ երրորդ տոնն է «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին», Ավարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին. 451 թվականի մայիսի 12-ին:

Վարդանանց պատերազմը ամենասրտառուչ մեկ դրվագն է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության:

1500 տարի մեզ բաժանում է Վեղանյանց և Վարդանանց ժամանակաշրջանից: Բայց երանց սրտառուչ կերպարները, անունն ու հերոսական անձնուրացությունը չեն ճնացել, չեն մոռացվել, այլ դարերի հետ բարձրացել և հասել են մեր օրերին, և ժամանակի հետ, սերունդների սրտի վրայով, կգնան դեպի հավերժություն:

Ամեն հայ, իր մանկության օրերից սկսած, խանդավառվել է մանավանդ քաջ ու արի, կարմիր Վարդանի հերոսական ոգով և հայրենասիրությամբ: Վարդանանց պատմությունը ամեն հայ անգիր գիտի: Մեզանից յուրաքանչյուրը կարոտով է հիշում մանկության այն օրերը, երբ հուզումով էինք ոգեկոչում հիշատակը Վարդանի.

«ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀՈԳԻ ՎԱՐԴԱՆ,
ՀՈԳԻՍ ՀՈԳԻՈՅԴ ԵՂՆԻ ՂՈՒՐԲԱՆ...»:

Վեռնդյանճ նահատակվեցին Ապար աշխարհում, իսկ Վարդանանճ ընկան Ծղմուտի ափերի մոտ, հերոսական մահով,

«ՈՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՇՈՂԱՑ ԱՐԵՒ,
ՆԱԻԱՐՇԱՆԱՅ ԴԱՇՏԻՆ ՎԵՐԵՒ»:

Ամեն հայ սրտի մեջ կա մի մասնիկ, մի նառագայթ Վարդանից, որը հրան դարձնում է ուխտապահ զինվորը այն հոգևոր, մշակութային, ազգային արժեքների և ավանդների, որոնց համար ընկան Վարդանանճ:

Վարդան թոռն էր Ս. Սահակ Պարթև Հայրապետի, մեծացած լուսամիտ և հայրենասեր մեծ Կաթողիկոսի հայվածքի տակ, ոգով ու նախանձախնդրությամբ մեր պատմության մեծ հոգիների:

Վեռնդ, որի անունով կոչվում է ամբողջ խումբը նահատակ հոգևորականների, Սահակ Հայրապետի երիցագույն աշակերտներից մեկն էր, իսկ Ապար աշխարհում նահատակված Հովսեփ կաթողիկոսը՝ հաջորդն ու աշակերտը Ս. Սահակ Պարթևի:

Անա այս մտածումների և պատմական փաստերի լույսի տակ, վերոհիշյալ երեք տոները առնչվում են միմյանց ու կազմում ոգեկան մի ամբողջություն, շունչին ու կենդանի տակ Լուսավորչի վերջին շառավիղ Ս. Սահակ Պարթևի:

Ղևոնդ, վանանդեցի այդ բանանան, «այրեն նաւատարիմ և նշմարտապաշտ», որ իրավամբ կոչվում է նաև «արծիւն Աւարայրի», ՃԸՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ և ՏԵՍԻԼՔԻ մարդն էր: «Հաստատ մնանք,—ասում է նա իր նառի մեջ,— ՏԵՍԻԼՔԻ այդ բարձրության և հարձակումով խփենք ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ թշնամիներին»:

Վարդան, մյուս կողմից, ՀԱՎԱՏԻ և ԱՐԻՒՒԹՅԱՆ մարդն է: «Քաջությամբ մեռնենք,— ասում է նա,— որպեսզի... բարձրանա ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ կողմը, և եթե հասել է ժամանակը մեր մահվան, ուրախությամբ ընդունենք այն, բայց չլինի, որ քաջության արիության մեջ վատություն խառնենք»:

Հոգևոր ճեմարանում կազմակերպված այս տարվա Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսության ժամանակ, Վեհափառ Հայրապետը շատ պատկերավոր և հիշտ կերպով բնութագրեց Վարդանի դերը Ավարայրում: Վեհափառ Հայրապետը նշեց, որ «Ավարայրի դաշտի վրա Քաջն Վարդան իր սուրով պաշտպանեց նաև իր մեծ հորը գիրքը, հայրենի առաջին գիրքը»:

Արդարև, Ավարայրը լույսի հաղթանակն էր խավարի դեմ, քաջության հաղթանակը վատության դեմ, հնչմարտության հաղթանակը մոլորության դեմ, բարության հաղթանակը՝ չարության դեմ:

Անա այս տեսանկյունից պետք է դիտել և գնահատել Վարդանանց հակատամարտը: Առանց Ս. Սահակի և Ս. Մեսրոպի մշակութային, գրական, առաքելական գործունեության, անհասկանալի պիտի մնար Վարդանանց հերոսամարտի նշանակությունը: Ս. Սահակն ու Ս. Մեսրոպ, գրերի գյուտով, հայ մշակույթի ստեղծումով փրկեցին հայ միտքը, հայ մտածողությունը, իսկ Վարդան՝ հայ հոգին, հայ հավատը, որոնք մեր ժողովուրդի կյանքի, գոյության և հավերժության երկու սյուներն են հանդիսացել:

Մեր պատմությունը, հայ ժողովրդի պատմությունը արձանագրությունն է ամեն բանից առաջ, մեր ժողովրդի հոգևոր, մշակութային և բարոյական հաղթանակների: Բարոյական այդ հաղթանակներն են, որ ամրապնդել են մեր ազգային գոյության ամուր հիմքերը, որպես ժողովուրդ, որպես հավատականություն և եկեղեցի: Վարդանանց հերոսամարտը գերագույն ակտն էր հայրենասիրության և բարոյական հաղթանակի: Այս իմաստով, նշում են պատմաբանները, Վարդանանց պատերազմը դուրս է գալիս ազգային նեղ շրջանակից, և ստանում է, Արեալի պատմության մեջ մանավանդ, համաշխարհային նշանակություն, որպես առաջադիմության պատերազմը հետադիմության դեմ:

Վարդանանց հերոսամարտը չի տեղավորվում ե դարի հիսունական թվականների մեջ: Վարդանանճ Ավարայրում իրենց հերոսությամբ այնպիսի գործ կատարեցին, որի «Համբաւն պատմեսցի յաւիտեան», որպես հայոց պատմության հերոսական էջերից մեկը:

Հայ ժողովրդի սրտում Վարդանանց ՈԳԻՆ անմեռ է մնացել: Այն իր անջնջելի և խորը դրոշմն է դրել հայ ժողովրդի հերոսամարտի պատմության վրա, Ավարայրից մինչև Սարդարապատ: Վարդանանց հերոսամարտով սերունդներ են դաստիարակվել և խանդավառվել՝ հանուն Հայրենիքի մղված մարտերում: Վարդանի հերոսական ոգին նոր թափ, նոր որակ է տվել հայ ժողովրդի պայքարին:

Երբ մի ժողովուրդ կռվում է իր ազատության և գոյության համար, իր հոգու անկախության և իր մշակույթի համար, նա ապրում է, նա չի կորչում, եթե նույնիսկ պարտվում է մարտում, բայց մնում է նրա հերոսական պատմությունը, որը գալոց սերունդներին ապրեցնում է, բարձրացնում, հերոսացնում և այդպիսով ստիպում է կորցրածը նորից ետ բերել, հաղթանակել: Ժողովուրդների ուժը նրանց գիտակցության մեջ է, հավատի մեջ է, բարոյականի մեջ է: Գիտակից, հավատավոր Ազգը չի կորչի, ինչքան էլ փոքր

լինի նա թվով: ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՈՒԺ է: ԵՎ ԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՈՐԸ ՊԱՅԾԱՌ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԻ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺԵՐԻ, ՆԱ ԱՆԱԶ է, ԻՆՉՊԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

Ավարայրը դրսևորեց հայ ժողովրդի այս պայծառ գիտակցությունը, միասնությունը, արիությունը, ազատասիրությունը: Ավարայրում կռվող ամեն մի հայ ռազմիկ՝ իշխան թե հոգևորական, ազատ թե ռամիկ, կին թե տղամարդ, շատ լավ էր հասկանում թե ինչի՞ համար է կռվում և արյուն թափում: Համաժողովրդական այդ հերոսության առաջ գիշաթափ է լինում թշնամին: «Ոչ ի կասյանաց զանգիտեն, ոչ ի տանջանաց երկրնչին. զմահ ևս զկեանս ընտրեն: Ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել»:

Ավարայրը շարունակվում է այսօր ևս: Մեր դեմ չկան ոչ Հազկերտ, ոչ փղեր: Սակայն այսօր ևս կան մարդիկ, մութ ուժեր, որոնք դարի Հազկերտի և Վասակի նման փորձում են նորից բակտել սրբազան «ուխտն հաւատոց մերոց», որի պաշտպանության համար արյուն թափեցին Վարդանանք:

Այդ բանն անել չհաջողվեց սակայն Հազկերտին. չի հաջողվի և բոլոր նրանց, որոնք փորձում են ոտնահարել հայ ժողովրդի հերոսական ոգին, որովհետև «սրբազան ուխտն հաւատոց մերոց ոչ եթէ ընդ մարդոյ, այլ անլուծութեամբն Աստուծոյ, որում չիք հնար քանդել և ի ոգ ելանել, ՈՉ ԱՅԺՄ. ԵՒ ՈՉ ՅԱՊԱ ԵՒ ՈՉ ՅԱՒԻՏԵԱՆՆ ԵՒ ՈՉ ՅԱՒԻՏԵՆԻՑ ՅԱՒԻՏԵԱՆՆ»:

Ղևոնդյանց և Վարդանանց հաղթական դրոշը այսօր էլ իր սուրբ և վստահելի ձեռքում է պահում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, որպես անսասան վեմը եկեղեցական ուխտապահության և օջախի հայրենասիրության:

Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակի առիթով, մի անգամ ևս վերանորոգենք մեր ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՒԽՏԸ և Ղևոնդ երեցի նման ասենք. «Ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորելոցն, եղկելիս և ողորմելիս. քան զամենայն մարդիկ զսոսա համարեսցուք», և Վարդանի ոգով մի անգամ ևս հաստատենք. «ՊԱՏՐԱՍՏ ԵՄՔ... Ի ՀԱԼԱԾՆՍ ԵՒ Ի ՄԱՀ. ԵԹԷ ՀԱՍԵԱԼ ԻՑԷ ԺԱՄԱՆԱԿ ԿԵՆԱՑ ՄԵՐՈՑ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ՅԱՐՈՒԹԻՒՆՍ ՔԱՋՈՒԹԵԱՆ ՎԱՏՈՒԹԻՒՆ ՄԻ՝ ԽԱՌՆԵՍՑՈՒՔ»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի հրամանով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, սույն տարվա հոկտեմբերի սկզբին Ս. Էջմիածնում հրավիրվում է Ազգային-եկեղեցական սրբազումար ժողով:

Հոկտեմբերի 7-ին հանդիսավոր կերպով կնշվի Նորին Ս. Օծության գահակալության 7-րդ տարեդարձը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում կմատուցի հայրապետական սուրբ պատարագ և կօրհնի Սրբալույս Մյուռոն:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մարտի 27-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ին և զրույց ունեցավ նրա հետ:

Զրույցին մասնակցում էր Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Դասպարյանը:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1-ին, հինգշաբթի, «Տոն սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Եղանակը ճշմարտորեն գարնանային էր։

Ժամը 11-ին Մայր Տաճարում սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը, նվիրված հայ հավատի և Հայրենիքի անձնուրաց նահատակների խնկելի հիշատակին։

Պատարագում է Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։ Սուրբ պատարագին ներկա է հավատացյալների հոծ բազմություն։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար։

Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանի ղեկավարությամբ, կատարում է սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը։

Այսօր միաժամանակ է «յիշատակ մեռելոց և տօն ազգային»։

«Հայր մերս»-ից առաջ կատարվում է «Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»։

Սուրբ պատարագի ավարտին, Իշխան Ս. Սեղանի առաջ, կատարվում է հայրապետական մաղթանք, որովհետև Վարդանանց տոնը է միաժամանակ «Տօն անուանակոչութեան Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց»։

Մաղթանքից առաջ, պատարագիչ սրբազանը քարոզում է համազգային տոնի հոգևոր, ազգային-եկեղեցական մեծ նշանակության մասին, հանդամանորեն ծանրանալով Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց նահատակության պատմական իմաստի վրա։

Այնուհետև քարոզիչ սրբազանը սրտագին բարեմաղթություններ է անում Ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով։

Հայրապետական մաղթանքից հետո, Վեհափառ Հայրապետը Տաճարում ընդունում է հավատացյալ Իր հոգևոր զավակների սրտագին շնորհավորությունները Իր անվան տոնի ուրախ առիթով։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ, ուր բազմած Հայրապետական Իր Գահի վրա, ընդունում է պաշտոնական շնորհավորանքները Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, վանքի պաշտոնեության և պաշտոնական այլ անձնավորությունների։

Բոլոր նեղկանների զգացմունքների քարգմանն է հանդիսանում Տ. Սահակ արքեպիսկոպոսը իր շնորհավորական ելույթով։

Վերջում Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված Իր անվանակոչության տոնի առիթով արտահայտված շերմ խոսքերից, Իր գոհունակությունն է հայտնում։

Նորին Ս. Օծության անվանակոչության տոնի ուրախ առիթով, Մայր Աթոռում ստացվել են նույն օրը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր նվիրապետական Աթոռներից, թեմերից, ազգային-եկեղեցական իշխանություններից, պաշտոնական կազմակերպություններից և առանձին բազմաթիվ անձնավորություններից։

Ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի է ունենում գրական-գեղարվեստական հանդես, նվիրված Վարդանանց հիշատակին։

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով և վերատեսուչ սրբազանի խոսքով։

Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը հաջողությամբ կատարում է Վարդանանց նվիրված շարականներ և երգեր՝ «Ընորհաշնորհ պսակաւոր», «Արիացեալք», «Թե Հայրենեաց պսակադիր», «Իմ Հայրենեաց հոգի Վարդան»։ Բ դասարանի ուսանող Գրիգոր Բուռնիաթյանը ապրումով ու հուզումով արտասանում է Եղիշեի «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին», Բ դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը՝ Դ. Շահլամյանի «Գեղարդ»-ը։

Բ լսարանի ուսանող բարեշնորհ Կայծակ սարկավագ Մահտեսյանը, ուսանողության անունից, կարդում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով որդիական երախտագիտությամբ գրված հետևյալ ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Թույլ տվեք Հոգևոր Ճեմարանի ուսանողների երախտագետ զգացումներու թարգմանը հանդիսանալ այս համազգային տոնին առթիվ ու շնորհավորել Ձերդ Վեհափառության անվանակոչության տոնը։

Հայ ժողովուրդը այս բոպեին բերկրությամբ ու հպարտությամբ կոգեկոչն Վարդանանց խորհուրդը։ Եկեղեցիներու կամարներու տակ կղոդանջեն անլռելի զանգակները, որ 1500 տարիներ առաջ Հազկերտի սուրը կապառնար լռեցնել։

Այսօր հայությունը կպատվե նաև իր սիրելի, եկեղեցաշեն և հայրենասեր Հայրապետի բարձր անձնավորությունը և իր անսասան հավատարմությունը կհայտնե Հայաստանյայց Եկեղեցիի դարավոր կեդրոն աստվածակառույց Ս. Էջմիածնին և անոր Գահակալին։

Մենք, Հոգևոր Ճեմարանի ուսանողներս ալ, երախտագիտական պարտք ունինք Ձերդ Վեհափառության հանդեպ։ Դուք Ձեր բազմազբաղ վայրկյաններեն շարաթը քանի մը ժամ կհատկացնեք մեր մատաղ միտքերն ու հոգիները զարգացնելու, մեզ դասավանդելով քարոզախոսություն և տրամաբանություն։

Այժմ Ձերդ Վեհափառության հովանիին տակ կծաղկի մեր լուսո վառարան Ս. Էջմիածինը իր Հոգևոր Ճեմարանով։

Թող մեր պատմության մեջ հավիտյան պայծառ և ոգևորյալ մնա Վարդանանց պատկերը և անոր արթնցուցած գաղափարի ոգին, որ միայն կրնա ապրեցնել այս Ազգը։

Բազկատարած ու սրտագին կաղոթենք Իշխան Ս. Սեղանի առաջ՝ Ձեր թանկագին կյանքի արևշատության և առողջության համար։ Աղոթենք, որ մեր սրտերուն մեջ միշտ վառ մնա Ղևոնդյանց եկեղեցական ուխտապահությունը և Վարդանանց հայրենասիրական ոգին։

Հավերժ փա՜ռք 1036 մարտիրոսներու խնկելի և անմահ հիշատակին։

Վարդանանց տոնի առթիվ կազմակերպված հանդիսության գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Հ. Հարությունյանը, որն իր բովանդակալից, գիտական բնույթ ունեցող ելույթի մեջ ծանրացավ Վարդանանց պատերազմի ծագման տնտեսական, քաղաքական, եկեղեցական դրդապատճառների և հայ ժողովրդի դիմադրության համաժողովրդական նշանակության վրա, այն բնութագրելով որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի փառավոր և հավերժ անմոռանալի մի դրվագը։

Հանդիսության վերջում փակման խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, ծանրանալով այն գեղեցիկ մտքի վրա, որ Ե դարում ապրող ավագ և կրտսեր սերունդը, մինչև 451 թվականը, հրաշքի համահավասար դեր կատարեց մեր մշակույթի պատմության մեջ։ Ավագ սերունդը, թարգմանիչների սերունդը, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գլխավորությամբ, ստեղծեց գիր ու գրականություն և Աստվածաշնչի թարգմանությամբ հիմը դրավ հայ դպրության։ Իսկ Վարդանը 451 թվականին Ավարայրում իր սրով պաշտպանեց իր մեծ հոր՝ Ս. Սահակ Պարթևի թարգմանած գիրքը՝ Աստվածաշունչը, այսինքն հայ մշակույթի խարիսխը։

Հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, իր անվանակոչության տոնի առիթով, բարեհաճեց էր Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի Միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներին և այլ հրավիրյալներու։ Ընդունելությունը անցավ ջերմ, սրտագին մթնոլորտում։



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց սիրով ընդունելով եղբայրական հրավերը Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ի, սույն տարվա փետրվարի 16—21-ը պաշտոնական այցելություն տվեց Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսին և Վրաստանի հայոց թեմին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և ուղեկցությամբ Նորին Սրբություն Եփրեմ Կաթողիկոսի և Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, Թբիլիսիում այցելեց Սիոնի վրացական Մայր Եկեղեցին, ինչպես նաև Մցխեթայի և Ջվարիի պատմական վանքերը:

Վեհափառ Հայրապետը կիրակի, փետրվարի 18-ին, հանդիսավոր պատարագ մատուցեց և քարոզեց հայոց առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցում, խոտեռամ հավատացյալների ներկայությամբ: Սուրբ պատարագին ներկա էր նաև Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսը Իր շքախմբով:

Փետրվարի 20-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահեց ժամերգության Հավլաբար հայկական թաղի Ս. Էջմիածնեցվոց եկեղեցում և քարոզեց ի ներկայության հոծ ու խանդավառ բազմության:

Նույն օրը, հետմիջօրեին, Նորին Ս. Օծությունը այցելեց Թբիլիսիի հայ նշանավոր գրական և հասարակական գործիչների պանթեոնը և նախագահեց Հոգեհանգստյան արարողության: Հոգեհանգստյանը ներկա էին Թբիլիսիի հայ մտավորականության և հայ հասարակության ներկայացուցիչներ:

Փետրվարի 20-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը և Եփրեմ Կաթողիկոսը, ուղեկցությամբ պետական իշխանության ներկայացուցիչների, այցելեցին Ռուսթավի հորակառույց քաղաքը և դիտեցին տեղի մետաղաձուլական մեծ գործարանը:

Փետրվարի 19-ին, Նորին Վեհափառությունը, ուղեկցությամբ Եփրեմ Բ Կաթողիկոսի և Իր շքախմբի, այցելեց Վրաստանի Հանրապետության Մինիստրների Սովետի նախագահ Նորին Գերազանցություն Գ. Ջավախիշվիլուն: Նորին Սրբության և մեծարգո Վարչապետի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց՝ կես ժամ տևողությամբ:

Ի պատիվ Նորին Ս. Օծության, Վրաց Պատրիարքարանի դահլիճում տրվեց մեծ ճաշկերույթ, որին ներկա էին պետական իշխանության ներկայացուցիչներ և վրացի և Թբիլիսիի հայ մտավորականներ:

Փետրվարի 22-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբութիւն Եփրեմ Բ-ի սիրալիր, հրավերով, փետրվարի 15-ին մեկնում է դեպի Թբիլիսի։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, բարեշնորհ Կարապետ և Պետրոս սարկավագները և դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Վեհափառին ճանապարհելու համար կայարան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը։

Նորին Ս. Օծության ճանապարհում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Փետրվարի 16-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանում է Թբիլիսի։ Կայարանում հավաքված բազմահոծ հայությունը՝ թեմական խորհրդի անդամները, քահանաները, մտավորականները, գլխավորությամբ Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, ջերմորեն ողջունում է Նորին Ս. Օծությանը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում են Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Բ-ը, Ուրբնիսիի միտրոպոլիտ Դավիթը, Թբիլիսիում Այեքսանդր Նևսկու անվան ռուսական եկեղեցու ներկայացուցիչ Զինովի եպիսկոպոսը։

Նորին Ս. Օծությանը դիմավորում են նաև Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր Դ. Ա. Շալուտաշվիլին և Վրաց Ուղղափառ Եկեղեցու գործերի լիազոր Մ. Վ. Մեքվարիշվիլին։

Սրտառուչ էին երկու եկեղեցիների հոգևոր Պետերի ողջագուրումը և ողջույնի խոսքերի փոխանակումները։ Վրաց Կաթողիկոսը Իր ողջույնի խոսքի մեջ ասում է.

«Սիրով ողջունում եմ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Վազգեն Ա-ի գալուստը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի։ Մեր սիրտը լցված է անհուն բերկրանքով և ցնծությամբ։ Վրաց հավատացյալների անունից ողջունում ենք Ձեր բարի գալուստը»։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքի մեջ ասում է.

«Ուրախությամբ և գոհունակությամբ ոտք կդնենք մեր եղբայրական Խորհրդային Վրաստանի հողին վրա։ Այսօրվան պարզ երկնքի տակ լավել ես կջերմացնե Մեր սիրտն ու հոգին։ Մենք ուրախ կլինենք Մեզ նաև Ձեր կողմեն ցուցաբերված այսքան խանդավառ և ջերմ վերաբերմունքի համար։

Կեցցե՛ն Վրաց և Հայ Եկեղեցիների եղբայրությունը և երկու հարևան ժողովուրդների անմոռանալի բարեկամությունը»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Ինտուրիստ» հյուրանոցը։ Փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը այցելում է Թբիլիսիի վրաց Մայր Տաճարը՝ Ս. Սիոն։ Տաճարը լիքն է վրացի և հայ հավատացյալների բազմությամբ։ Կատարվում է եկեղեցական մասնավոր պաշտամունք, որի ընթացքում Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը հանդես է դալիս բարի գալստյան գեղեցիկ ճառով։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում ջերմ, եղբայրական ընդունելության համար։ Ապա երկու Հոգևոր Պետերը եկեղեցական թափորով և հավատացյալ հայ և վրացի ժողովրդի ջերմ հարգանքի արտահայտություններին մեջ, հետիոտն

առաջնորդվում են Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին։ Երկու Հովվապետները Մայր եկեղեցի են առաջնորդվում «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով, կատարվում է Հայրապետական մաղթանք։

Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, հանուն Վրաստանի հայոց թեմի, ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալուստը Թբիլիսի, միաժամանակ թարգմանը հանդիսանալով Վրաստանի ողջ հայության սրտագին զգացումների ու խանդավառության։ Սրբազանը ջերմորեն ողջունում է նաև Նորին Սրբություն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի ներկայությունը։

ու խանդավառ ընդունելության համար, որ կատարվեցավ այսօր Ս. Սիոն վրաց Մայր եկեղեցիին և այստեղ՝ հայոց Ս. Գևորգ եկեղեցիին մեջ։ Եվ կարծեմ բնությունն ալ նույն ուրախությամբ կդիմավորե Մեզ։ Վրաստանի պայծառ երկինքը և արևը ոչ միայն ուրախացուցին, այլև առավել ջերմության շունչ մը բաշխեցին Մեզի։ Սակայն ավելի արևոտ ու պայծառ էր Մեզ դիմավորող Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսի սիրտը։

Մենք երկու քույր եկեղեցիներ ենք, պատմության ճնշագույն շրջաններեն սկսյալ։ Եվ այսօր ալ ճանախ մենք կոդ-կոդի ենք։ Եվ Մենք կմտածենք, որ մեր միացյալ աշխատանքով, մեր ճիգերով, կկարողանանք ավելի ոգեղությամբ կատարել մեր խղճի

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՎՐԱՑ Ս. ՍԻՈՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետը, օրհնելով և ողջունելով ներկաներին, Իր պատասխան խոսքի մեջ ասում է.

«Սիրելի՝ բարեպաշտ ժողովուրդ.

Մենք անսահման ուրախությամբ ընդունեցինք Մեր հոգևոր եղբոր՝ Եփրեմ Բ Կաթողիկոսի հրավերը Թբիլիսի գալու, այցելելու Իրեն և Իր եկեղեցիին և այս առիթով ճանդիպելու համար նաև Վրաստանի մեջ ապրող Մեր հայ զավակներուն։ Մենք շափազանց գոհ ենք և երջանիկ այն արտակարգ, ջերմ պարտքը՝ հոգևոր լուսավորություն բաշխել մեր հավատացյալներուն և աղոթել ու գործել «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»։

Հայրական ողջո՞ւն և հայրապետական օրհնությո՞ւն ձեզի, սիրելի՝ հավատացյալներ, որ դիմավորեցիք Մեզի թե՝ կայարանին մեջ, թե՝ այստեղ։ Ջերմորեն մխիթարված, Մենք զգացինք և տեսանք ձեր սրտի և հոգիի անսահման ուրախությունն ու սերը հանդեպ Ս. Էջմիածնի և անոր Գանակալին։ Մեր օրհնությունը բոլորիդ»։

Փետրվարի 17-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և Վրաց Կաթողիկոսը Իր միաբանությամբ ուխտի են գնում Վրաց Եկեղեցու դարավոր կենտրոն Մցխեթայի և Ջվարի Սակրատի հին վանքերը, որոնք գտնվում են Թբիլիսիից 22 կմ. հեռու։

Երեկոյան ժամը 5-ին Վրաց Պատրիարքարանում տրվում է պաշտոնական ճաշասեղան Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվին, ուր փոխանակվում են բաժակաճառեր։

Ընդունելությունից հետո ժամը 6-ին, երկու Հայրապետները Ս. Սիոնի Տաճարում Հայրապետական սուրբ պատարագին ներկա է Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը Իր շքախմբով։

Հայր մերթ-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը։

«Ցանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Ամեն։

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ.

Ցնծացեք և ուրախ եղեք և ողջույն տուք միմյանց, վասնզի անա Տիրոջ զորությամբ ձեր մոտ կգտնվի Ամենայն Հայոց Հայրապետը, որ կուգա Միածնաէջ Ս. Տաճարեն, Արարատյան աշխարհեն, այս բարի

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՄՑԽԵԹԱՅԻ ՎԱՆՔՈՒՄ

ներկա են լինում շաբաթ երեկոյան, կիրակամտի ժամերգության։

Փետրվարի 18-ին, Կիրակի, Վեհափառ Հայրապետը հանգիսավոր սուրբ պատարագ է մատուցում հայոց Ս. Գևորգ եկեղեցում, խուռն բազմության ներկայությամբ։ Սուրբ պատարագին սպասարկում են Սահակ և Կոմիտաս սրբազանները, քահանայից դասը և սարկավագները։

և Աստվածամոր պահպանության տակ գտնվող գեղեցիկ ու արևոտ Վրաստանին ողջույն և օրհնություն բերելու ամենայն հայոց Մայր Աթոռեն։ Հայոց Հայրապետը եկած է նաև ողջունելու Նորին Սրբություն Եփրեմ Բ Կաթողիկոսը, Վրաց եկեղեցին և վրաց բարեպաշտ ժողովուրդը։

Սիրելի՛ հավատացյալներ, թե՛ Մեզ և թե՛ ձեզ համար նշմարիտ ցնծության և ուրախության օր է այսօր, վասնզի այս պատմական

եկեղեցի կամարներուն տակ, անա Նորին Սրբություն Եփեմ Բ Կաթողիկոս Իր շքախմբով եկած է Ս. Սիոն Տաճարին, որպեսզի միատեղ աղոթեն այստեղ, ինչպես Մենք բախտ ունեցանք երեկ Ս. Սիոն Տաճարին մեջ միասին աղոթելու:

Մենք կճավատանք, որ երեկվան ու այսօրվան մեր սրտաբուխ աղոթքները միատեղ բարձրացան դեպի երկինք:

Սիրելի՛ ժողովուրդ, Եփրեմ Կաթողիկոս, Մեր եղբայրը, և Մենք, ոչ միայն քրիստոնեական ըմբռնումով ի Քրիստոս եղբայրներ ենք, այլ նաև դարավոր բարեկամության պատմությունն ունեցող երկու երկիրներու ներկայացուցիչներ: Եվ Մենք կխորհինք, թե փոխանակած Մեր այցելություններով կնորոգենք Մեր ուխտը, առավել եռանդով ու լավատեսությամբ, գործելու ճոգուն Մեր ժողովուրդներու և Մեր եկեղեցիներու: Սակայն կա նաև ավելին. Մենք երկուքս ալ ջերմ պաշտպաններ ենք խաղաղության դատին:

Հանախ Մենք առիթ կունենանք մասնակցելու խաղաղության պաշտպանության համար գումարված համաժողովներուն, Մոսկվա կամ այլուր, ինչպես անցյալ տարի Պրագայի մեջ, ուր 56 երկիրներու ներկայացուցիչներ, հավաքված Եվրոպայեն, Ասիայեն, Ամերիկայեն, Ափրիկեեն, իրենց վճռական խոսքը ըսին հանուն խաղաղության:

Սիրելի՛ ժողովուրդ, Մենք կուզեինք նաև ձեզի բերել ողջույնը արտասահմանի մեջ գտնվող ավելի քան մեկ և կես միլիոն հայության: Ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդը՝ նույն հայ ժողովուրդի անբաժան մասն է, ինչպես այստեղ, և մեկ Հայաստանի մեջ: Անոնք ունին իրենց եկեղեցիները, ուր կաղոթեն հայկական ճոգիով և հայկական երգեցողով: Մենք վերջին հինգ տարվան մեջ նորեն առիթներ ունեցանք այցելելու բազմաթիվ երկիրներ՝ Լիբանան, Եգիպտոս, Եվրոպա, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և դեռ վերջերս, տխուր առիթով մը, նաև Ստամբուլ:

Այն բոլոր երկիրներուն մեջ, ուր եղանք, Մենք տեսանք Մեր հարազատ զավակները, տեսանք հայկական եկեղեցիները, հայկական ազգային վարժարանները: Չկա հայ ժողովուրդ, չկա հայ համայնք առանց եկեղեցիի և դպրոցի: Բոլոր հայերը համախմբված կապրին մեր սուրբ տաճարներու շուրջ և կապրին, ճոգիով կապված Մայր Հայաստանին, կպաշտպանեն նաև խաղաղության դատը: Անա այս գիտակցությամբ կապրի մեր ժողովուրդ ամբողջ տեղ: Մենք երբ եղանք արտասահման, պատմեցինք մեր Ս. Էջմիածնի և վերածնած մեր Հայրենիքի մասին, պատմեցինք նաև Վրաստանի հայերու մասին. ուր ձեր բարեխնամ վրացական կառավարության ճովանիին ներքև պայծառ կպահեք ձեր եկեղեցիները, ձեր դպրոցները և հայ մամուլը: Անոնք երբ կլսեին Վրաստանի հայության մասին լավ լուրեր, շատ կուրախանային:

Մենք անցյալ տարի եղանք Ստամբուլ, ուր կապրին հարյուր հազար հայեր, ունին եկեղեցիներ, դպրոցներ, թերթեր, բարեսիրական և կրթական հաստատություններ, բոլորը ճոգիով սրտով կապված Ս. Էջմիածնին:

Մեր այցելությունը այստեղ ուրիշ նպատակ չունի, եթե ոչ Մեր օրհնությունները բաշխել ձեզի բոլորիդ և մաղթել, որ Աստուծո օրհնությունը, իբրև ճովանի, միշտ ձեր վրա, ձեր զավակներուն, ձեր բոնիկներուն, հարազատներուն վրա մնա և պահպանե բոլորդ երջանիկ և խաղաղ, ճեռու ամեն տեսակի վտանգություններե: Աստված բոլոր ձեր գործերուն հաջողություն պարգևե, թող հայոց սուրբ հավատքը միշտ պայծառ մնա այս գեղեցիկ երկրին մեջ և դուք, վրացի բարեկամ ժողովուրդի ճետ, ապրիք քրիստոնեաբար և եղբայրական սիրով: Թող Էջմիածնի օրհնությունը և Հայրենիքի սերը միշտ վառ մնան ձեր մեջ, այժմ և միշտ և հավիտյանս: Ամեն:

Նույն օրը երեկոյան, Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ռեստորանում հյուրանոցի մեծ դահլիճում, կազմակերպում է ճոխ ճաշասեղան: Ընդունելության հրավիրվել էին նաև Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը, Ուրբնիսիի միտրոպոլիտ Դավիթը, Զինովի եպիսկոպոսը, Իլիա վարդապետ Շիոշաշվիլին և տարբեր դավանանքների ներկայացուցիչներ:

Հյուրերի թվում էին Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական գաղտամունքների գործերի խորհրդի լիազոր Դ. Ա. Շալուտաշվիլին, Վրաց Ուղղափառ Եկեղեցու գործերի լիազոր Մ. Վ. Մեքվարիշվիլին, ակադեմիկոս Շելվա Նուցուբիձեն, ակադեմիկոս Շելվա Ամիրանաշվիլին, ակադեմիկոս Գեորգի Լեոնիձեն, գրող Լեոն Գաթուսան, պրոֆ. Ալեքսանդր Ծերեթելին, արոֆ. Իոսե Մինցաձեն, բժշկական գիտությունների դոկտոր Ս. Ցինցաձեն, Թբիլիսիի հայ մտավորականության, արվեստի, գիտության ներկայացուցիչներ՝ պրոֆ.-դոկտ. Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը, ճարտարապետներ Մաղմանյանցը, Տեր-Ստեփանյանը, գրող Թահարեն, դրամատուրգ Ս. Ավչյանը, դերասաններ, նկարիչներ:

Սեղանը օրհնում է Հայոց Հայրապետը և այն վերածվում է հայ և վրացի ժողովուրդների եղբայրական անքակտելի միասնական վառ հանդեսի: Թաժակներ են առաջարկվում

...այ և Վրաց Եկեղեցիների, երկու հայրապետների, մշակույթների, արվեստների, գիտության ծաղկման և նրանց արժանավոր ներկայացուցիչների կենաց։

Ճաշկիրությունը անցնում է շատ ջերմ և բարեկամական մթնոլորտում։

Փետրվարի 19-ին, երկուշաբթի, ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պր. Ջավախիշվիլուն և ընդունվում ջերմորեն։ Ամենայն Հայոց Հայրապետի և պր. նախագահի միջև տեղի է ունենում զրույց։ Ամենայն Հայոց Հովվապետին ուղեկցում էին Ամահակ, Կոմիտաս սրբազանները և Վահան վարդապետը։

Ընդունելությունը անցավ ջերմ և սիրալիր մթնոլորտում։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և պր. նախագահը ճառեր փոխանակեցին։

Փետրվարի 20-ին, երեքշաբթի, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետն ու Վրաց Կաթողիկոսը իրենց շքախմբով այցելում են Ռուստավի նորակառույց քաղաքը, որը գտնվում է Թբիլիսիից 20 կմ. հեռու։ Այստեղ նրանք դիտում են Ռուստավիի անվան մետաղաձուլական հայտնի գործարանը։

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը շքախմբով բարեհաճում է իր ներկայությամբ պատվել Վրաստանի հայոց թեմի թեմական խորհրդի անդամ պր. Դիլաքյանի բնակարանը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹՐԻԼԻՍԻ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

Ընդունելության ներկա էին Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը։ Ուրբնիսիի միտրոպոլիտ Դավիթը, Իլյա վարդապետ Շիոշաշվիլին։

Զրույցին ներկա էին նաև Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ տիկին Զ. Ա. Կվաճաձեն, Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր Դ. Ա. Շալուտաշվիլին և Վրաց Ուղղափառ Եկեղեցու գործերի լիազոր Մ. Վ. Մեքվաբիշվիլին։

Վեհափառ Հայրապետը այցելում է Թբիլիսիի հայկական պանթեոնը Հավլաբարում, ուր ամփոփված են մոտ երեսուն հայտնի հայ մտավորականների աճյունները։ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է բացօթյա հոգեհանգստյան արարողություն։ Վեհափառ Հայրապետը արտասանում է «Հոգացո»-ն։

Հայկական պանթեոնում են թաղված Բաֆֆին, Հովհաննես Թումանյանը, Գաբրիել Սունդուկյանը, Հակոբ Հակոբյանը, Մուրացանը, Նար-Դոսը, Ղազարոս Աղայանը, Ալեք-

սանդր Մատուրյանը, Գրիգոր Արծրունին, Մկրտիչ Հովնաթանյանը (Նազաշ), Պերճ Պոռշյանը, աշուղ Ջիվանին, Մակար Եկմալյանը, Մերենցը, Ա. Վրույրը (դերասան), Օլգա Մայսուրյանը (դերասանուհի), Ամիրան Մանդինյանը (դերասան), Վանո Խոջաբեկյանը (նկարիչ), Հ. Թումանիշվիլին, Գ. Թումանովը, Հ. Ազաթարը (մանկական գրող), Շամշինյանը (նկարիչ), Ս. Օգանիշվիլին, աշուղ Հազիրին, Գևորգ Հախվերդյանը, Գենադի Ղարղանյանը (երաժշտագետ), Ալ. Երիցյանը (խմբագիր), Ստ. Ներսիսյանը, (նկարիչ), Գ. Փիրումյանը (դերասան), Լազոն (հեղափոխական)։

Մենք կուզանք Ամենայն Սրբոց Սրբություն Ս. Էջմիածնեն և կբերենք ձեզի ողջույն և օրհնություն աստվածային։ Ողջույն և օրհնություն Միածնաէջ դարավոր Ս. Տաճարեն Թբիլիսիի հայոց այս էջմիածնեցվոց եկեղեցիին, որ կկրե Մայր Աթոռի անունը։ Պատահական երևույթ չէ, անշուշտ, այլ պատմական մեծ վկայությունը այն իրողության, թե մեր ժողովուրդի զավակները իրենց սրտերուն մոտ պահած են մեր սրբությունները, ինչպիսին է Ս. Էջմիածինը. և անոր անվամբ կոչած են իրենց եկեղեցին։ Դուք ձեր սրտերուն մեջ ամուր կպահեք մեր նախնյաց սուրբ հավատքը։ Այսուհետև ալ պիտի պահեք,

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԷՋՄԱԾՆԵՑՎՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հետմիջօրեին, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Հավլաբարի հայոց Ս. Էջմիածնեցվոց եկեղեցին։

Մոված ավալ ժողովուրդ էր հավաքվել եկեղեցին և շրջակայքը, ողջունելու Վեհափառ Հայրապետին։ Եկեղեցու ավետարան զանգերի հնչյունների և ժողովրդի խանդավառ, փոթորկալից ծափերի տարափի տակ, ժամանում է Նորին Ս. Օծություն։ Վեհափառ Հայրապետը «Շրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի։ Կատարվում է Հայրապետական մաղթանք։

Ու խոսում է Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ հայ ժողովուրդ։

պահպանեք մեր Ս. Լուսավորչի հավատքը, աչքի լույսի պես գուրգուրաք մեր մայրենի քաղցր լեզվին և մշակույթի արժեքներուն վրա։ Եվ դուք, այս սուրբ հավատքը այստեղ, վրացական եղբայրական հողի վրա ազատորեն կարող եք պահել, վասնզի եղբայրական վրաց ժողովուրդը և անոր բարեխնամ կառավարությունը բարյացակամ վերաբերմունք ունին ձեզ ճանդեպ, որուն համար Մենք երախտապարտ ենք։ Մենք, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, չափազանց հուզված ենք, Մեր ուրախությունը անսահման է, երբ կտեսնենք, որ քեզ, որպես լավ հայեր, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցնծությամբ

գիմավորեմ: Ուրախ եմ, որ դուք կուգեք տեսնել Հայոց Հայրապետը և ձեր սրտերուն մեջ ընդունիլ օրհնությունները մեր հավատքի կեդրոնին:

Այո՛, Ս. Էջմիածինը կենդրոնն է հայոց հավատքին: Երկար դարեր անցած են այն օրեն, երբ հիմնվեցավ ան, աստվածային նախանշանությամբ, Ս. Լուսավորչի մեծ տեսիլքով: Հիսուս Քրիստոս իջավ լուսեղեն կերպարանքով և ցույց տվավ այն տեղը, ուր պիտի կառուցվեր հայկական առաջին Տաճարը: Այդ իրոք, Ս. Գրիգոր և Տրդատ թագավոր աստվածային պատգամը իրականության վերածեցին և Վաղարշապատի մեջ, սուրբ-գրական Արարատի փեշերուն կառուցին Ս. Էջմիածինը: Այդ պատմական հին ու փառավոր Տաճարը գոյություն ունի ավելի քան 1600 տարի: Այդ երկար ժամանակի ընթացքին, հայ ժողովուրդը ունեցավ և երջանիկ օրեր, փառքի օրեր, բայց նաև սուգի ու լացի օրեր: Դուք գիտեք, որ մեր պատմությունը լեցուն է զմբախտ էջերով: Ճիշտ է, որ մեր պատմությունը, հայոց պատմությունը, պատմությունն է Հայ Ազգի նահատակության: Բազմաթիվ անգամներ քարուքանդ եղավ նաև Ս. Էջմիածինը, սակայն հայ ժողովուրդը նորեն հավաքվեցավ մեծ Տաճարի շուրջ և վերաշինեց զայն: Անհայաստան այսօր ալ կանգուն է ան, փա՛ռք Տիրոջ: Վերջին քանի մը տասնամյակներու ընթացքին մեր երկրին մեջ, ինչպես վաղ աշխարհին մեջ, տիրող խաղաղ, ապահով պայմաններու շնորհիվ, հայ ժողովուրդը կրցավ հավաքել իր ուժերը և վերաշինել իր քանդված օջախները և աղոթքի տուները: Այդ վերածնունդի հանապարհին վրա, մենք ալ վերաշինած ու պայծառացուցած ենք ամենայն հայոց հավատքի կեդրոն Ս. Էջմիածինը, որ կշողա լույսերու մեջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹՈՒԼՈՒՄԻ ՀԱՅՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ ՆԵՂՆՑՈՒ ԱՌԱՋ

Մենք, Ս. Էջմիածնի պատմական քարերու վրա կանգնած, տիվ և գիշեր կաղոթենք առ Աստված, որպեսզի Տիրոջ ողորմությունը միշտ պահապան ըլլա մեր Ազգին վրա, որպեսզի հայերը պահեն իրենց սուրբ հավատքը և շմոռնան իրենց Հայրենի Հողը և Ս. Էջմիածինը: Բոլոր հայերու Հայրենիքը Հայաստանն է, իսկ հոգևոր կեդրոնը՝ Էջմիածինը: Մենք կաղոթենք առ Աստված, որ ծաղկյալ ու խաղաղ ապրին Էջմիածինն ու մեր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, որ ամեն օր քայլ առ քայլ կհառաջդիմե ու կրարգավանի:

Աղոթենք, որ Տերը բախտավոր օր մը բոլոր ի սփյուռս աշխարհի ցրված հայերը հավաքեն հայրենի կառուցին տակ, որպեսզի միատեղ ծաղկեցնեն իրենց Մայր Եկեղեցին:

Անա քանի մը օրով Մենք այցելեցինք Թիֆլիս, նյուրը եղանք եփրեմ Բ Կաթողիկոսին, Մեր սիրեցյալ եղբորը: Վաղը կվերադառնանք էջմիածին լավագույն հիշատակներ տանելով Թիֆլիսեն, վրաց եղբայրական ժողովուրդեն և նորին Սրբություն Հայրապետեն: Բայց մանավանդ անմոռանալի հիշատակներ կտանինք ձեզմե, դուք Մեր սիրելի, Մեր հարազատ զավակներ: Այսպես է, որ Մենք կվերադառնանք առավել զորավոր, առավել լավատես: Մեր զորությունը դուք եք: Դուք օրհան մոտ ըլլաք Մեզի ու մեկ սիրտ մեկ հոգի, Մենք այնչափ ուրախ կըլլանք և երջանիկ:

Թիֆլիսեն Մենք էջմիածին կվերադառնանք նաև լավագույն հիշատակներով վրաց պետական իշխանություններեն: Առաջին օրեն իսկ Վրաստանի կառավարության ներկայացուցիչները Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդեպ ունեցան շատ վերաբերմունք: Երեկ Մեր ողջույնն ու հարգանքը անձամբ մատուցինք Նորին Գերազանցություն Վարչապետ Ջավախաշվիլիին: Մեծարգո նախագահը Մեզ ընդունեց շատ շատ սիրալիրությամբ և հարազատ եղբոր մը պես խոսեցավ հայ ժողովուրդի և Հայաստանի մասին: Մենք խղճի պարտք կհամարենք փառաբանել մեր երկու դարավոր ժողովուրդներու բարեկամությունը, վասնզի մեր երկու դրացի ժողովուրդներու գերագույն շահերը անբաժանելի են:

Կեցցե՛ վրաց ժողովուրդը: Թող պայծառ մնա մեր սիրելի Վրաստանը: Թող Տերը ձեզի պարգևե երջանիկ, խաղաղ օրեր, գործոց հաջողություն:

Այս ուրախ և պատմական առիթով կուզենք ձեր եկեղեցիին հիշատակ թողուլ էջմիածնի մեջ պատրաստված հայկական ոճով սուրբ օկիհ մը:

Սիրելի՛ ժողովուրդ, մնացե՛ք բարյավ, մնացե՛ք խաղաղությամբ, և եղե՛ք օրհնյալ այժմ և միշտ և հավիտյան: Ամեն»:

Երեկոյան ժամը 8-ին, Վրաց Պատրիարքարանում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ողջերթի ճաշկերույթ: Ներկա էին վրացական գիտության, արվեստի և գրականության փայլուն ներկայացուցիչներ՝ ակադեմիկոս Շ. Նուցուբիձեն, ակադեմիկոս Ամիրաշվիլին, ակադեմիկոս պոետ Լեոնիձեն, պրոֆ-դոկտ. Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը, պրոֆ. Ս. Ցինցաձեն (պատմագետ), բժշկական գիտությունների դոկտոր Գ. Ցինցաձեն, գրող Լ. Գուրամաշվիլին, դոկտ. Գ. Գուլաշվիլին, փաստաբան Ի. Ջեյշվիլին և ուրիշներ:

Սեղանը բացվում է Վրացական եկեղեցու աղոթքով: Այնուհետև շերմ, սրտագին խոսքով արտահայտվում են ներկաներից շատերը, բարի ճանապարհ մաղթելով նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Փետրվարի 21-ին, շաբաթշաբթի, Վեհափառ Հայրապետը հյուրանոցում բարեհաճում է ընդունել Վրաստանի հայոց թեմի քահանաներին ու թեմական խորհրդի անդամներին և խոսել եկեղեցական մի շարք հարցերի շուրջ:

Երեկոյան ժամը 6-ն է, մեկնումի պահը, Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար հյուրանոց էին եկել Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը, Դավիթ միտրոպոլիտը և այլ վրացի և ռուս հոգևորականներ, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը հայ քահանա հայրերի հետ միասին, կառավարության ներկայացուցիչներ Շալուտաշվիլին ու Մեքվարիշվիլին, պրոֆ. Մելիքսեթ-Բեկը և այլ անձինք:

Ժամը 6,15-ին ինքնաշարժների շարասյունը ուղղվում է դեպի քաղաքային կայարանը: Հրաժեշտի ողջագուրումներից և ճառերից հետո, ժամը 7-ին գնացքը հուշիկ-հուշիկ շարժվում է:

Փետրվարի 22-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 7.45-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Երևանի քաղաքային կայարան:

Նորին Ս. Օծության դիմավորում են Մայր Աթոռի միաբանները, վանքի պաշտոնեությունը և քահանայից դասը:

Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Աթոռ Իջման Ս. Սեղանի առաջ աղոթելուց հետո բարձրանում է Վեհերան, ուր ողջունելով ներկաներին, խանդավառությամբ խոսում է Թբիլիսի կատարած իր այցելության տպավորությունների և հուշերի վրա:

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՆԼԻՏՅԱՆ



ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ ՊԱՂՅԱՆ

«ԼՈՅՍ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ»

(Քարոզ խոսված Մայր Տաճարում, Տեառնընդառաջի օրը)

«Այլ մեծագոյն աւետիս է այսօր ժողովրդոցն ճամայնից»:

Այսպես է ավետում հոգեզգոն տաղերգուն, հին և նոր աշխարհի համայն մարդկության՝ Փրկչի քառասնօրյա Տաճար գալստյան մեծ տոնի խորհուրդը։ Մեր Փրկչի հրաշափառ ծննդից 40 օր հետո, եկեղեցին կատարում է նրա քառասնօրյա Տաճար գալու տոնը, որը ծանոթ է Տյառնընդառաջ անունով։

«Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն» (Ղուկ. Բ 22)։

Այսպիսով կատարվում էին Քրիստոսի Տաճար ընծայման և Մարիամի սրբության օրինական պայմանները, ինչպես պատվիրում էր Մովսիսական օրենքը ելից գրքի ԺԲ գլխում։

Ամեն կին, որի անդրանիկ զավակը արու էր ծնվում, «սուրբ Տեառն կոչեսցի»։ Ըստ Մովսիսական օրենքի, ամեն մի ծնող պարտավոր էր իր անդրանիկ արու զավկի ծննդյան 8-րդ օրը թլփատել նրան, իսկ ծննդյան 40-րդ օրը տանել նրան Տաճար՝ ընծայելու Աստուծո, զոհաբերելով մի զույգ աղավնի կամ տատրակ։ «Իմ են ամենայն անդրանիկք Իսրայելացւոց, փոխանակ զի ճարի ես զամենայն անդրանիկսն եգիպտացւոց»։

Մարիամ և Հովսեփ, իբրև իրենց կրոնի և օրինաց նախանձախնդիր բարեպաշտ մարդիկ, Հիսուս Մանուկին բերեցին Տաճար։

Տաճարում էր ապրում Սիմեոն ծերունին, որն իր աղոթքների միջոցով խոստում էր ստացել «ոչ տեսանել զմահ մինչև տեսցէ զՈծեալ Տեառն»։ Սիմեոնի բաղձանքը կատարվում է։ Նա աստվածային ներշնչումով ճանաչում է Աստվածորդուն, Իսրայելի խոստացյալ Մեսիային և իր գիրկը վերցնելով նրան, գոհանում է Աստծուց. «Արդ, արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»։

Սիմեոնի արտասանած այս մարգարեական օրհնության մեջ, որը կարդացվում է նաև մեր «Լցաք»-ի և «Եկեսցէ»-ի ժամերգությանց մեջ, Սիմեոնը հայտնում է, որ Հիսուս Մանուկն է խոստացյալ Փրկիչը, որը ոչ միայն Իսրայելի ժողովրդի փառավորությունն է, այլև լույս է բոլոր հեթանոս ժողովուրդներին։ «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և փառս ժողովրդեան քում Իսրայելի», շարունակում է Ավետարանը։

Բայց ավա՜ղ, Իսրայելը չընդունեց և չդնահատեց իրեն համար պատրաստված աստվածային այդ փրկությունը։

Այո՛, աշխարհի լույսը ծագեց Հրեաստանում, սակայն Իսրայելը կույր էր հոգեպես և նա չտեսավ աստվածային այդ լույսը։

Այդ լույսը, հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, ծագեց հեթանոսների համար, որպեսզի նրանք աստվածածագ այդ լույսով լուսավորված, դուրս գան խավարի միջից։ Քրիստոս իբրև լույս ծագեց և լուսավորեց աշխարհը։ Փրկչի խաչելությունից և հրաշափառ հարությունից հետո, առաքյալները, լցված այդ լույսով, ցրվեցին աշխարհով մեկ, քարոզելու և բաշխելու Փրկչի հարության կենարար լույսը։ «Եւ ժողովուրդ, որ նստէր ի խաւարի, ետես զլոյս մեծ»,—ասում է Եսայի մարգարեն։

Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ ձգտել է լուսավորության, ձգտել է լույսի, ուրախությամբ ընդունեց Քրիստոսի այդ լույսը Թադեոս և Բարթողիմեոս սրբազան առաքյալների անմիջական քարոզությամբ, որոնք լուսավորեցին Հայաստան աշխարհը, հալածելով հեթանոսական խավարը։

Առաքյալների Հայաստան բերած այդ լույսը առավել պայծառացավ ու բոցավառվեց, առաքելական քարոզությունից շուրջ երկու և կես դար հետո, 301 թվականին, ըստ Գրիգոր Լուսավորիչ Պարթև հայրապետի տեսիլքի։

«Էջ Միածինն ի Հոր է և լոյս փառաց ընդ նմա»։

Բաղմերախտ հայրապետը երկնային այդ լույսի համար Տուն է շինում, Տաճար է կառուցում, որպեսզի այդ լույսը միշտ վառ մնա հայ հոգիների մեջ, հայ հողի վրա։

«Եկայք շինեսցուք Սուրբ զխորանն լուսոյ, Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

Ահա Լուսավորչի կանգնած լուսո խորանը՝ Ս. Էջմիածինը, հայ հավատի լույսի ակնաղբյուրը, մեր անկեզ մորենին, քրիստոսավառ կանթեղն անմար, որի լույսով արդասավորվեց հայ ժողովրդի ստեղծագործ միտքը, ստեղծվեցին մեր սքանչելի գիրն ու գրականությունը, զարգացան մեր մեծասքանչ լեզուն և մշակույթը։

Քրիստոնյա հավատացյալի կյանքը լուսավորող լուսարձակն է Քրիստոս, որը աշխարհ եկավ լուսավորելու տգիտության, խավարի և մեղքի մեջ խարխափողներին, հայտարարելու ազգերի եղբայրության և Աստուծո հայրության վսեմ գաղափարները։

Այսօրվա ջահավառությունը, լուսավորությունը, հանդիսությունները արժեք չունեն, եթե խավար է հոգին։ Պետք է վառ պահել հոգու լույսը։

Այսօր ավելի քան երբեք աշխարհը կարիքն ունի լույսի և հույսի, ճշմարտության և արիության։

Մարդկությունը իր ճանապարհը գտնելու համար պետք է լսի Սիմեոն ծերունու պատգամը. «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց»։

Լույսի և հույսի տոն է Տյանընդառաջը կամ Տերնտեսը, ինչպես այն կոչում է մեր ժողովուրդը։

Մեր սրբազան շարականագիրները, իրենց հորինած հոգեզմայլ շարականների մեջ, որոնք երգվում են Տյառնընդառաջի այսորվա տոնին, գերազանցապես լույսն է, որ փառաբանում են, և պատահական չէ, որ մեր եկեղեցիները, այսորվա տոնին, պայծառորեն ջահազարդվում և լուսավորվում են Քրիստոսի լույսով, Ավետարանի ճշմարտության լույսով։

Սիրելի՛ հավատացյալներ, Փրկչի քառասնօրյա Տաճար գալստյան այս մեծ տոնին, մեր աղոթքները վերառաքենք առ Աստված ու հայցենք, որ Նա աշխարհին հարատև խաղաղություն պարգևի, ժողովուրդներին՝ սեր և համագործակցություն, հուրախություն համայն մարդկության։

Թո՛ղ Աստված ամուր և անսասան պահի մեր լուսո խորան Ս. Էջմիածինը, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցվո և ի մխիթարություն համայն հայ ժողովրդի։ Թո՛ղ աստվածային կենարար լույսը լուսավորի միշտ ձեր բոլորի օջախները և հոգիները, որպեսզի, լուսավորված այդ լույսով, քայլենք անսայթաք աստվածուսույց ճանապարհներով դեպի մեր ժողովրդի լուսաշող և պայծառ ապագան։ Մենք էլ շարականագրի գեղեցիկ խոսքերով ասենք.

«Հաւատացեալս ընդ ծերունւոյն Սիմէոնի գՔան ճամագոյ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն օրհնաբանեսցուք, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն»։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, «Տեառն-ընդառաջ։ Օրվա մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը, բնարան ունենալով «Լույս ի յայտնութիւն հեթանոսաց»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստը, ուր քննվեցին Ստամբուլի Ղալաթիա թաղի հայոց նոր կառուցվելիր եկեղեցու նախագիծը, ինչպես նաև Մայր Աթոռի հին պարիսպների քանդման և Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու ներքին ձևավորման հարցերը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ երեկոյան, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ Ճեմարանի հերթական գրական-գեղարվեստական երեկոն, ուր Գ լսարանի ուսանող տիրացուներ Ժիրայր Կոնսուլյանը և Կարպիս Սերայդարյանը ընթերցեցին իրենց գրած քարոզները։

Երեկոյին ներկա էին Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռի միաբանները։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսյանը, բնարան ունենալով «Ով կենցաղոյս հանապազ դիս ալեկոծեմ, մրրկեալ ալիք թշնամին ինձ յորուցանէ, նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն» ապաշխարության շարականը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 2-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, թեմական գործով Մայր Աթոռ ժամանեց Ադրբեջանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բուն Բարեկենդան»։ Մայր Տաճարում փակ վարագույրի ետև պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը բնարան ունենալով «Ով է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 5-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերատեսուչ գիրաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ, միօրյա պտույտի գնա-

ցին դեպի Այդը լիճը։ Զբոսապտույտին մասնակցում էր նաև Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 7-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում սկսվեց Մեծ պահոց հատուկ «Արևագալ»-ի հանդիսավոր առաջին ժամերգությունը։ Հոգևոր Ճեմարանի ուսանողները, ղեկավարությամբ արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանի, դաշն կերպով և շնորհալիորեն երգեցին «Արևագալ»-ի ժամերգության սրտահույզ մեղեդիները։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ ճարտարապետական հանձնաժողովի նիստը։ Ժողովում քննարկվեցին Տրդատի գռան նորոգության և հին պարիսպների վերացման հարցերը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 11-ԻՆ, «ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ», Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՏԱՆՆԵՑՆԵՐՈՎ

ՍԱՀԱԿԻ ԵՎ ՄԵՍՐՈՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1

Այս գլխով ուզում ենք կազմել, որքան կարելի է ստույգ ժամանակագրական մի ցուցակ, որի մեջ պարզվեին Սահակի և Մեսրոպի ծնունդից սկսած մինչև նրանց մահը տեղի ունեցած բոլոր գեպքերի թվականները։ Սրա համար բավական դժվար աշխատանքի պետք կա, որովհետև մեր պատմության մեջ ամենից ավելի խառնակ և անստույգ մասը ժամանակագրությունն է, մանավանդ հայ թվականի հաստատությունից առաջ։

Այստեղ հավաքում ենք նախ այն բոլոր տեղեկությունները, որ մեր մատենագիրները տալիս են հիշյալ շրջանի ժամանակագրության մասին։

Ա. Կորյունի տված թվական տեղեկությունները հետևյալներն են.

1. Դանիելյան նշանագրերի Հայաստան գալը տեղի ունեցավ Վռամշապուհի ճիճգիրորդ տարին. «Իսկ Հաթելին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլդ, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն. և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց, ի ճիճգիրորդ ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր»։

2. Դանիելյան գրերի փորձերը տևեցին երկու տարի. «Ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել... և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր» (Կորյուն, էջ 9)։

3. Երբ Դանիելյան գրերը անհաջող դտնվեցին, Մեսրոպ ճանապարհ ընկավ դեպի Միջագետք, Վռամշապուհի ճիճգիրորդ տարին. «Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի գաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ Սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի ճիճգիրորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց» (Կորյուն, էջ 9)։

4. Մեսրոպ հայերեն գրերը գտնելով, հաջողությամբ դարձավ Հայաստան «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց» (Կորյուն, էջ 11)։

5. Մեսրոպի Հունաստան գնացած ժամանակ կայսր էր Թեոդոս Բ, իսկ պատրիարքն էր Ատտիկոս. «Զիրս առաջի եդեալ գրով ցուցանէր կայսեր... յանդիման լինէր ատուածակարդ թագաւորացն և հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամատա զրանն, որում Ատտիկոս կոչէին»։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1934 թվականի XI, XII, 1955 թվականի I, II, III, IV, IX, 1956 թվականի I, II, IV—V, VIII—IX, XI—XII, 1961 թվականի մ, ԻԱ, ԻԲ և 1962 թվականի Ա և Բ համարներից։

6. Հունահայաստանից վերադարձին Վռամշապուհը վախճանված լինելով, նստած էր Արտաշես թագավորը. «Եւ ինքն բազում աշակերտօք գալր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց, և հասեալ ի նոր քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին»։

7. Աշակերտների վերադարձը, Ս. Գրքի ընտիր մի օրինակի գյուտը և հայերեն երկրորդ թարգմանությունը եղան Եփեսոսի ժողովից հետո. «Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն... և Նիկիական և Եփեսոսական կանոնօք երևելով աշխարհին Հայոց»։

8. Սահակ վախճանվեց «յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին... ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զոր ծնընդեան երանելոյն յիշէին, երկրորդ ժամու աւուրն»։

9. Մեսրոպ վախճանվեց «անդէն ի նոյն ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ... յետ սակաւ ինչ աւուրս հիւանդութեանն, երեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի»։

10. Մեսրոպի տաճարն Օշականում շինվեց «յետ երից ամաց անցելոց»։

11. Մեսրոպի կատարյալ ժամանակագրությունը հետևյալն է. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք 45, և ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամք 35, որք համարին այսպէս։ Թագաւորեալ Դիսմոնայ (Վռամ Կրման) Պարսից արքայի ամս 6, և Յազկերտի ամս 21. և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, վախճանեցաւ երանելին։ Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի, մինչև յառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն» (Կորյուն, էջ 25)։

Բ. Փարպեցին պատմում է թե՝

1. Մեսրոպի զինվորությունը Խոսրով թագաւորի ժամանակ էր. «Զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ»։

2. Իր պալատական պաշտոնը տևեց տարիներ. «և սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանացս»։

3. Իր ճգնական կյանքը տևեց «մինչև յամս հինգերորդ՝ արքային Հայոց Վռամշապհոյ՝ եղբօր Խոսրովու» (գլուխ Ժ)։

4. Վռամշապուհը Ս. Գրքի թարգմանությունից հետո ապրեց «ամս բազումս» (Վենետիկյան տպագիրները՝ «ամս քսան և մի», որ 1904 թվականի հրատարակության էջ 18-ի ծանոթության համաձայն, հետին սրբագրություն է, քերած և ավելացրած), և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգստիւ յաշխարհիս Հայոց» (գլուխ ԺԱ)։

5. Սրանից հետո մեռավ Շապուհ Գ-ը, որին հաջորդեց որդին Վռամ Կրմանը. սա Հայոց թագավոր դրավ Խոսրովին, որ նստավ միայն ութ ամիս և մեռավ։ Վռամին հաջորդեց Հազկերտը, որ Հայոց թագավոր նշանակեց իր որդի Շապուհին. բայց շուտով մեռավ Հազկերտը, և «ի նմին աւուր և զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունւոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի գրանն մարդկանէ դաւով յարքունիքն սատակեցին։ Պարսից գահը նստավ Վռամ, որ Հայոց թագավոր նշանակեց Արտաշես Գ-ին (գլուխ ԺԲ)։

6. «Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւնն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշեսի» (գլուխ ԺԴ)։

7. Սահակ վախճանվեց «կեցեալ ամս բազումս և հասեալ ի յերկար ծերութիւն... ի սկզբան ամին երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, յամսեանն Նաւասարդի։ որ որ 30 էր ամսոյն։ յերկրորդ ժամու աւուրն, որ և զոր ծննդեան սրբոյն ի ստոյգ գիտողաց և ի պատմութենէ երանելւոյ առն Կորեան՝ հաստատեալ գիտացաք լինել նոյն օր և ծննդեան Սրբոյն, ի նմին ամսեանն» (գլուխ ԺԸ)։

8. «Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան Սրբոյն Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց... յերեքտասաներորդի աւուր ամսոյն Մեհեկանի» (գլուխ ԺԹ)։

Գ. Խորենացու պատմության համաձայն՝

1. Սահակ նստավ Ասպուրակեսից հետո, հայոց Խոսրով թագավորի, պարսից Շապուհ թագավորի և հունաց Արկադիոս կայսեր ժամանակ։ Սահակ դեռ նոր էր ընտրված, երբ Մեսրոպ եկավ նշանագրերի խնդրով (գլուխ ԽԹ)։

2. Խոսրով Գ հինգ տարի թագավորելուց հետո՝ գահազուրկ եղավ Շապուհի հրամանով և նրա փոխարեն գահակալեց Վռամշապուհ (գլուխ Ե)։

3. Շապուհ 70 տարի իշխելուց հետո մեռավ. իրեն հաջորդեցին՝ որդին Արտաշիր, որ նստավ 4 տարի և հետո Վռամ Կրման՝ 10 տարի (գլուխ ԵԱ)։

4. Արկադիոս կայսրը հիվանդացավ։ Վռամի հրամանով Վռամշապուհ գնաց Միջագետք և վերադարձին բերեն տվեց Դանիելյան գրերը, որոնք փորձեցին «զամս սակաւս (գլուխ ԵԲ)։

5. Արկադիոս կայսրը մեռնելով, նրա տեղը նստավ Թեոդոս Փոքրը, որ բարեկամ մնաց Վռամշապուհի և Հազկերտի հետ,

նույն ժամանակները Մեսրոպ բերավ իր հնարած գրերը Հայաստան (գլուխ ԾԴ)։

6. Վռամշապուհ թագավորեց 21 տարի և վախճանվեց. Հազկերտ նստեցրեց խոսրով Գ-ին, որ տիրեց 1 տարի. սրան հաջորդեց Շապուհ (գլուխ ԾԵ)։

7. Հազկերտ 11 տարի թագավորեց ու մեռավ. Շապուհ նստավ միայն 4 տարի և փախավ Պարսկաստան, ուր և սպանվեց. Հայաստանը 3 տարի անիշխան մնաց. Հազկերտի տեղ նստավ Վռամ Բ (գլուխ ԾԶ)։

8. Սահակ անցավ Հունահայաստան՝ Թեոդոս կայսեր և Ատտիկոս պատրիարքի ժամանակ (գլուխ ԾԷ)։

9. Վռամ Հայոց գահը բարձրացրեց Արտաշես Գ-ին, որ թագավորեց 6 տարի (գլուխ ԾԸ)։

10. Թարգմանիչները ուղարկվեցին Պոլիս, որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոս Բիւզանդացւոց (գլուխ Կ)։

11. Եփեսոսի ժողովից հետո թարգմանիչները վերադարձան. Սահակ և Մեսրոպ ձեռնարկեցին Ս. Գրքի երկրորդ թարգմանութեան (գլուխ ԿԱ)։

12. Վռամ ջնջեց Հայոց թագավորությունը. Սահակի տեղ նստեցրեց Սուրմակին, որ առ աւելի տեսեալ քան զմի ամս. սրան հաջորդեց Բրգիշոյ՝ 3 տարի (գլուխ ԿԴ)։

13. Սրան հաջորդեց Շմվել հինգ տարի (գլուխ ԿԶ)։

14. Վռամ Բ նստավ 21 տարի. իրեն հաջորդեց Հազկերտ որդին. վախճանվեց Սահակ ակեցեալ եպիսկոպոսապետութեամբ ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ խոսրովայ Հայոց արքայի, մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղեյոյ Պարսից թագաւորի, յետս ամսոյն Նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն... եւ զկնի վեց ամսոց անցելոց, յերեքտասանն Մեհեկանի, և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ» (գլուխ ԿԷ)։

Դ. Ըստ Մովսես Կաղանկայտվացու, «Ցորում ժամանակի Թէոդոս Փոքր Յունաց էր կայսր և Վռամշապուհ Հայոց թագաւոր և Յազկերտ Պարսից արքայ և Արավաղէն Աղուանից թագաւոր, եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս...։ Եւ յերկրորդն Յազկերտի արքայի յառաջին ամի փոխի Սուրբն Սահակ յետս Նաւասարդի ամսոյ. և յետ վեց ամսոց անցելոց փոխի և երանելի վարդապետն Մեսրոպ» (Բ դիրք, գլուխ Գ)։

Ե. Փոքր Կորյուն, հետեւելով Մեծ Կորյունին և Խորենացուն, տալիս է հետեւյալ տեղեկությունները. «Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս Փոքր։ Եւ եկեալ երանելւոյն Մեսրովբայ Հայոց վարդապետի, և բերեալ գնշանագիրս մերոյ լեզուի...։ Յետ այնորիկ դէպ լինէր փոխիլ յաշխարհէս երանելւոյն Սրբոյն Սահակայ... յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից... անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելւոյն Սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն և յեր Մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց [Մեսրոպայ]»։

Զ. Անանուն «Պատմութիւն» (հրատ. «Սոփերք», հատ. Բ) տալիս է երկու տեղեկություն.

1. «Եւ հարիւր տասն ամ էր ի Սրբոյն Գրիգորէ յորժամ զտաւ գիր ազգիս մերոյ» (էջ 14)։

2. «Վախճանեցաւ Սահակ, ի Նաւասարդի յերեսունն, յաւուր հինգշաբաթոջ, որ և ծնունդ Սրբոյն ի նմին աւուր ասեն եղեալ» (էջ 35)։

Է. Սահակի թղթակցությանց մեջ ո՛չ մի թվական հիշատակություն չկա. միայն Պրոկղի առ Սահակ թղթի վերջում գրված է «գրեալ յամի Տեառն 435 («Գիրք թղթոցս», էջ 8)։ Բայց ինչպես հրատարակիչները ասում են, այս ծանոթությունը «գիրքին գրության հետ կապ չունի, այլ ետքեն նոտր գրով գրված ծանոթություն մ'է... օտար ձեռքի ավելցված» (անդ, էջ ԺԱ)։

Ը. Հովհաննես կաթողիկոս ըստ ամենայնի հետեւող է Խորենացուն. ո՛չ մի նորություն և ո՛չ մի թվական տվյալ չունի։

Թ. Ստեփանոս Ասողիկ տալիս է մեզ հետեւյալ թվականները.

1. «Յաջորդէ ի տեղի նորա Վռամշապուհ եղբայր նորա, որ թագաւորեաց ամս ԺԵ»։

2. «Եւ գտաք հանդիպեալ երկրորդ ամին Արտաշրի արքային Պարսից՝ զհինգերորդ ամն Վռամշապհոյ արքայի Հայոց, յորում Մաշտոցն երանելի... Դանիէլեան նշանագրոք զդպրութիւն ըստ հայումս յօրինէր»։

3. «Յետ որոյ դարձեալ ևս ի վեցերորդումն նորին Վռամշապհոյ, որ է ամ առաջին Վռամ Կրման արքայի՝ վերստին աստուածատուր նշանագրոք զնոյնս յեղանակեալ յօրինէր. որովք և դպրութիւնք և Գիրք Աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպէս պատմեն Կորիւն և Ղազարս»։

4. «Վռամշապուհ բարւոք վախճանեալ, յորոյ տեղին թագաւորեցուցեալ Կրման արքայի զԽոսրով եղբայր նորին զմերժեալն, որ եկաց ի կրկնումն ամ մի»։

5. Հայոց Շապուհ թագավորի մահից հետո «մնայր աշխարհս Հայոց առանց թագավորի ի հարուստ ամս. զոր խնդրեալ զտաք լեալ ժամանակ անիշխանութեանն ամս ԺԱ»։

6. «Յովսէփ և Եզնիկ, արբանեակք Սահակայ, զայսու ժամանակաւ (յանիշխանութեան) առաքեալք յԱսորիս, ուստի և ի

Յոյնս՝ ի գրաւորութիւնս գրոց վարդապետականաց»։

7. «Յետ որոյ թագաւորէ Արտաշէս, որ և Արտաշիր, հրամանաւ Վռամայ արքային Պարսից՝ ամս Զ։ Սրանից հետո հիշում է Մեսրոպի մեծ գործունեութիւնը, Ս. Գրքի երկրորդ թարգմանութիւնը և Հռիփսիմեանց վանքի նորոգութիւնը։

8. Սահակին հաշորդեց «Արդիշոյ ոմն ասորի Յակորիկ չարագործ, որ ոչ տնեաց տարի մի։ Եւ յետ նորա զՇմուէլ ոմն ի նմին ցեղէ՝ վատթար քան զնա, որ և նա յետ երկու ամի վախճանեցաւ։ Եւ յետ նորա Սուրմակ... ամս է»։

9. Սահակ «կալաւ զԱթոռ Հայրապետութեան ամս Ը»։

10. Սահակի մահից հետո՝ «յետ սակաւ աւուրց անցելոց մեծ վարդապետն Հայոց Մեսրոպ վախճանեցաւ (գլուխ Ա)։

11. «Թէոդոս Փոքր՝ որդի Արկադու, ամս ԽԲ. սա արար ժողով յԵփեսոս» (գլուխ Զ)։

Ժ. Ներսես Շնորհալի իր Վիպասանութեան մեջ (տող 897—945) Մեսրոպի հայտնութիւնը, ճգնական կյանքը, գրի գյուտը, թարգմանիչների երթը, Վրաց և Աղվանից քարոզութիւնը մինչև Մեսրոպի մահը դնում է Արշակ Գ և Վաղարշակ Բ թագավորների ժամանակ. այսպես՝

Յայսմ վայրի եղև յայտնեալ
Այն, որ Մեսրոպն կոչեցեալ,
Որ տեսական ուսմամբ վարժեալ,
Դրօշնակաւոր գերազանցեալ,
Ճգնողական վարս ընկալեալ,
Եւ յանապատս ճետեալ,

. . . . . .

Զաստուածագիծ տառս ընկալեալ

. . . . . .

Մանկունս ուշեղս ժողովեալ,
Նոր դրպրութեամբ այնու վարժեալ,

. . . . . .

Բայց Մեսրոպայ շրջագայեալ,
Զամենեսեան լուսաւորեալ,
Վրաց ու Աղուանից գիր ըստեղծեալ,

. . . . . .

Եւ սմանչելեօք վախճան առեալ.

. . . . . .

Բայց ի սոցին ատաւս լեալ,
Խոսրով անուն արքայ երստեալ,
Զոր և Պարսից ըզնա կալեալ,
Զվռամշապուհ փոխան եղեալ.

. . . . . .

Սրանից հետո պատմվում է Արտաշեսի թագավորելը, Սահակի մահը, Վարդանանք և այլն։

ԺԱ. Սամվել Անեցու ժամանակագրությունը որոշում է հետևյալ թվականները.

Նժե (415). Ս. Սահակ ամս ԾԱ։
Նժթ (419). Վռամշապուհ ամս ԻԱ։
Նիա (421). Պարսից Արտաշիր ամս Գ։ Սկիզբն դպրութեանս Հայոց, Մաշտոց. որ է Մեսրոպ երանելի և Մեծն Իսահակ զԴանիէլի նշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ։ Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք՝ զնոյն յեղանակեալ, որով և դպրութիւնք և գիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին։

Նկէ (467). Յետ մահուան Ս. Սահակայ, Յովսէփ աշակերտ նորին՝ յաջորդէ զԱթոռ եպիսկոպոսութեան ամս Բ. հրամանաւ Մեսրոպայ՝ որ և նա կատարեցաւ ի նոյն ամի։

Նկը (468). Յովսէփ ամս Բ.

ԺԲ. Մխիթար Անեցու տված տեղեկությունները են՝

1. «Արշակ և Վաղարշակ՝ Ե. Խոսրով Ե. Վռամշապուհ ԻԱ. Խոսրով դարձեալ՝ Ա. Շապուհ Դ. անիշխան ամս ԺԱ. Արտաշէս՝ Զ. անիշխան ամս ԺԳ. սա վերջին թագաւոր Արշակունեաց» (էջ 9)։

2. «Կարգ կաթողիկոսաց... Ասպուրակէս, եղբայր սոցա (Շահակի և Զաւենի) Ե. Սուրբն Սահակ ԾԱ.» (էջ 10)։

3. «Շապուհ [Բ]... Ձգտեցաւ 73 ամ. ի սորա ՀԱ ամին նստի թագաւոր Հայոց Վռամշապուհ. և Սուրբն Սահակ՝ հայրապետ, որդի մեծին Ներսէսի» (էջ 33)։

ԺԳ. Վարդան պատմիչը տալիս է հետևյալ տեղեկությունները.

1. «Խոսրով ոմն Արշակունի, որ զկնի երից ամաց մերժի ի տիրութենէն ի քսութենէ գործակալաց աշխարհիս. այն որ նստոյց յաթոռ պատրիարքութեան զՍուրբն Սահակ, որդի մեծին Ներսիսի, որ պաշտեաց զՍուրբ Աթոռն ամս յիսուն»։

2. «Իսկ թագաւորն Պարսից կացոյց ի տեղին Խոսրովու զՎռամշապուհ եղբայր նորին, ամս հնգետասան»։

3. Ի հինգերորդ ամի նորա և յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ՝ Սուրբն Մեսրոպ յօրինէ զդպրութիւն հայերէն»։

4. «Խոսրով ոչ աւելի կացեալ քան զտարի մի՝ վախճանի։ Եւ ի մեռանելն Յազկերտի, նստի յաթոռն Վռամ երկրորդն, որ և բազում չարիս խորհէր ածել ի վերայ Հայոց։ Զոր իմացեալ Սուրբն Սահակ՝ գնաց առ Յունօք, և առաքէ զՍուրբն Մեսրոպ և զՎարդան թոռն իւր առ Թէոդոս որդի Արկադեայ»։

5. «Յետ այսորիկ առաքէ զՎարդան առ Վռամ խնդրել զհաշտութիւն, և թագաւորեցուցանել զԱրտաշիր, որդի Վռամշապհոյ, զոր և արարն իսկ. իսկ Մովսէս ասէ թէ զկնի Խոսրովու թագաւորեցոյց Յազկերտ զՇապուհ զորդին իւր, ամս երեք, որ և ի համբաւ մահու հօրն գնացեալ, մեռաւ ի զօրացն. և ասեն, մնաց երկիրս անիշխան

և շփոթ ամս մետասան. և ապա թագաւորեաց Արտաշիր»։

6. «Եւ ընկեցեալ զՍուրբն Սահակ, կարդեն ի տեղի նորա զՍուրմակ յարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՝ հալածի. և դնեն զԲրքիշու ասորի, ամ մի. և ապա զՇմուէլ ի նոյն ցեղէ»։

7. «Ոմանք զկնի Բրքիշոյ և Շմուէլի ասեն առեալ Սուրմակայ զԱթոռն ամս եոթն։ Այլ Սրբոյն Սահակայ... կատարի առ Քրիստոս և ամփոփի յԱշտիշատ, զկնի սատակմանն Վռամայ և տիրելոյն Յազկերտի որդւոյ նորա։ Զկնի ապա վեցից ամսոց կատարի Սուրբն Մեսրոպ»։

8. «Իսկ նախարարացն ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զՍուրբն Վարդան։ Զայնու ժամանակօք դարձան ի թարգմանութենէ Ղևոնդ, Կորիւն և Արձան, որ դիպեցան ի ժողովն Եփեսոսի, զոր արար Թէոդոս ի մետասաներորդ ամի թագաւորութեանն իւրում»։

9. «Սահակ վախճանեցաւ յամսեանն Նաւասարդի յերեսունն... և սուրբն Մեսրոպ... յերեքտասան Մեհեկի ամսոյ»։

ԺԴ. Կիրակոս Գանձակեցի պատմիչի տեղեկութիւններն են՝

1. Խոսրով Գ նստաւ 5 տարի. նրան հաջորդեց Վռամշապուհ՝ 21 տարի, կրկին Խոսրով՝ 1 տարի, Արտաշիր՝ 6 տարի, առանց հիշելու Շապուհին։

2. Սահակ կաթողիկոսութիւնից ընկնելուց և Արտաշրի գահընկեցութիւնից հետո ապրեց 16 տարի. ընդամենը հայրապետ եղավ 51 տարի (տե՛ս էջ 19)։

3. (Սահակ իր մահվան ժամանակ) ասուեալ զԱթոռն ցՍուրբն Մեսրոպ, յոր և նա ի նոյն ամի ելից զկենցաղս՝ յիշատակ բարի թողեալ ապագայից, ի սկզբան առաջին Յազկերտին Պարսից արքային, որդւոյն Վռամայ երկրորդի (էջ 19—20)։

4. Սահակի հաջորդներն են՝ Սուրմակ 1 տարի, Բրքիշու 3 տարի, Շմվել 5 տարի։

ԺԵ. Ըստ Մխիթար Այրիվանեցու՝ «Ամք Տեառն 423, սկիզբն դպրութեանց հայ գրոցս ի ձեռն Սրբոյն Սահակայ և Մեսրովպայ, որք վաթսուն աշակերտօք աշխատեալք խարիմանեցին զամենայն Հին և Նոր Կտակարանս։ Կատարեցան աշակերտքն Մաշտոցի յԱստղարլուրն» (էջ 47)։

ԺԶ. «Յայսմաւուրք»-ները տալիս են ոչ թե թվականներ, այլ ամսաթվեր. այսպես՝ «Նաւասարդ 30 և սեպտեմբեր 9, յիշատակ վարուց և մահուան սուրբ հայրապետին մերոյ Իսահակայ Պարթևին». «Հոռի Ը և սեպտեմբեր ԺԷ, յիշատակ սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա». «Եւ եղե գիւտ գրոյն ի Տրէ ի ԺԷ և նոյեմբերի ի ԻԵ». «Մեհեկի ԺԳ և փետրուար ԺԹ վախճան Ս. Մեսրոբայ»։

ԺԷ. «Կայսերաց պատմութիւն», ըստ Զարբհանալյան, Ա, էջ 40. «Արկադեայ և Ոնորեայ տասներորդ ամի եղև սկիզբն հայերէն գրոց... ի սորա աւուրս էր Սուրբ Սահակ հայրապետն յորոյ աւուրս գտաւ 29 գիրն հայերէն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոյ, զոր ետ բերել Վռամշապուհ թագաւորն»։

ԺԸ. Մագիստրոս, «Քերականութիւն», էջ 231. «Քանզի ի վախճանելն մերոց թագաւորացն և ի սպառիլն ազգին Արշակունեացն գտաւ գիրս Արամեանն»։

ԺԹ. «Վարք Անտոնի միայնակեցի» հիշատակարանում տրվում է հետևյալ տեղեկությունը. «Թարգմանեցաւ գիրս այս ի սուրբ քաղաքին յԵրուսաղէմ, յամի Ն-որդի Ե-երորդի (450) գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամին յորում հանգեաւ քաջընթաց երանելին Մաշտոց»։ (Այս հիշատակարանը գտնվում է ՊՍԲ (=1403) թվականին գրված մի «Ոսկեփորիկ»-ում, որ հրատարակել է Հ. Գ. Զարբհանալյան, «Մատենադարան նախնեաց», էջ 286 և որ ստուգել է Նորայր «Կորյուն վարդապետ», էջ 28)։

Ի. «Ժամանակագրութիւն Աւետիքայ (Ձեռագիր Կարինյան № 1741, գրված ՌՄԼԷ=1788 թվականին) տալիս է հետևյալ թվականները.— Սահակ նստավ 416—466 թվականներին (այն է 51 տարի).— Վռամշապուհ թագավորեց 418—438 (այն է 21 տարի).— 420 թվականին, «ի հինգ ամին Սրբոյն Սահակայ սկիզբն դպրութեանս Հայոց»։

§ 2

Ինչպես ընթերցողը կարող է նկատել, բոլոր վերոհիշյալ ժամանակագրական տեղեկությունների մեջ՝ համեմատության իբր հիմք են բերված պարսից և հունաց թագավորների տարիները. տեղ-տեղ մաս ունենն նաև Կոստանդնուպոլսի հույն պատրիարքները։ Ուստի մենք էլ կարևոր ենք համարում ամենից առաջ դնել այստեղ նույն շրջանին գահակալող պարսիկ Սասանյան թագավորների, բյուզանդական կայսրների և Պոլսի հույն պատրիարքների ժամանակագրական ցուցակը՝ ճշտված թվականներով.

Պարսիկ Սասանյան թագավորներ

Շապուհ Բ, 310—379.
Արտաշիր Բ, 379—383 կամ 384.
Շապուհ Գ, 384—388 կամ 389.
Վռամ Դ Կրման, 389—399.
Հազկերտ Ա, 399—420.
Վռամ Ե, 420—438 կամ 439.
Հազկերտ Բ, 438/9—457.

Բյուզանդական կայսրեր

Վաղենտիանոս, 364—375.
Վաղենս, 364—378.
Թեոդոս Ա Մեծ, 379—395.
Արկադիոս, 395—408.
Թեոդոս Բ, 408—450.
Մարկիանոս, 450—457,

Պոլսի նույն պատրիարքներ

Եվդոքսիոս, 360—369.
Տիմոթեոս, 369—379.
Եվագր, 369—370.
Գրիգոր, 379—381.
Մաքսիմոս, 381.
Նեկտարիոս, 381—397.
Հովհաննես Ոսկեբերան, 398—404.
Արսակիոս, 404—405.
Ատտիկոս, 405—425.
Սիսիննիոս, 426—427.
Նեստոր, 428—431.
Մաքսիմիանոս, 431—434.
Պրոկղ, 434—447.
Փլաբիանոս, 447—449.
Անատոլիոս, 449—458.

Հիշյալ ցուցակում գտնված բոլոր թվականները, ինչպես ասացինք, գիտական ժամանակագրությամբ ճշված և ստուգված են, մանավանդ հունաց բյուզանդական կայսրերի և Պոլսի պատրիարքների թվականները։ Գլխավոր աղբյուրներն են հունաց համար Գելցերի աշխատությունը, իսկ Սասանյանների համար՝ Nöldeke, «Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der Arabischen Chronik des Tabari», Leyden, *1879։ Այս աշխատության մեջ, էջ 435, դրված է Սասանյան թագավորների կարգը։ իրենց ստույգ թվականներով։ Սրանից արտատպել է Մալխասյան։ հրատարակություն «Ասողիկ»-ի (Պետերբուրգ 1885), էջ 358։ Ավելի ուշ, հետևաբար, ավելի ճշտված և ստուգված ձևով, Նյոլդեքեն հրատարակեց Սասանյան պատմության ամփոփումը՝* «Aufsätze zur Persischen», *որ տպվեց նաև* «Encyclopädia Britannica»-*ում (1887)։ Նույնի և հայերեն թարգմանությունը հրատարակեց Ն. Քարամյան, «Պատմություն Սասանյան տերության», Վաղարշապատ, 1896։ Նյոլդեքեի առաջին աշխատության և այս երկրորդի մեջ կան թվականի տարբերություններ, բայց ըստ որում երկրորդը ավելի ուշ կազմված և ավելի ստույգ է, մենք էլ մեր թագավորական ցուցակը վերցրինք այս երկրորդից։*

Այս ցուցակի մեջ էլ անորոշ են մնում Պարսից Սասանյան թագավորներից մի քանի թվականները։ որոնք մեկ տարվա տարբերություն են ցույց տալիս։ Շապուհ Գ-ի մահվան թվականն է 388 կամ 389։ Սակայն այս կասկածելի թվականներից մի քանիսը մեր ժամանակագրության համար կարևոր չեն։ Ամենից ավելի կարևորն է Հազկերտ Բ-ի գահակալության թվականը, որի վրա է հիմնվում մեր ամբողջ հաջորդ ժամանակագրությունը։ Դժբախտաբար այս թվականը մի տարով խախուտ է և մենք էլ նրա ստուգությամբ պիտի զբաղվենք քիչ հետո։

§ 3

Վերևում հիշատակված բոլոր հեղինակների մեջ, այն անձը, որ տալիս է ժամանակագրության կողմից ամենից ավելի բազմակողմանի և ամենից ավելի հարուստ, միևնույն ժամանակ՝ իրրև ժամանակակից վստահելի տեղեկությունները, Կորյունն է։ Նա, մանավանդ իր վերջին հատվածում։ մանրամասն ճշտում է Մեսրոպի գործունեության բոլոր դիպավոր թվականները։

Այս հատվածից տեսնում ենք, որ Մեսրոպ վախճանվել է Հազկերտ Բ-ի թագավորության առաջին տարին։ իր կրոնավորական կոչման օրից («համար հաւատոցս») մինչև իր վախճանը ապրել է 45 տարի։ գրերի գյուտը տեղի է ունեցել կրոնավոր ձեռնադրվելուց 10 տարի հետո, քանի որ գրերի գյուտից մինչև Մեսրոպի մահը տրվում է 35 տարի։ Մեսրոպի կրոնավորական 45 տարիներից 6 տարի ընկնում է Վռամ Կրմանին, 21 Հազկերտ Ա-ին, հետևաբար մնացյալ 18 տարին էլ մնում է Վռամ Ե-ին, որ իրոք նստել է 10 տարի (428—438), այնպես որ 6+21+18=45։ կրոնավորական կոչում է ստացել Վռամ Կրմանի չորրորդ տարին։

Այս թվականները ամենաճիշտ կերպով համապատասխանում են իրար և վերի ժամանակագրական ցուցակի մեջ դրված թվականներին։ Այսպես։ ըստ ժամանակագրության, Վռամ Կրման նստավ 389—399 թվականներին, ուստի թագավորեց 10 տարի։ Մեսրոպ կրոնավոր էր դարձել սրա չորրորդ տարին, այն է 393 թվականին։ և նրա մահվան ժամանակ արդեն 6 տարվա կրոնավոր էր։ իրոք էլ այս երկու թվերի գումարը (4+6) տալիս է ճշտիվ Վռամ Կրմանի 10 տարին։

Եթե Մեսրոպ կրոնավոր դառնալուց հետո ապրել է 45 տարի, նշանակում է, թե իր մահը պատահել է 488 թվականին։ բայց այս թվականը պետք է որ համապատասխանի Հազկերտ Բ-ի առաջին տարվան, ժամանակագրական ցուցակում Հազկերտ Բ-ի համար տրված է 438 կամ 439։ քննենք, թե սրանցից ո՞րը պետք է ճիշտ լինի։

Ասացինք, թե Սասանյան թագավորների ստույգ թվականները տալիս է Նյոլդեքեն։ Պարսիկները թագավորի գահակալության թվականները հաշվելու համար մի անհարմար ձև ունեին։ Նրանք գահակալության առաջին տարին հաշվում են ո՛չ թե գահ բարձրացած օրից, այլ նույն տարվա նավասարդից։ Այնպես որ տարվա վերջին ամսում գահակալած թագավորն էլ տարեդլխին (այսինքն բնդամենը մի ամիս հետո) համարվում էր մի տարի գահակալած (այս մասին տե՛ս հատկապես Nöldeke, «Geschichte», էջ 404 և Գալուստ Տեր-Մկրտչյանի հոդվածը, «Արարատ», 1912, էջ 500—501)։ Այսպիսով հաճախ կարող էր մինչև մի տարի սխալ առաջանալ թագավորների գահակալության թվականների մեջ։ Դրա համար է, որ վերի ցանկի մեջ էլ չորս անգամ ունենք մի տարի տարբերությամբ թվականներ։

Հազկերտ Բ-ի գահակալության տարին տրված է 438 կամ 439. օրն ու ամիսը անհայտ են։ Տեսնենք, թե ի՞նչ միջոց ունենք մեր պատմության տվյալներով այս երկու թվականներից մին կամ մյուսը հաստատելու։

Ըստ Իսահակ Հարությունյանի, «Հայոց դիրք», էջ 349, Հազկերտի թագավորության թվականը կարող ենք ստուգել նախ Եղիշեի միջոցով։ Այս մատենագրի պատմությամբ Հազկերտ Բ «ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ դունդ գումարէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Թիտաշականս». այնուհետև սկսվում են հայոց կրած նեղությունները. հայերը թուղթ են գրում Թեոդոս կայսեր, որ ուզում է օգնել հայերին։ բայց «ի նմին ժամանակի անդէն վազվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեանն։ Թեոդոս Բ մեռավ 450 թվականի հունիսի 28-ին (Նյոլդեքե, «Geschichte», էջ 423). և եթե այս թիվը Հազկերտի 12-րդ տարին է, ուստի Հազկերտ գահակալել է 438 թվականին և ոչ 439-ին։

Երկրորդ, ըստ նույն հեղինակի, էջ 350, ստուգման միջոց է նաև Ղազար Փարպեցու վկայությունը։ Սա խոսելով Վարդանանց պատերազմի մասին, այս դեպքը դնում է Հազկերտի 13-րդ տարին. «Արդ խաղացուցեալ զամենեսեան գնոսա առաջի իւր յերկիրն Պարսից նենգաւորն Վասակ, յերեքտասներորդում ամի Հազկերտի արքային Պարսիցս» (Փարպեցի, Բ խր)։ Որովհետև Վարդանանց պատերազմը տեղի ունեցավ 451 թվականին, ուստի սրանից 13 տարի հետ երթալով, գտնում ենք Հազկերտի գահակալության թվականը 438 և ոչ թե 439։

Երրորդ, մեր կողմից ավելացնում ենք Կորյունի վկայությունը վերի հատվածում. Կորյուն ասում է, թե Մեսրոպը Վռամ Կրմանի չորրորդ տարին կրոնավոր դառնալով՝ 45 տարի հետո՝ վախճանվեց Հազկերտի առաջին տարում։ Վռամ Կրման նստել է 389 թվականին. իր չորրորդ տարին է 393 թվականը. այս թվի վրա ավելացնելով 45 տարին, կստանանք 438, որ պիտի լինի Հազկերտ Բ-ի գահակալության թվականը և ո՛չ 439, որովհետև վերջին դեպքում Մեսրոպ 46 տարի հոգևոր պաշտոն վարած պիտի լիներ։ Իսկ եթե հարկ լիներ Հազկերտի գահակալությունը դնել 439-ին և սրանից 45 տարի հետ երթալով, Մեսրոպի կրոնավորությունը 394 թվականին համարել, այն ժամանակ այս թվականը կհակասեր Կորյունի հաշիվներին, որովհետև 394 թվականը ո՛չ Վռամ Կրմանի չորրորդ տարին է և ոչ էլ այս թվականից հետո կարող է մնալ 6 տարի, մինչև Վռամ Կրմանի մահը։

Չորրորդ, մեր կողմից ավելացնում ենք դարձյալ Ասողիկի տված տեղեկությունը, թեև այս վերջինը ժամանակակից չլինելով, մեծ արժեք չունի. «Ստուգեալ մեր զամս թագաւորացն գտաք հանդիպեալ ի ժե ամն Յազկերտի և յերրորդն (յԳն) Մարկիանոսի անիծելոյն» (էջ 79)։ Ուրեմն Հազկերտի 15-րդ և Մարկիանոսի 3-րդ տարին համապատասխանում են իրար։ Մարկիանոս նստավ 450 թվականին, իր երրորդ տարին է 453, որից հանելով 15 տարի, ունենում ենք Հազկերտի թագավորության թվականը՝ 43Ա և ո՛չ թե 439։ (Դժբախտաբար այստեղ էլ՝ Վարդան պատմիչը, որ հիշատակում է Ասողիկի վերոհիշյալ վկայությունը, մի տարի սխալ է դնում. «Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք զվեշտասանեւերորդն Յազկերտի՝ երրորդ ամ Մարկիանոսի» (էջ 54)։ Բայց սա չի խանգարում մեր գործը. որովհետև Մարկիանոսը նստած լինելով 450-ին, իր երրորդ տարին լինելով 453, այս թվից եթե 15 էլ հանենք, կունենանք Հազկերտի գահակալության համար 437 և ոչ թե 439։

Վերոհիշյալ ապացույցներից առաջին երկուսը, որ դրինք Իսահակ Հարությունյանից վերցնելով, գիտե նաև Nöldeke, «Geschichte», էջ 423։ Նա հիշում է նաև մի ուրիշ ապացույց, որ հանում է Ասողիկից և որ հետևյալն է.

Փարպեցին (տպ. 1904, էջ 101) խոսելով Ղևոնդյանց նահատակության մասին, ասում է. «Եւ այսպէս ի վեշտասաներորդում ամի թագաւորութեան Յազկերտի, որ օր քսան և եօթն էր ամսոյն Հրոտից, պսակեցան սուրբքն վեցեքեանս։ Այս դեպքը պատմելով Ասողիկ, էջ 79 (Բ, գլ. բ) ասում է. «Եւ յետ պատերազմին Վարդանայ՝ ղկնի երկուց ա-

մաց սուրբ Ղևոնդեանք Յովսեփաւ հայրապետաւ կատարեցան յամսեանն Հրոտից, որ օր ԻԶ էր ամսոյն, նոյն յուլիսի՝ յաւուր կիրակէի»։ Dulaurier իր ժամանակագրութեան մեջ (էջ 203—204) քննելով այս տողերը, գտնում է, որ

453 Հուլիսի կամ Հրոտիցի 26 = կիրակի.
454 » » » 25 = կիրակի։

Մենք լուզեցինք օգտագործել այս հաշիվը, իբր շատ անվստահելի, որովհետև 1) Փարպեցու վենետիկյան տպագրութեան մեջ 25 Հրոտից. 1904 թվականի հրատարակութեան մեջ նշվում է, որ բնագիրն ուներ ԻԵ, լուսանցքում ուղղված էր ՐԷ, իրենք ընդունել են «քսան և հօթն». հարց է, թե բնագի՞րն է ուղիղ թե՞ լուսանցագրութիւնը. 2) Փարպեցին օրվա պատկերը չի նշանակում. 3) Ասողիկը դնում է Հրոտից ԻԶ, օրն էլ կիրակի. 4) Ի՞նչ գրավական ունենք Ասողիկի (500 տարի ուշ եկող մի հեղինակի) տված կիրակիին։

Ցավալի է, որ նյոլգեքն օգտագործել է միայն Ղազարեն, Փարպեցին և Սեբեոսը (եվրոպական թարգմանութիւններից) և չի տեսել Կորյունի վերջին համահավաք տեղեկութիւնը։ Այնուամենայնիվ նյոլդեքն տրամադիր է ընդունելու Հազկերտ Բ-ի գահակալութեան թվականը 4 օգոստոս 438—29 հուլիս 457 (էջ 426)։ Մենք էլ ընդունում ենք 438 թվականը, որ և համապատասխանում է Կորյունի հաշիվներին։

Բայց Մեսրոպի մահվան ժամանակի հետ պետք է որ համաձայն գան նաև Սահակի և Մեսրոպի մահվան ամիսները։ Վերևում հիշատակված բոլոր պատմագիրների համաձայնութեամբ Սահակը վախճանվել է Հազկերտ Բ-ի առաջին տարին, Նավասարդի 30-ին, իսկ Մեսրոպը՝ նրանից 6 ամիս հետո՝ Մեհեկանի 13-ին։ Անշարժ տոմարի հաշվով Նավասարդի 30-ը համապատասխանում է սեպտեմբերի 9-ին։ Բայց որովհետև ն դարում չկար անշարժ տոմարի հաշիվը, ուստի անմտութիւն է Սահակի մահը դնել սեպտեմբերի 9-ին, ինչպես անում են «Յայսմաւուրք»-ը և արդի պատմիչների մի մասը։ Ըստ շարժական տոմարի 436, 437, 438 և 439 քառամյակին, Նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոստոսի 9-ին, ուստի Նավասարդի 30-ը կլինի սեպտեմբերի 7-ին. հետևաբար Սահակի մահը տեղի ունեցավ 438 թվականի սեպտեմբերի 7-ին։

Սրանից վեց ամիս հետո, այն է 439 թվականի Մեհեկանի 13-ին մեռել է Մեսրոպ։ Մեհեկանի 13-ը անշարժ տոմարով համապատասխանում է փետրվարի 19-ին, ինչպես գնում են «Յայսմաւուրք»-ը և նոր պատմիչներ։ Բայց այս ամսաթիվը չի կարող ճիշտ լինել։ Պետք է առնել շարժական տոմարը, որի համաձայն 436—439 քառամյակին Մեհեկանի 13-ը ընկնում է փետրվարի 17-ին։ Հետևաբար և Մեսրոպի մահը տեղը ունեցավ ճիշտ 439 թվականի փետրվարի 17-ին, ուրբաթ օրը։

Այստեղ դիտելու երկու կետ կա. 1) Սեպտեմբերի 7-ից մինչև փետրվարի 17 ո՛չ թե վեց ամիս է, այլ 5 ամիս 10 օր։ Կորյունը և ուրիշները դնում են 6 ամիս՝ կլոր թվով։ 2) Կորյուն Մեսրոպի մահը դրել էր Հազկերտ Բ-ի առաջին տարին, որ մենք հանեցինք 438 թվականից, այժմ ավելի մանրամասն հաշվով մենք գտնում ենք 439 թվականը, բայց դա ոչ մի հակասութիւն չի ներկայացնում, որովհետև Կորյուն ասում է, թե Մեսրոպի մահը տեղի ունեցավ Հազկերտի առաջին տարում և այդ առաջին տարին սկսվում է 438-ից և գնում է մինչև 439-ի կեսերը։

Գրերի գյուտը տեղի ունեցավ Մեսրոպի կրոնավորական կոչում ստանալուց 10 տարի հետո, մահվանից 35 տարի առաջ։ Մահվան թվականը ամսաթվով հանդերձ ճշտված լինելով՝ հետ գանք 35 տարի, կստանանք 404 թվականը։ Այս թվականը կրոնավորական կոչումից 10 տարի հետո պիտի լինի. և իրոք, 393-ի վրա ավելացնելով 10, կստանանք 403. Կորյունը չի հաշվել մնացորդ մի-երկու ամիսը, որով կունենանք 404, գրերի գյուտի ճիշտ թվականը։

Սրանք են ահա մեզ համար ամենակարևոր և ստուգված թվականները.

394—Մեսրոպի ձեռնադրութիւնը.
404—գրերի գյուտը.
438 սեպտեմբերի 7—Սահակի մահը.
439 փետրվարի 17—Մեսրոպի մահը։

(Շարունակելի)



Հ. Ա. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

5. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ Եկեղեցվո էության մասին երկար ատեն ճշգրիտ ոչինչ չէր գիտեր օտարը։ Քրիստոնյա ամենեն հին եկեղեցիներեն մեկն էր ան, դարերով ապրեր էր ինքնուրույն կյանքով, և դեռ կապրեր եկեղեցիներու ընտանիքին մեջ բոլորեն ալ անկախ, և սակայն տակավին ներկայացված չէր ան՝ սեղմ ու ամփոփ՝ իր իսկական դիմագծության և իր հարազատ վարդապետության մեջ։

Ընդհակառակը, այն խեղաթյուրումներուն պատճառով, որոնք տարածված էին իր վարդապետության մասին Քաղկեդոնի ժողովեն ի վեր, և առասպելներուն, որոնք դարերու ընթացքին ստեղծվեր էին Հայ եկեղեցվո և անոր հավատալիքներուն շուրջ, Հայ եկեղեցին կներկայանար բոլորովին այլանդակված դիմագծությամբ։

Խեղաթյուրումներուն և խծրծանքներուն պատասխանելու և Հայ եկեղեցվո ճշմարիտ նկարագիրը տալու համար ուրիշ միջոց չկար, բայց եթե թափառիլ հայ մատենագրության բավիղներուն մեջ, տարբալուծել հայ շարականները, հայ եկեղեցական ժողովներու կանոնները քրքրել, գննության ենթարկել Օձնեցին կամ Տաթևացին, և գալ ի վերջո ապավինիլ Շնորհալիին՝ անոր «Ընդհանրականս»-են փաստ քաղելու համար։

Եկեղեցի մը, որ դարերե ի վեր այնքան պարզ էր եղեր և պարզ մնացեր իր էությամբ, իր կազմակերպությամբ այնքան մոտիկ էր եղեր միշտ հայ ժողովուրդին ու իր հավատալիքներով անոր հոգվույն այնքան հարազատ, մշուշոտ կշարունակեր մնալ այսպես հաչս օտարին, և անհրաժեշտ էր, որ ան պատկերացվեր իր ամբողջական կերպարանքով։

Օրմանյան միակ մարդն էր, որ պիտի կրնար Հայ եկեղեցվո դիմագիծը սահմանել և անոր տեղը ճշտել պատմական եկեղեցիներու ընտանիքին մեջ, միակ մարդը ոչ միայն ընդհանուր եկեղեցիներու և անոնց վարդապետությանց շուրջ իր ունեցած լայն ծանոթություններով և Հայ եկեղեցվո անցյալին մասին իր խոր հմտությամբ, այլև աղբյուրները վերլուծելու և տեսությունները բանաձևելու իր բացառիկ ճարտարությամբ։

Օգտվելով իր ակամա մեկնակեցութենեն 1908 հուլիսի դեպքերեն հետո, գրչի ուրիշ աշխատանքներու կարգին, որոնց լծվեցավ իսկույն «պաշտոնական զբաղումներե ազատ իր ժամանակը օգտագործելու համար», Օրմանյան իր առաջին մտահոգություններեն մեկն եղավ Հայ եկեղեցին ներկայացնել իր հարազատ կերպարանքին մեջ, գոհացում

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № № Ե-ից, Զ-ից, Է-ից, Ը-ից, Թ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1962 թվականի № № Ա-ից և Բ-ից։

տալով այսպես ամեն կողմե հայտնված փաստագներու։

Հատորը, զոր այդ առթիվ շարադրեց, կուղղվեր Եվրոպային, և հետևաբար Ֆրանսերեն էր։ Օրմանյանի հմտությունն ու ճարտարությունն ունենալ պետք էր նոր տեսակետ մասնագ խոսելու համար։

Օրմանյանի առավելություններեն մեկն ալ այն էր եղեր, որ ինքզինք չէր կաշկանդած իր տեսությունները պարզելու ատեն։ Այնպես որ «Հայոց եկեղեցին», ինչպես կնկատե Բերտրան Բարել իր հառաջաբանին մեջ, գրված է «միտքի այնպիսի անկախությամբ մը, որ զարմանք կպատճառե եվրոպացի ընթերցողներու, որոնք վարժ չեն այդչափ ազատությամբ գրող եկեղեցականներու հանդիպիլը»։

Օրմանյանի հիմնական մտահոգությունն էր Հայ եկեղեցվո տեղը ճշտել եկեղեցիներու ընտանիքին մեջ, և այդ հնարավոր չէր առանց պարզելու նախ Հայ եկեղեցվո մասին նախապաշարումները, և հետո զայն ներկայացնելու իր վարդապետությանց մեջ։

Այդ պատճառով է, որ Օրմանյան «Հայոց եկեղեցին» խմբագրած ատեն շոշափած է բազմաթիվ հարցեր, որոնք քով-քովի գալով Հայ եկեղեցին կպատկերացնեն իր լրիվ կերպարանքին մեջ։ Հայրդական գլուխներու մեջ ան վերլուծած է, հետևաբար, ինչպես որ կմատնանշվի գրքին ճակատն իսկ, Հայ եկեղեցվո «պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, գրականությունը ու ներկա կացությունը», առանց հիշելու «կաթողիկոսներու ժամանակագրությունը» և «թեմերու վիճակագրությունը», որոնք կհետևին սույն գլուխներուն։

Օրմանյանի կյանքին ու գործին նվիրված այս ուսումնասիրության մեջ հաճախ առիթ ունեցանք անդրադառնալու անոր տեսակետներուն Հայ եկեղեցվո հետ կապված բազմաթիվ խնդիրներու մասին, և մանավանդ անոնց մոտենալու իր ինքնուրույն ձևին։ Իր «Հայոց եկեղեցին» ներկայացնելու առթիվ չէինք կրնար սակայն չանդրադառնալ անոր կարծիքներուն ինչ-ինչ հիմնական հարցերու մասին։

Բոլոր պատմական եկեղեցիները առհասարակ հավակնություն ունին առաքելական ծագում ունենալու։ Եվ սակայն բոլորն ալ, առանց բացառության, կկոթնին ավանդության վրա։ Հայ եկեղեցվո էության մասին խոսող երկ մը, որպիսին էր Օրմանյանի «Հայոց եկեղեցին», չէր կրնար առաջին հերթին չլուսաբանել, թե ի՞նչ է Հայ եկեղեցվո դիրքը հիմնական այդ խնդրին մեջ։

Այդ լուսաբանությունը անհրաժեշտ էր մանավանդ անոր համար, որ Հայ եկեղեցին իրենց հավասարության ենթարկելու համար։ Կաթոլիկ և Օրթոդոքս եկեղեցիներու գլխավոր հավակնությունն այն էր եղած, թե առաքելական եկեղեցիներ են իրենք։ Մինչ Հայ եկեղեցին զուրկ է այդ հանգամանքեն, որովհետև Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներու նահատակությունը Հայաստանի մեջ առասպել մըն է։ Օրմանյան լավագույն պատասխանն ունի։ Ան կզգուշացնե իրենց առաքելականությամբ պարծենցող երկու մեծ եկեղեցիները ավանդություններուն դպելե։ Ավանդությանց վրա կհենուն բոլոր հին եկեղեցիները իրենց ծագման շրջանին մասին, կրսե, վտանգավոր է անոնցմե որևէ մեկուն համար այդ ավանդությանց զենքով կռվիլ ուրիշներու դեմ։

Օրմանյան ինքն ալ կընդունի, որ ավանդության վրա կհիմնվի Հայ եկեղեցվո առաքելականությունը, ինչպես Հռոմեական եկեղեցվո առաքելականությունը։ Եվ սակայն կհավատա նաև, թե այդ ավանդության մեջ ճշմարտության հետքեր կան, և թե Թադեոս ու Բարթողիմեոս առաքյալները իսկապես քարոզած են Հայաստանի մեջ ու հոն ալ նահատակված։ Այս կերպով Օրմանյան կասկածե դուրս կսեպե քրիստոնեության վաղագույն գոյությունը հայ հողին վրա, և Հայ եկեղեցվո ինքնուրույն հանգամանքը, այս կերպով նաև անոր իրավունքը պատմական եկեղեցիներու շարքը դասվելու։

Եվ Օրմանյանի եզրակացությունը կըլլա այն, որ «առաքելության կնիքը, զոր Հայոց եկեղեցին ամեն ատեն իրեն սեփականած և յուրացուցած է, և զոր ամեն պաշտոնական գրության մեջ համարձակորեն հռչակած է, մեկ կողմեն կհաստատե անոր սկզբնական և նախնական ծագումը, և մյուս կողմե կհավատե անոր ուղղակի ինքնուրույն սկզբնավորությունը, առանց ուրիշ հնագույն եկեղեցվո մը գործակցության»[192],

Օրմանյան այս կերպով կշոշափե նաև այն մյուս հարցը,— թե ե՞րբ է ծագում առած Հայ եկեղեցին։ Այդ հարցը ան մանավանդ անհրաժեշտ կնկատե լուծել, որովհետև Հայ եկեղեցվո ինքնուրույն բնույթը ուրանալու իրենց մտահոգության մեջ ուրիշ եկեղեցիներ կհամառին Լուսավորիչեն սկսած կարծել Հայ քրիստոնեությունը։ Մինչդեռ, ինչպես Հայ եկեղեցվո ավանդական պատմությունը, նույնպես և Օրմանյան, անվիճելի կնկատե, թե քրիստոնեությունը

[192] «Հայոց եկեղեցին», էջ 24։

քանի մը դար ապրած է Հայաստանի մեջ Լուսավորիչեն առաջ ալ։

Թվումն ընելէ հետո բոլոր այն փաստերուն ու վարկածներուն, որոնք քրիստոնեութեան հետքեր, եկեղեցական կազմակերպութիւն և նոյնիսկ հոգևոր պետերու հաջորդականութիւն կհաստատեն Հայաստանի սահմաններուն մեջ, Օրմանեան կգրէ. «Այդ ամեն հիշատակները իրարու կցելով, մենք իրավունք կունենանք եզրակացնել. քրիստոնեութիւնը ստուգապես գոյութիւն ունեցած է Հայաստանի մեջ առաջին երեք դարերու շրջանին, թե քրիստոնեութիւնը իրեն բազմաթիվ հետևողներ ունեցած է հայերու մեջ, և թե հավատացելոց այդ առաջին խումբն եղած է, որ յուր անդրդվելի հաստատութեամբ արգելքներու և հալածանքներու դեմ տոկունութեամբ՝ պահած է քրիստոնեութիւնը Հայաստանի մեջ մինչև անոր տիրող կրոնք հռչակվիլը»[193]։

Թե ինչ չափով ինքնագլուխ եղած է Հայ Եկեղեցին իր գոյութեան սկիզբեն՝ Օրմանեան այն համոզումն ունի, թե Հայ Եկեղեցին երբեք ալ կախում չէ ունեցած ուրիշ եկեղեցիներեն։ Լուսավորչի Կեսարիո Ղևոնդիոս արքեպիսկոպոսեն ձեռնադրութիւն ստացած ըլլալու պարագան, զոր դարերէ ի վեր կշահագործեն օտարները, մերժելու համար Հայ Եկեղեցվո իրավունքը ինքնագլուխ գոյութեան մը, Օրմանեան պատահականութեան մը կվերագրէ, որովհետև Կեսարիան Հայ Եկեղեցվո վրա օրինական հեղինակութիւն երբեք ունեցած չէ ոչ ադկէ առաջ և ոչ ադկէ հետո, և նաև անոր համար, որ Լուսավորչեն առաջ ալ Նվիրապետական Աթոռ գոյութիւն ունեցած է Հայաստանի մեջ, որպիսին էր Արտաշատ։ Աթոռը։

Օրմանեան կրսե, թե հայերը «իրենց Աթոռը առաքելական հաստատութիւն մը կճանչնան։ յուր ծագումեն ինքնուրույն, և յուր սկիզբեն ինքնագլուխ եղած և նույնպես ալ շարունակած, որովհետև Հայոց Աթոռը ոչ թե սկզբնավորեցավ, այլ վերանորոգվեցավ Ս. Գրիգորի ձեռքով, և Կեսարիայէ ձեռնադրութիւն ընդունած ըլլալը երբեք նվիրապետական կախում ունեցած կամ անոր ենթարկված ըլլալու փաստ մը չէ»[194]։

Ու կեղրակացնե, թե «Ս. Լուսավորչին Կեսարիո արքեպիսկոպոսեն ձեռնադրութիւն ընդունիլը պետք է որևէ պատահական պարագայի վերագրել, որ իրավական կամ իրավասական նշանակութիւն մը չունի։ Թերևս նույնինքն Ս. Լուսավորչին անձնական մեկ փափագեն հառաջ եկած է, քանի որ Կեսարիո մեջ եղած էր անոր դաստիարակութիւնը։ Իսկ այս պարագայն չի կրնար երբեք ծառայել իբրև եկեղեցական հարաբերութիւնները ճշտելու որոշ փաստ մը»[195]։

Հայ Եկեղեցվո կապը մյուս եկեղեցիներուն հետ բազմիցս ծեծված հարցերեն մեկն է։ Օրմանեան կգտնե, թե եղբայրական կապեր տարբեր ազգային եկեղեցիներու միջև գոյութիւն ունեցած են առաջին իսկ պահեն։ Բոլոր եկեղեցիներու մասնակցութիւնը առաջին երեք տիեզերական ժողովներուն՝ մեծագույն փաստն է ադոր։ Եվ Հայ Եկեղեցին մաս կազմեց այդ եղբայրական կապին, մասնակցած ըլլալով տիեզերական այդ երեք ժողովներուն, 325-ին Նիկիո, 381-ին Կոստանդնուպոլսո և 431-ին Եփեսոսի մեջ։

Հայ ժողովուրդի դիրքը Քաղկեդոնի ժողովին հանդեպ՝ առաջին ճեղքը կբանա։ Մեզ հեռուները կտանի պարզել պատճառները, որոնք արգելք եղան Հայ Եկեղեցվո Քաղկեդոնի ժողովին մասնակցելու 451 թվականին, և հետագային մերժեցին զայն ճանչնալ։ Ըսենք միայն, որ առաջին երեք տիեզերական ժողովներեն հետո, այլևս այդ անունով հավաքված ժողովները զուրկ եղան քրիստոնեական եղբայրությունը պահպանելու բնույթեն, և հետևաբար, ինչպես կրսե Օրմանյան, «առանց հիմնական պատճառի չէր որ Հայոց Եկեղեցին իրավունք ունեցավ Եփեսոսի ժողովը իբր վերջին տիեզերական նկատել և առչև անցնիլ, որովհետև անով վերջացավ բոլոր գլխավոր եկեղեցիներու համակարծիք համամտության շրջանը։ Ասով կարդարանա այն համոզումն ալ, թե ընդհանուր եկեղեցվո համաձայնությունը Եփեսոսի ժողովեն հետո խանգարվեցավ և ժողովներ իրենց հեղինակությունը կորսնցուցին»[196], որովհետև անոնք սկսան դառնալ այլևս աթոռներու միջև վեճերու և փոխադարձ հավակնությանց կրկես։

Ըստ Օրմանյանի «Ծիծաղելի կդառնան ուրեմն հերետիկոս կամ հերձվածող մակդիրները, զորս Օրթոդոքս և Կաթոլիկ եկեղեցիները սիրած են տալ Հայ Եկեղեցիին, մակդիրներ, որոնք կկոթնին այն մեղադրանքին վրա, թե Հայ Եկեղեցին քաշված է եկեղեցիներու ընտանիքեն, մասնակցած չըլլալուն կամ հետագային հարիլ չուզելուն համար Քաղկեդոնի ժողովին։

Օրմանյան կրսե, թե եկեղեցիներու այդ ընտանիքը ինքնին քայքայված էր և վերջապես պիտի կազմալուծվեր Նիկիո երկրորդ

---

193 «Հայոց Եկեղեցին», էջ 29։

194 Անդ, էջ 33։

195 Անդ, էջ 36—37։

196 Անդ, էջ 181։

ժողովեն հետո, երբ երկու մեծ եկեղեցիները, որոնք հայերը հերձվածող կհռչակեն, իրենք իսկ պիտի չկարենային ապրիլ եկեղեցիներու ընտանիքին մեջ։ Արդարև, Օրթոդոքս Եկեղեցին Քաղկեդոնեն հետո 3 ժողովի ևս մասնակցեցավ,— 553-ի և 681-ի Կոստանդնուպոլսո ժողովներուն և 787-ի Նիկիո երկրորդ ժողովին, մինչ Կաթոլիկ Եկեղեցին 13 ժողովներ ևս դումարեց առանձին, շարունակելով զանոնք տիեզերական ճանչնալ։

Հայերը հերձվածող ցույց տալու համար օտարներուն, մեծագույն փաստն է միաբնակ հռչակել հայերը, հարց, որ դարերն ի վեր սպառած է այնքան կիրք ու թուղթ, և որուն ամոթ է նույնիսկ անդրադառնալ մեր օրերուն։ Ըսենք միայն, որ այդ որակումը կըլլա գլխավորարար այն պատճառով, որ հայերը չմասնակցեցան Քաղկեդոնի ժողովին, ուր պիտի նզովվեր Եվտիքեսը մեկ բնություն միայն ճանչնալուն համար Քրիստոսի մեջ, մինչ, ըստ Օրմանյանի, «Հայ Եկեղեցվո ընդունած և պաշտպանած միաբնակությունը Եվտեսոսի ժողովին հաստատած միությունն է, և ոչ Եվտիքեսի վարդապետածը, որոնք էապես կտարբերին։ Եվտիքեսի անունն ալ պաշտոնապես և հանդիսապես կնզովվի Հայաստանյայց Ուղղափառ Եկեղեցվո կողմեն, Արիոսի, Մակեդոնի և Նեստորի անուններու կարգին, և հնար չէ զայն իբր եվտիքական ամբաստանել, առանց տգիտության մեղադրանքի ներքև իյնալու, եթե չարամտություն ալ ըսել չուզենք»[197]։

Հատկանշական կետերեն մեկը, զոր Օրմանյան կգտնե Հայ Եկեղեցվո վարդապետության մեջ, անոր պարզությունն է, բավականացած երեք տիեզերական ժողովներով և անոնց հռչակած վարդապետությամբ, դավանաբանական այլազան տեսություններ չհորինելով ինքն իր ծոցին մեջ։ Հայ Եկեղեցին հավատացյալը չի մոլորեցներ մանվածապատ վարդապետությանց լաբյուրինթոսին մեջ։

Օրմանյանի կարծիքով, «Հայ Եկեղեցվույն ընդունած դավանական հավատալիքներուն քիչությունը պետք չէ որ պատահական պարագայի, ոչ ալ անխորհուրդ պատահարի մը վերագրվի։ Այդ բանը վարդապետական ուղղության մասին ընդունած՝ խոհական սկզբունքի մը հետևանք է»[198]։

«Հայոց Եկեղեցին,— ըստ Օրմանյանի,— դավանական կետերու նկատմամբ իբրև կանոն կընդունի՝ նվազագույն չափին և անհրաժեշտ պահանջին սահմաններեն անդին չանցնիլ, և կսիրե խստագույն պահպանողության հավատարիմ մնալ։ Այն մեծ սկզբունքը, որ Արևմտյան եկեղեցվո հետևողներեն մոռացության տրված է, Հայոց Եկեղեցվույն մեջ անխախտ և գործնական օրենք եղած է»[199], այսինքն «միութիւն ի կարևորս, ազատութիւն յերկրայականս և սիրելութիւն յամենայնի»։

Օրմանյան կընդունի սակայն, որ Հայ Եկեղեցին չէ մնացած իր սկզբնական պարզության մեջ, և իր ծոցը թափանցած են դարերու ընթացքին խորթ տարբեր՝ առհասարակ պարագաներու հարկադրանքին տակ։

«Հայոց Եկեղեցին ուրիշ եկեղեցիներեն շատ ավելի պատճառներ ուներ ժամանակներու ազդեցությունեն այլայլություններ կրելու,— կգրե Օրմանյան։— Որովհետև նա շատ դարերն ի վեր, մեկ կողմե յուր մեկուսացած դիրքին մեջ զուրկ էր այն նպաստավոր միջոցներեն՝ զորս հառաջդիմությունը մարդկային ընկերության կընծայեր, և մյուս կողմե Արևելքին մեջ տեղի ունեցած հարվածներուն և արկածներուն խաղալիք դարձած, ներհակընդդեմ ազդեցությանց ձեռք մնացած, և հակառակ ակնկալություններով օրորված, չուզելով ալ կկրեր այդ ազդեցությանց ներգործությունները։ Իրոք ալ երբեմն հունական ազդեցության ետևեն գնաց, երբեմն ալ լատինական ազդեցության հետևեցավ. երբեմն բռնությամբ և զորությամբ ստիպվեցավ, երբեմն ալ ակնկալությամբ և հուսադրությամբ հրապուրվեցավ. և այս պատճառներով պարտավորվեցավ ընդգրկել կարծիքներ, ընդունիլ տեսություններ, գործադրել կերպեր, և որդեգրել սովորություններ, որոնք իրեն օտար էին։ Շատ մը մանրամասնություններ, ոչ միայն օտար, այլև օտարախորթ, գրեթե անդգալի կերպով սպրդեցան Հայ Եկեղեցվո ծիսական սովորությանց և վարդապետական տեսությանց մեջ»[200]։

Օրմանյան պարծանքով կհիշէ Հայ Եկեղեցվո ազատական ոգին, սկիզբեն մինչև մեր օրերուն, քրիստոնեական լայնամտության ոգի, որուն չես հանդիպիր օտար եկեղեցիներու մեջ։

Ան կըսե արդարև, թե մինչ «հոռմեադավան անձ մը ամեն կողմեն պարփակված, չի կրնար այսօր բաց կողմ մը գտնել՝ ուսկից կարենա յուր անձնական կարծիքներուն անցք տալ, և ոչ ալ ասպարեզ մը, որուն մեջ կարենա յուր ուսումնասիրությունները կատարել։ Պետք է պատճառաբանելի հրաժարի, մինչև իսկ յուր իմացականության կիրառությենեն ալ զգուշանա, որովհետև անհնար է իրեն որևիցե կրոնական կետի մը վրա խորհրդածել, առանց յուր ճամբուն վրա

197 «Հայոց Եկեղեցին», էջ 136։

198 Անդ. էջ 130։

199 Անդ, էջ 138։

200 Անդ. էջ 150։

դավանական կանոնի մը հանդիպելու, որ վերջնականապես կփակէ ուսումնասիրութեանց ասպարէզը», «Հայ եկեղեցին երբեք հավակնություն չէ ունեցած՝ յուր որոշումներուն դավանական հավատալիքի ուժը տալ, և ոչ ալ իբր հերետիկոսներ և հերձվածողներ դատապարտած է այն եկեղեցիները՝ որ իրեն ընդունած վարդապետության չեն համակերպիր»[201]։

Հայ եկեղեցվո այս լայնախոհ ոգին, կրսե Օրմանյան, բարիք չէ բերած իրեն. «Ձենք քաշվիր հայտարարել, թե թուլատու ներողամտության և լայնախոհ ազատամտության հոգին, որ Հայոց Եկեղեցվուն ընդունած դրության հիմնակետը կկազմե, հաճախ իրեն դեմ եղած և իրեն վնասակար եղած է։ Որովհետև այդ դրության հետևանքն եղած է այն հաշտողությունը, զոր օտար եկեղեցիներու քարոզիչները դտած են յուր հավատացյալներուն մեջ, և որով մարդոցությունը ընդարձակված է»[202]։

Օրմանյան, ըսելե հետո, թե հայ եկեղեցին իր հավատացյալներուն երբեք չէ քարոզած, որ Հայ եկեղեցիին դուրս փրկություն չկա, կավելցնե, որ «քրիստոնեության գաղափարին այդ լայնախոհ ըմբռնումը դյուրավ համոզեց հայազավան հավատացյալը, օտար դավանության եկեղեցիներուն անցնել, երբոր տեսավ, որ կրնար յուր արտաքին և նյութական շահերը ապահովել կամ ընդարձակել առանց ներքին և հոգեորական շահերը վտանգելու»։

«Այդ ազատամիտ ըմբռնումն էր,— կրսե Օրմանյան,— որ կրացատրե օտար եկեղեցիներու քարոզիչներուն ունեցած հաջողության գաղտնիքը, որ Հայ եկեղեցվո ծոցը շարունակ երկպառակություններ և անջատումներ դյուրացուց, և որ հայության միության և ամբողջության շինվածը վտանգեց»։

Բայց հակառակ, որ Հայ Եկեղեցին կտեսներ, թե ինչ անախորժ և աղետալի հետևանքներ հառաջ կուգան իր թուլատու ներողամտությենեն, «սիրեց հաստատուն մնալ,— կրսե Օրմանյան,— աստվածաբանական լայնախոհության և եկեղեցական ազատամտության սկզբունքներուն վրա»[203]։

Օրմանյան ուշագրավ կգտնե նույնպես, որ Հայ եկեղեցին անսխալական չի հռչակեր իր Պետը, ոչ ալ միահեծան տերը անոր։ Ասկե դատ այն ապակեդրոնացման դրությունը, որ հիմը կհանդիսանա Հայ եկեղեցվո կազմակերպության, կենսունակ պահած է զինքը։

«Հայ եկեղեցվո նվիրապետության դասակարգերուն և եկեղեցական աստիճաններեն յուրաքանչյուրին հատկացված պաշտոնները,— կգրե Օրմանյան,— ընդհանրապես կենդրոնացման ձևով չեն. որովհետև յուրաքանչյուրը ազատ և սեփական իրավունքներ կվայելե, իրեն բնական կամ կանոնական պաշտոնները կատարելու, առանց բարձրագույն աստիճանի վերապահության կամ արգելքին ենթարկվելու։ Իսկ վերագույն աստիճանին հսկողության իրավունքը կգործադրվի, ամեն անգամ, որ ենթարկյալը պետք կունենա վարանմանց լուծում կամ դժվարությանց խորհուրդ փնտռելու. կամ երբոր արտաքին ոտնձգության պատճառով միջամտությունը անհրաժեշտ կդառնա. և վերջապես երբ մեծավոր գտնվողը կհարկադրվի զեղծում մը ուղղել և ընդհանուր շահ մը պաշտպանել։ Թողոքելու իրավունքը համարձակ է՝ ամեն աստիճանի դեմ բարձրագույնին դիմելով»[204]։

Օրմանյան ձգտած է վեր հանել մանավանդ ժողովրդավար ոգին, իբր հիմն իսկ Հայ եկեղեցիին և գաղտնիքը այն սերտ կապին, զոր հայ ժողովուրդը ունեցեր է իր Եկեղեցիին հետ, այն դերին, զոր Հայ եկեղեցին կատարած է հայ ժողովուրդի կյանքին մեջ։

Օրմանյան Հայ եկեղեցվո խորթ կգտնե կղերապետական ոգին, որուն վրա կհիմնեն օտար եկեղեցիներու պետերը իրենց բովանդակ հմայքը. «Հայեր իրենց կղերը իրրև եկեղեցվո բացարձակ տերն ու տիրողը չեն նկատեր։ Եկեղեցին իրրև հաստատություն առնված ատեն, նույնպես եկեղեցվո հավատացյալներուն կպատկանի, որչափ եկեղեցվո պաշտոնյաներուն։ Այդ սկզբունքին զորությամբ, հավատո պահանջներեն և խորհրդոց մատակարարութենեն դուրս, որոնց համար ձեռնադրություն և աստիճան անհրաժեշտ է, եկեղեցվո վարչության և մատակարարության վերաբերյալ գործերը աշխարհական տարրին մասնակցությամբ կամ գործակցությամբ կկառավարվին»[205]։

Համերաշխությունը, որ տիրած է հայ ժողովուրդին և իր եկեղեցիին միջև, արգասիքը կնկատե Օրմանյան այդ ժողովրդավար կարգերուն Հայ եկեղեցվո ծոցին մեջ. «Այդ ամեն ծանոթությունները տալեն ետքը իրավունք կունենանք եզրակացնել, որ բոլոր քրիստոնյա եկեղեցիներուն մեջեն, Հայ եկեղեցին է, որուն մեջ ժողովրդական հոգին ավելի ճշմարտությամբ և ավելի ընդարձակությամբ կփայլի։ Նա բոլորովին օտար է՝ եկեղեցվո մեջ կղերական կամ քահանայա-

201 «Հայոց Եկեղեցին», էջ 133—134։
202 Անդ, էջ 141։
203 Անդ, էջ 142։
204 Անդ, էջ 165։
205 Անդ, էջ 180—181։

կան բացառիկ տիրապետություն հաստատելու դրութենեն, որ այնչափ վնասակար եղած է կաթոլիկ Եվրոպիոյ, և եղած է այն համբերաշխությունը, որ պետք է տիրեր Եկեղեցվո պաշտոնյաներուն և հավատացյալներուն, հոգևոր հովիվներուն և հոտերուն միջև»[206]։

Օրմանյանի կարծիքով Հայ Եկեղեցին իր ժողովրդավար նկարագրին կպարտի նաև իր ուժն ու կենսունակությունը. «Հայաստանյայց Ուղղափառ Եկեղեցին ժողովրդական նամ աշխարհական տարրին իրեն հետ գործակցությունը ապահովելով, առչեն առավ այն երկու վնասներուն, որոնք Եկեղեցվո կացությունը կվտանգեն Արևմուտքի մեջ. ասոնցմե մեկն է կղերականությունը աղգային գործոց մեջ, և մյուսը անտարբերությունը կրոնական գործոց հանդեպ»[207]։

Բերտրան Բարեյլ ինքն ալ կանդրադառնա առոր իր հառաջաբանին մեջ, ըսելով որ Հայ Եկեղեցվո առավելություններեն մեկն է իր ժողովրդավար ոգին և որ «գաղափարներու ազատամտությունը բացարձակապես սեփական է Հայոց Եկեղեցվույն, և հետևանք է անոր ժողովրդական կազմակերպության»[208]։

Օրմանյան չէր կրնար բացառիկ տեղ չտալ բոլոր այն փորձերուն, որոնք եղած են նախ Օրթոդոքս և հետո Կաթոլիկ Եկեղեցիներու կողմե Հայ Եկեղեցին ենթարկելու համար իրենց։ Այդ փորձերը իրենց բոլոր մանրամասնություններով պատմված են «Աղգապատում»-ի մեջ, բայց զանոնք համառոտակի կներկայացնե նաև «Հայոց Եկեղեցին», շեշտելու համար մանավանդ, որ Հայ Եկեղեցին երբեք ալ դեմ չեղավ հասկացողության գալու օտար եկեղեցիներու հետ հանուն ընդհանուր համերաշխության մը, որպիսին գոյություն ունեցեր էր մինչև Քաղկեդոն։

Օրմանյան կըսե, թե «դժբախտաբար Հունական և Լատինական եկեղեցիներ, իրենց քաղաքական և կենցաղական դիրքերուն առավելութենեն օգտվելով, այն համոզմամբ վարվեցան, թե եկեղեցիներու միաբանությունը ուրիշ կերպով չի կրնար իրականանալ, բայց եթե ուրիշները իրենց եկեղեցվույն հնազանդեցնելով։ ... Հայը թե՛ մեկին և թե՛ մյուսին կողմանե եղած առաջարկությանց հանդեպ, երբեք բանակցությանց մտնելե չքաշվեցավ, թեպետև գրեթե միշտ յուր ակնկալությանց մեջ հուսախաբության հանդիպեցավ։ Այնուհանդերձ առանց ձանձրանալու միշտ վերադարձավ միաբանության և հաշտության առաջարկներու վրա բանակցիլ, որչափ ալ անոնց հաջող ելք ունենալուն ակնկալությունն ու վստահությունը չուներ»[209]։

Օրմանյան չէր կրնար չծանրանալ միաբանական փորձերու պատրվակին տակ սարքված դավերուն առթիվ Հայ Եկեղեցվո ունեցած դիրքին վրա ալ։ Օրմանյան կրսե անկողմնակալորեն, որ եթե Հայ Եկեղեցին իրենց ենթարկելու փորձերը Բյուզանդիոնեն ու Հռոմեն կուգային առհասարակ, Հայ Եկեղեցվո հոգևոր պետերուն մեջ ալ պակաս չեղան, տարբեր շրջաններու մեջ, միաբանության համախոհներ, բայց հակառակ ագոր, Հայ Եկեղեցին կրցավ պահպանել իր ինքնուրույնությունը։

«Հիրավի պետք է զարմանալ,— կրսե Օրմանյան,— երբոր ոք դիտե Հայոց Եկեղեցվույն ընթացքը. մեկ կողմեն միաբանության համար ըրած ձեռնարկները և մյուս կողմեն յուր դավանության վրա հաստատամտությունը։ Իրոք ալ առեղծվածական պետք էր սեպել այդ ընթացքը, եթե նկատի յառնվեր անոր գերանդանցապես թույլատու և ներողամիտ ուղղությունը։ Հայ Եկեղեցին միշտ բարեմտությամբ ընդունած է միաբանության առաջարկները, քանի անգամ որ իրեն ներկայացած են. միշտ հեռացած չէ յուր ինքնուրույն և առանձնահատուկ կացության դիրքենե»[210]։

Եվ այս պարդ այն պատճառով, որ «Հայոց Եկեղեցին միաբանությունը հասկցավ միշտ, բառին ճիշտ և սեղմ նշանակությամբ։ Նա միաբանություն ըսելով, ուզեց եկեղեցիներու միջև ունենալ հոգևորական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն, և իրարու դիրքին հանդեպ հարգանք. յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ազատություն, և ամենուն վրա տիրապետող քրիստոնեական սուրբ սերը։ Նա երբեք չուզեց հանդուրժել, որ միաբանությունը տիրապետության փոխվի, և մարդոբսության վերածվի»[211]։

Օրմանյան, ակնարկելով դժնդակ պահերուն, զորս ապրեցավ Հայ ժողովուրդը, կրսե, թե ան պետք զգաց միշտ զորավոր պաշտպան մը ունենալ քրիստոնյա իշխանությանց մեջեն. «Ահա այդ նպատակով է, որ միաբանության փափագներ կսնուցանեին և ձգտումներ կմշակեին, բայց երբեք հանձնառու չեղան կրոնական տիրապետության ալ ենթարկվիլ, և ոչ ալ հրապույրներով որսացվիլ։ Այս է բուն պատճառը, որու համար միշտ առանձնացած մնացին, և իրենց դավանական և կազմակերպական ավանդությանց վրա պնդեցին։ Որչափ ալ միաբա-

206 «Հայոց Եկեղեցին», էջ 185։
207 Անդ, էջ 186։
208 Անդ, էջ 10։
209 Անդ, էջ 80։
210 Անդ, էջ 79։
211 Անդ, էջ 80։

նութեան մեջ տեսան իրենց կենցաղական և քաղաքական շահերուն համար փրկութեան ակնկալութիւններ, բայց նոր քաշվեցան երբոր խնդիրը իրենց քրիստոնեական և կրոնական սկզբունքները զոհելու կետին մոտեցան»[212]։

Օրմանեան չուրանար, որ հայ եկեղեցականութեան մեջ ալ գտնված են գեմքեր, որոնք չեն մնացած իրենց կոչումին բարձրութեան վրա և հավատարիմ չեն մնացած Հայ Եկեղեցվո վարդապետութեանց և ավանդութիւններուն. բայց կշեշտե, որ անոնք ի վիճակի չեն եղած Հայ Եկեղեցին շեղեցնելու իր հիմնական դիծեն ու պատմական դերեն։

«Համարձակ կհայտարարենք ես, թե վարդապետներ և եպիսկոպոսներ, և մինչև իսկ կաթողիկոսներ ալ գտնվեցան, որ Հայ Եկեղեցվո նախնական ավանդութեանց և սկզբանց հակառակ խոսեցան կամ գրեցին։ Բայց ասանկներուն տեսութիւնները իրենց անձնականեն անդին չէին կրնար անցնիլ, և իրենց տարաձայնութիւնը չէր կրնար խախտել Հայ Եկեղեցվո հիմնական դավանութիւնը, որ փոփոխելի կետ մը չէ»[213]։

«Հայոց Եկեղեցին» ֆրանսերեն հորիներ էր Օրմանյան[214]։ Պարզվեցավ սակայն, որ Հայ Եկեղեցին ինք ես պետք ունի ինքզինք ճանչնալու նոր օրերու մեջ։ Մոռցած էր ան ալ ինքզինքը, և իր հոգևորականները զայն կարենալ սահմանելու համար լրիվ՝ պետք էր թափառելի մատյաններու մեջ։ Ամեն կողմե իրեն ուղղված գիմումներ ստիպեցին Օրմանյանը հայուն ձեռքն ալ տալ իր հավատքին բանալին[215]։ Հայերենը ավելի շատ վերածում մրն էր ֆրանսերեն բնագրեն քան թարգմանութիւն մը, որովհետև Օրմանյան ստիպված էր, ինչպես ինքը կրսե, «բացատրութեանց ոճը ոչ ես օտարներուն ուղղված ձևով պահելու, և ներբեմն ալ պետք էր մերայնոց նվազ ծանոթ խնդիրը ավելի ընդարձակ կերպով պարզաբանելու»։

Օրմանյանի երկը շուտով թարգմանվեցավ անգլիերենի և ռուսերենի ալ, և տակավ դարձավ անհրաժեշտ գիրք մը օտարին համար, ամեն անգամ որ պետք պիտի ունենար ան Հայ Եկեղեցվո մոտեն ծանոթանալու։

Մեջբերումները, զորս Օրմանյան կրնե օտարներե իր ստացած նամակներեն «Հայոց Եկեղեցի»-ի հայերեն հրատարակութեան հառաջաբանին մեջ, կվկայեն շահագրգռութիւնը, զոր Օրմանյանի երկը ստեղծած է գիտական աշխարհին մեջ։ Թազմաթիվ ուրիշներու կարգին, Հիասենթ Լուազոն, հեղինակութիւն մը ինքնին, կուգար վկայելու, թե «այդ գիրքը հիմնապես կճանչցնե շատ հին և սկզբնատիպ Եկեղեցի մը, որ պահված ու զարգացած է ուրիշ եկեղեցիներու ազդեցութենեն դուրս, անոնց գերիշխանութիւնը հրբեք չէ ճանչցած և հավատարմութեամբ պահպանած է արևելյան նախնական քրիստոնեութեան ժառանգությունը, ինչպես որ այն կազմված էր առաքյալներուն անմիջապես հաջորդող դարուն մեջ»։

«Հայոց Եկեղեցին» միակ երկն է այս պահուս, որով Հայ Եկեղեցին կներկայանա իր ծագման, իր վարդապետութեանց և իր ավանդութիւններուն մեջ, և կճշտե եկեղեցիներու ընտանիքին մեջ իր տեղը։

Իպուր չէր, որ Խորեն կաթողիկոս երբ իր ներկայացուցիչները կղրկեր, ուրիշ հրահանգ չտվավ բարձրաստիճան երեք հայ հոգևորականներուն, որոնք դինքը պիտի ներկայացնեին եկեղեցական այդ մեծ ժողովին մեջ, բայց եթե Շնորհալիի «Ընդհանրական»-ն ու Օրմանյանի «Հայոց Եկեղեցին» ուղեցույց ունենալ իրենց արտահայտութեանց մեջ, եթե հարկ բլլար խոսք առնել Հայ Եկեղեցվո անունով։

Եվ իպուր չէր նաև, որ Օրմանյանի «Հայոց Եկեղեցին» ես կոչվեցավ անցնելու Հռոմի կողմե նզովված գրքերու շարքը, ինչ որ պատճառ եղավ, ինչպես կրսե Օրմանյան, դրքին ավելի ես տարածվելուն, ու տարբեր լեզուներու ալ թարգմանվելուն այդքան կարճ ժամանակի մեջ։

Ըսենք անցողակի, թե մեր կարծիքով սխալ է «Հայոց Եկեղեցի» բացատրությունը, ինչպես սխալ են «հայոց լեզու», «հայոց գրականություն» և նման ձևերը։ Պետք է պարզապես ըսել «Հայ Եկեղեցի», «հայ լեզու», «հայ դրականություն» և այլն. փոխարեն՝ ճիշտ է ըսել «Հայոց պատմություն», ինչպես նաև «Հայոց աշխարհ», «հայոց թագավոր» և այլն։

Շահեկան բլլա թերես դիտել տալ այստեղ, թե Օրմանյանեն առաջ ալ գտնված են հոգևորականներ, որոնք պնդած են Հայ Եկեղեցին կոչել պարզապես «Հայ Եկեղեցի», առանց որևէ հավելվածական տիտղոս կցելու։ Հովհաննես Մկրյան հայանի քահանան, երբ կվարեր պատրիարքական փոխանորդի պաշտոնը Խրիմյանի պատրիարքության ատեն, քաջությունն ունեցած էր ետ վերադարձնելու ռուս դեսպանատան մեկ պաշտոնագիրը, որ ուղղված էր «Հայ Գրիգորյան Պատրիարքանին», մակագրելով, որ նման Պատրիարքարան մը գոյություն չունի, և ստիպելով այսպես դեսպանատունը, որպեսզի վերստին հղե ետ ստրկված պաշտոնագիրը, այս անգամ հասցեն ճշտված։

212 «Հայոց Եկեղեցին», էջ 81—82։
213 Անդ, էջ 150։
214 «L'Eglise Arménienne», Paris, 1910.
215 «Հայոց Եկեղեցին», գ. Պոլիս, 1911։

Դժբախտ բան է անշուշտ, որ քաղաքակիրթ կոչված այս դարուն մեջ դավանական վեճերը կշարունակեն թշնամի պահել քրիստոնյա եկեղեցիները և անընդհատ զանոնք իրարու դեմ լարել։

Բայց որքա՞ն կսկծալի է, որ այդ փցուն վեճերը կարծարծվին միևնույն ժողովուրդին ծոցին մեջ, ան ալ լուսավորության այս դարուն։ Մեկ կողմե մարդասիրության փորձերը, որոնք երբեք չեն դադրած, և մյուս կողմե գրավեճը մամուլի բեմեն, հանուն դավանական խտրության։

Այս տողերը գրողին համար չափազանց դառն էր այս էջերուն մեջ անդրադառնալ դավանական վեճերու ալ։ Որքան ալ ան ուզեր վերեն նայիլ հավատքի հետ կապված բաներու վրա, չէր կրնար լուռ անցնիլ տխուր պայքարներու վրայեն, որոնք դարերու ընթացքին բազմաթիվ էջեր լցրած էին մեր պատմության մեջ, աղարտած էին այնքան հոգերով ու ճիգերով, այնքան կրակիծներով ու վերելքի փորձերով լեցուն այս վերջին դարը, և կշարունակեն հայ ժողովուրդի ծոցին մեջ կիրք ու ոխ գրգռել մեր օրերուն ալ, երբ այնքան կարիք ունի այդ ժողովուրդը հոգեկան միության։ Պարագան բերավ, որ այդ բոլորին ստիպվեցանք անդրադառնալ Օրմանյանի նվիրված այս էջերու ընթացքին, նախ պատմելու առթիվ առաջին կեսը անոր կյանքին, երբ ինքն իսկ մաս առավ հայ կաթոլիկ համայնքը հուզող տխուր այն վեճերուն մեջ, ու հիմա, երբոր աչքն կանցնենք անոր գրչի վաստակը, և երբ կխոսինք գրքի մը վրա, որ Հայ Եկեղեցվո դիրքը կպարզե քրիստոնյա մյուս եկեղեցիներու շարքին։

6. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԾԵՍԵՐՈՒՆ ՄԵՋ

Օրմանյանի հիմնական մտահոգություններեն մեկն եղավ հայ Եկեղեցին ներկայացնել նաև իր ծեսերուն մեջ։ Ճիշտ է, որ ծեսը դավանանքի մը էությունը չի կազմեր, այլ անոր արտաքին մասն է միայն։ Բայց ծեսն է, որ դավանանքը կներկայացնե իր պաշտամունքին մեջ, ու կերպով մը կխորհրդանշե զայն։ Ծեսն է, որ կհատկանշե մանավանդ Եկեղեցին իր ուրույն տարբերությանց մեջ, և ավելի պարզ ըսելով, ծեսն է, որ կպահպանե եկեղեցիներու ազգային նկարագիրը։

Հայ Եկեղեցին շատ բան կպարտի ինքն ալ իր ծեսերուն, իր դարավոր գոյության պահպանման մեջ։ Առանց անոնց, վաղուց կորսնցուցած կըլլար ան իր ազգային դիմագծությունը։ Եթե Հայ Կաթոլիկ Եկեղեցվո մեջ, օրինակ, դեռ հոգեկան կապ մը կմնա հայ ազգության հետ, հայ ծեսը պահպանելուն կպարտի այդ։ Հեղեղեն շատ շուտ քշվեցան հայ կաթոլիկ այն համայնքները, որոնք կորսնցուցեր էին հայ ծեսը։

Իզուր չէր ուրեմն Օրմանյանի մտահոգությունը հայ ծիսագիտությունը ևս շարադրելու։ Անոր փափագն էր հայ ծեսերը տալ բառարանի մը ձևով, հոգևոր պաշտոնեության դյուրության համար։ Լավագույն ձևը պիտի ըլլար այդ ամենօրյա օգտագործման։

Օրմանյան չկրցավ իրականացնել սակայն իր այս փափագը։ Ավելի այժմեական և ավելի հիմնական նյութեր կլանեցին իր ժամանակը, և ատեն չթողուցին իրագործելու իր սրտին միշտ մոտիկ ուրիշ ծրագիրներ ալ, որոնցմե մեկն էր «Ծիսական բառարան»-ը, ինչպես որ ինքն ալ կըսե. «Ծիսական բառարան մը կազմելու դիտավորությունն ունիմ, որուն նմուշները Հիվանդանոցի Ընդարձակ օրացույցներուն մեջ ելեցած են, և ավելիին ալ փափագներս կձգտին, թեպետ կյանքի տարիներս հույս չեն ներշնչեր»[216]։

Արդարև, իր պատրիարքության օրերուն, Ազգային հիվանդանոցի Ընդարձակ օրացույցներուն մեջ 1905-են սկսյալ չորս տարի հաջորդաբար նմուշներ տված էր «Ծիսական բառարան»-են։

«Ծիսական բառարան»-ի շարքը սկսելու առթիվ Օրմանյան կգրեր. «Եկեղեցվո արարողության պատկանյալ կետեր ամեն հավատացյալի ծանոթ են, բայց վերիվերո կերպով միայն, իսկ ասոնց բացատրություններն ու նշանակությունները միշտ հետաքրքրական նյութ մը կազմած են ամենուն համար։ Տերունական տոներու պարագաները, տոնված սուրբերու կյանքն ու գործերը, արարողությանց ձևերը և մեկնությունները, սպասներու և զարդերու վերաբերյալ տեղեկությունները, տոմարական գիտելիքները և այլն մեծահատոր գիրք մը կազմելու բավական նյութ կրնային մատակարարել, եթե լիակատար Ծիսական բառարան մը ուզեինք կազմել»[217]։

Շուրջ 60 էջերու մեջ ներկայացնելի հետո ընդհանուր տոները, կիսատանա ուրիշ անգամ եկեղեցական սպասուց ու զարդուց, կամ եկեղեցական արարողությանց ու պաշտամանց, և կամ Եկեղեցվույն տոնած սուրբերուն ճյուղերն ալ քաղել, և օր մը ամենքը ի մի խառնվելով «Ծիսական բառարան» մը ու-

---

216 «Խոհք և խոսք», էջ 418։

217 «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1905, էջ 319։

նենալ ի դյուրություն եկեղեցասեր ժողովրդյան»[218]։

1905-ի «Տարեցույց»-ին մեջ Օրմանյան տվավ «Միսական բառարան»-ի Ա մասը՝ «Տերուն։ տոներ» (էջ 319—377)։

1906-ին «Միսական բառարան»-ի Բ մասի մեջ ներկայացուց «եկեղեցական սպասներն ու զարդերը» (էջ 81—204)։

1907-ին լույս տեսած Գ մասի մեջ ներկայացված էին «եկեղեցական արարողություններն ու պաշտամունքները» (էջ 213—254)։

1908-ին լույս տեսավ Դ մասը, ուր շարադրված էին «եկեղեցական արարողություններն ու պաշտամունքները» (էջ 73—104)։

Դժբախտ պարագաները այդտեղ ալ ընդհատեցին շարքը։

Իր թուղթերուն մեջ անշուշտ «Միսական բառարան»-են անտիպ մասեր դեռ կային, կամ դոնե նոթեր Արմաշի մեջ իր դասախոսությանց առթիվ դրի առնված։ Գնել եպիսկոպոս Գալեմքյարյանի կպարտինք այդ նոթերեն ոմանց հրատարակությունը։ Հետմահու։ Զանոնք նոթագրած էր Արմաշի մեջ Օրմանյանի «Հայ եկեղեցվո ծիսագիտությանն» դասերուն առթիվ։ Լույս տեսան Պոլսո «Հայ խոսնակ»-ին 1933-ի 1—12, 1934-ի 1—4, 7 և 9—12 և 1935-ի 1—3 և 9—12 թիվերուն մեջ, և բոլորն ալ կվերարերին ժամերգությանց։

Ամեն պարագայի տակ շահեկանութենե և օգտակարութենե դուրկ պիտի չըլլար հատորի մը մեջ ամփոփել ինչ որ տարեցույցներու և պարբերականներու մեջ կմնան ցրված։

7. ԱՆՑՅԱԼԸ ՊՐՊՏԱԾ ԱՏԵՆ

Ըսինք արդեն, թե Օրմանյան կրողը դատելու համար պետք է առավելապես պատմագիրը գտնել իր մեջ։ Պատմագիրն է, որ պատմության պիտի անցնե Օրմանյանու։ Իր աղմկալից կյանքը և իր հանրային գործունեությունը, պատմության հանձնելե ետքն ալ, վեճ պիտի հարուցանեն միշտ։ Իր գրչի վաստակն ալ ենթակա պիտի ըլլա թեր ու դեմ կարծիքներու։ Ամենեն ամուրը իր ճիգերուն մեջ պատմագիրն է, պրպտող, դասավորող, արտադրող անխոնջ մարդը, որ «Ազգապատում»-ի պես պատկառելի երկ մը կտակեց իրմե ետքի սերունդին։

Բայց ըսենք նաև, թե պատմագիրը ակամա է որ հասունցած է Օրմանյանի մեջ։ Ան պատմիչ դառնալու համար ստեղծված չէր, և ոչ ալ կոչված վարչական մարդ դառնալու, ինչպես որ հաճախ կխոստովանի ինքը։ Ուսուցիչը, ամբիոնի մարդն է, որ հուն փոխած է հետո, կյանքի հարկադրանքին տակ, նախ քշված վարչական ասպարեզներու, վերջն ալ մատենագրական աշխատանքներու մղված։ Առանձնացման իր տարիները ավելի ևս մխրճած են զինքը այդ աշխատանքներուն մեջ, և ի վերջո պատմագիրը հասունցուցած հանձին Օրմանյանի։ Ան պատմիչ դարձած է պրպտելու և գրելու իր մոլության շնորհիվ և շնորհիվ իր հիշողության ու դասավորելու սիստեմին։ Ադեկ է, որ իր պատմական երկերը լեցուն են նյութով ու մնթոդով, բայց անոնց կպակսի բան մը,— դեպքերուն ու դեմքերուն վերջնական համադրությունը ևս տալու բացառիկ ուժը։

Օրմանյան իր պատմական երկերուն մեջ կհանդիսանա թանկագին աղբյուր մը հայ ժողովուրդին և Հայ եկեղեցվո գարավոր կապերը պրպտողին համար. բայց ընթերցողը չի մղեր արդարև դեպքերն ու դեմքերը կապելու դարը խոռվող հուզումներուն հետ, զգալու դեպքերն ստեղծող և մարդիկը շարժման մղող մեծ ուժը, որ կբխի զարերու միջև մղված պայքարեն։ Դեպքերն ու դեմքերը անջատ նյութեր են կարծես իր մոտ, ու չեն հասուններ մեծ երևույթներու հնոցին մեջ, անոնց իբրև անմիջական մասն եվ այս, պարզ այն պատճառով, որ մեծ հավակնություններ չունեցան ի սկզբան պատմական իր հետազոտությունները։

Օրմանյանը պատմության գիրկը մղողը ամենեն ավելի Հայ եկեղեցին իր անցյալին մեջ լրիվ ճանչնալու բաղձանքը եղավ։

Պրպտող, հետազոտող, վերլուծող այն միտքը, որ Օրմանյանինն էր, չէր կրնար մխրճվիլ անցյալին բավիղներուն մեջ, Հայ եկեղեցվո ամբողջական պատմությունը հորինելու համար։ Իրմե առաջ ալ փորձեր եղած էին Հայ եկեղեցվո պատմությունը շարադրելու. բայց անոնցմե ոչ մեկը չէր տար Հայ եկեղեցվո լրիվ կյանքը իր ներքին դիմահեղումներով և իր հարակից դեպքերով։ Ցէիր զգար անոնց մեջ դերը, որը ունեցեր էր Հայ եկեղեցին հայ պատմության այլազան հանգրվաններուն մեջ։

Օրմանյան այդ դերն էր, որ ուզեց երևան հանել լրիվ։ Հայ եկեղեցին ներկայացնելե հետո իր դավանանքին և վարդապետությանց, իր կազմակերպության և իր ավանդութանց մեջ, պետք էր անոր կյանքն ալ պատմել մանրամասն։

«Ազգապատում»-ի հառաջաբանին մեջ ան կրսեր, թե իր նպատակն է «Ազգային Եկեղեցվո լիակատար պատմություն մը պատրաստել, եղելությունները դասավորել, դյու-

[218] «Ընդարձակ օրացույց», 1905, էջ 377։

ռիմաց ոճով բացատրել, և ընթերցանության դյուրամատչելի ընել։ Ասոր հետ մեկտեղ կուզենք Հայոց Ազգային Եկեղեցվույն հոգին ճշտությամբ ցոլացնել, հայադավան Ուղղափառ Եկեղեցվույն խսկությունը բացատրել, եղելությունները իրենց կապակցության մեջ ներկայել, լուսաբանության և կատարյալ ըմբռնման պետք եղած հարակից հանգամանքները ցուցնել։ Հայ Եկեղեցվո ընդդիմաբաններուն ըսածներն ու ըրածները անուղղակի կերպով ցրել. մեկ խոսքով պարզ պատմության շրջանակեն դուրս չելլել։»

Եվ սակայն Հայ Եկեղեցին հաճախ ընդելուզված է հայ ժողովուրդի պատմության հետ, մանավանդ այնպիսի շրջաններու, երբ ան միակ խարիսխն էր մնացած հայ կյանքին։ Առանց հայ ժողովուրդի պատմությունը տալու կարելի չէր Հայ Եկեղեցվո պատմությունը շարադրել, և Օրմանյան չէր կրնար հետևաբար մնալ իրեն համար դծած շրջանակին մեջ։ Պետք էր լայնալ, խորանալ։

Իզուր չէր, որ «Ազգապատում»-ը տիտղոս էր ընտրած Օրմանյան կոթողական իր գործին։ Ճիշտ է, իր երկը սկսած ատեն ան մտադրած էր Հայ Եկեղեցվո պատմությունը միայն տալ, բայց «Ազգապատում»-ը Հայ Եկեղեցվո պատմությենեն ավելի բան մը դարձավ ի վերջո, համայնապատկերը հայ ժողովուրդի դարերուն՝ Քրիստոսի թվականեն ասդին։

Այնպես որ «Ազգապատում»-ի երեք հատորները, որոնցմե երկուքը ինքն իսկ լուսընծայեց իր կենդանության Պոլսո մեջ 1912—1914 տարիներուն, և երրորդը տպվեցավ հետմահու Երուսաղեմի մեջ 1927-ին, կներկայացնեն շուրջ քսան դարերու այդ համայնապատկերը։

«Ազգապատում»-ը պատմագրության ուրույն սեռ մըն է, ինքնուրույն ինչպես տիտղոսն է։ Հեղինակը այդ սեռն ընտրած է Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի պատմությունը տալու համար համընթաց։ Իր հիմնական մտահոգությունն եղած է Հայ Եկեղեցվո պատմությունը տալ ու անոր հետ միասին Հայ Ազգին պատմությունն ալ սկսելով Հայ Եկեղեցվո սկզբնավորությենեն։ Իրականին մեջ ոչ Հայ Եկեղեցվո պատմությունն է ան, ոչ ալ Հայ Ազգինը։ Ավելի ճիշտ, Հայ Եկեղեցվո դարավոր կյանքին հաջորդական անցքերն է, որ կպատմե ան, հայոց պատմության անցքերուն հետ մեկտեղ քալելով, ու միևնույն ատեն հայ ժողովուրդի պատմության ալ հաջորդական դրվագները՝ Հայ Եկեղեցվո հետ անոնց առնչությանը մեջ։ Այս տեսակետով շտեմարան մըն է ան ավելի, որ բեղ լիառատ նյութեր կուտա, որպեսզի գուն ինքդ համադրես դեմքերն ու դեպքերը։

Թերինե՞ր. անշուշտ «Ազգապատում»-ն ալ ունի։ Բայց անոր թերիներեն շատերը արդյունքն են պայմաններուն, որոնց մեջ հորինված է ան։ Այլի կզարնե առաջին հերթին արխիվային նյութերու պակասը իբրև աղբյուր։ Օրմանյան առավելապես օգտված է տպագրված աղբյուրներեն, այսինքն գրքերե ու պարբերականներեն։ Բայց բացառիկ ձեռնարկ մը, որպիսին է «Ազգապատում»-ը, անհունապես պիտի շահեր, եթե հարուստ ըլլար անտիպ աղբյուրներով ալ, որոնք պիտի դային լուսաբանել բազմաթիվ մութ անկյուններ։

Թող ներվի նաև դիտել տալ, թե Օրմանյան անհրաժեշտ կարևորությունը ընծայած չէ Պոլսո Պատրիարքարանի և Օսմանյան պետության հարաբերություններուն։ Պոլսո նախկին պատրիարք մը պարտավոր էր իր հիմնական նպատակներեն մեկն ընել այդ, մանավանդ որ Պոլիսը բացառիկ դեր խաղացած է Հայ Եկեղեցվո պատմության մեջ և Օրմանյան ինքն իսկ մեծ տեղ տված է այդ դերը հատկանշող դեպքերուն։

Ճիշտ է, որ «Ազգապատում»-ը խմբագրած ատեն Պատրիարքարանի մեջ պահված հին փաստաթղթերը մատչելի չէին այլևս իրեն։ Ճիշտ է նաև, որ այդ փաստաթղթերը ինքնին լրիվ չէին, պատկերացնելու համար անցյալը դարավոր հաստատության մը, որպիսին էր Պոլսո հայոց Պատրիարքությունը։ Բայց թերին միշտ թերի է, մանավանդ երկասիրության մը մեջ, որ կհավակնի Հայ Եկեղեցվո ամբողջական կյանքը տալ իր հարակից անցքերով և որ ստիպված էր հայ և օտար աղբյուրներու կողքին, որոնք օգտագործված են աննախընթաց լափով մը, երբեմն դիմում ընել ուղղակի աղբյուրներու ալ, և, ինչո՞ւ չէ, նաև թուրք աղբյուրներու, զորս դժբախտաբար միշտ ալ արհամարհած ենք։

Ավելցնենք նաև, որ «Ազգապատում»-ի մեջ մշակված նյութերը միշտ չէ, որ ծավալ գրված են իրենց կարևորության համեմատությամբ։ Հեղինակը ստիպված է ի ձեռին ունեցած աղբյուրներու թույլատրած չափով տեղ տալ իր շարադրած դեպքերուն, և ադկե է, որ բացառիկ կարևորությամբ անցքեր համեմատաբար նվազ տեղ գրված են, և փոխադարձաբար։

Երուսաղեմի դեպքերուն արված բացառիկ տեղը մասամբ հասկանալի է։ «Ազգապատում»-ի Գ հատորը, ուր տեղ գտած են այդ դեպքերը, խմբագրվեցավ Երուսաղեմի մեջ, ուր մեկ կողմե չկային աղբյուրները, որոնցմե պիտի կարենար օգտվիլ երբ դայն Պոլիս շարադրեց, և մյուս կողմե առատորեն փռված էին իր առջև նյութերը, որոնք կապ ունեին Երուսաղեմի դեպքերուն և անցքերուն հետ։

Նկատելի է դարձեալ, որ աղբյուրներու պակասը Օրմանեանը զրկած է անհրաժեշտ կարևորությունը տալու թեմերուն և գաղութներուն։ Գաղութներու պատմությունը բազկացուցիչ մասն է հայ ժողովուրդի պատմության, ինչպես որ թեմերը բազկացուցիչ մասն են Հայ Եկեղեցիին։ Առանց անոնց կյանքը ևս գիտնալու լրիվ, չենք կրնար ըմբռնել շատ բան նվիրապետական Աթոռներու ներքին տագնապներեն ու ճգնաժամերեն։

Տարբեր պայմաններու մեջ տարբեր կրնար շարադրվիլ «Ազգապատում»-ը։ Տարբեր խմբագրված պիտի ըլլար, օրինակ՝ այս կամ այն մասը, եթե հեղինակը իր տրամադրության տակ ունենար ձեռագրական այնպիսի նյութեր, որոնք ուղղակի կապված ըլլային համապատասխան դեպքին հետ և որոնցմե շատերը նոր է որ կհայտնվին կամ մատչելի կդառնան։

Երեմիա Չելեպին կամ Դարանաղեցին, օրինակ, որոնք պիտի կարենային թանկագին ատաղձ կազմել իրեն, իրադարձություններով այնքան հարուստ են ժէ դարը պատմելու համար, լրիվ ծանոթ չէին դեռ այն օրերուն իրենց երկերով։

Թերիներ ալ կան, որոնք վերագրելի են պատմության մոռնալու իր ձևին, զայն հանգրվաններու վերածելու իր ուրույն սիստեմին, և դեպքերը շարահարելու իր մեթոդին։ Որքան ալ մարդ ուզե հարգել հեղինակի մը նախասիրությունը իր պատմությունը շարադրելու ձևին մեջ, այնուամենայնիվ վաղուց անցած է այն շրջանը, երբ պատմությունը կհորինվեր մեծ դեմքերը առանց առնելով։ Որքան ալ մեծ դեր կատարած ըլլան անհատները տվյալ պահու մը, անոնք ամբողջ պատմությունը չեն. անոնք մեկն են միայն դեպքերուն ընթացք տվող ազդակներեն։

Ըստ կաթողիկոսներու բաժնելով «Ազգապատում»-ը, ճիշտ է։ Օրմանյան ուզած է, որ դեպքերը ժամանակագրական կարգով հետևին իրարու, և կարենաս իմանալ դյուրավ, թե այսինչ կամ այնինչ կաթողիկոսին օրով ինչեր տեղի ունեցած են։ Բայց պիտի չփոթիս, եթե ուզես կաթողիկոսներու տողանցքեն Հայ Եկեղեցվո պատմության իսկական հանգրվանները քեզ պատկերացնել։ Հայ Եկեղեցվո պատմությունը զարգացած է ոչ թե այս կամ այն կաթողիկոսին գահը բազմելուն հետևանքով, այլ շնորհիվ այն պայմաններուն, որոնց մեջ ապրած է Հայ Եկեղեցին տվյալ պահուն, և այն հուզումներուն, որոնց մեջեն անցած է հայ ժողովուրդը։ Լուսավոր պահերն ըլլան թե ճգնաժամերը, որոնք Հայ Եկեղեցվո պատմությունը կհյուսեն, առավելապես պտուղն են դարուն ու միջավայրին, և թյուրիմացություն է զանոնք բացառապես կապել օրվան գահակալին հետ։

Կաթողիկոսներու շուրջ կեդրոնանալու այս ձգտումին արդյունքն է, որ «Ազգապատում»-ի հեղինակը լավեն ավելի հետաքրքրված են հաջորդության հարցերը կաթողիկոսներու մահեն հետո, և գահակալներու միջև անշրպետ չձգելու մտահոգությունը։

Կան սակայն բիծեր, որ իր խառնվածքեն կուգան, և չեն կրնար աննշմար անցնիլ։ Անոնք հետևանքն են այն բանին, որ «Ազգապատում»-ի հեղինակը ստիպված էր տեղ հատկացնել և իրեն, վերջին շրջաններուն հասած ատեն, և նաև այն փոթորիկներուն, որոնց մեջեն անցավ։

Դժվար չէ սայթաքիլը բոլոր անոնց համար, որոնք կշարադրեն պատմությունը իրենց շրջանին, երբ մանավանդ իրենք ևս խառնված են իրենց պատմած դեպքերուն կամ անձնական կապերով կապված անոնց գլխավոր դերակատարներուն հետ։ Ավելի ևս դժվար է պարագան, երբ պատմիչը ստիպված է պաշտպանությունն ստանձնել ինքն իր գործերուն։

Հիշելե հետո Ներսես Աշտարակեցիի մահը 1857-ին, նախքան անցնիլը Մատթեոս Զուհաճյան կաթողիկոսին, որ 1858-ին հաջորդած էր անոր, այսինքն անցնելու առթիվ իր իսկ օրերուն, Օրմանյան հարկ կզգա բացատրել «պատմագիրին դերը, «Այլևս ինքզինքնիս կգտնենք ժամանակակից շրջանի մը մեջ, որուն գործիչներեն շատեր դեռ կենդանի են, և որոնք որ կյանքերնին կնքած են, տակավին կենդանի կմնան ամենուն միտքին և սիրտին մեջ։ Կզգանք, թե դժվարի և դժվարին դիրքի մը մեջ կգտնվինք, պարտավորյալ ըլլալով խոսիլ, իմա քննադատել կամ գնահատել այնպիսի անձեր, որոնց նկատմամբ դեռ կտիրեն մասնավոր կամ անձնական տեսություններե ծագած հակակրություններ կամ համակրություններ, և մինչև ատիճան մը չենք հավակնիր ինքզինքնիս ալ ազատ կարծել այդ զգացումներեն, մանավանդ որ մենք ալ իրր գործակից շփվեցանք շատերու հետ և իրր գործիչ ալ հանդիսացանք ասպարեզի վրա։ Այդ մտածումները շատերու արդելք եղած են իրենց դրությունները մինչև ժամանակակից շրջաններ հասցնել. ոմանք ալ մինչև իսկ անպատշաճ կարծած են ժամանակակից շրջաններու պատմությունը գրել, թողով որ ետեն եկողներ անկողմնակալ կերպով և առանց կիրքի և առանց անձնական տեսությանց եղելությունները կշռեն ու պատմեն։ Մենք այդ երկյուղած և երկյուղալից ընթացքին պիտի չհետևինք, զի պատմական եղելություններ պետք է ժամանակակիցներե, իմա գիտակից

և մասնակից անձերն վկայվին, որպեսզի տրամաբանական և իրավագիտական տեսակետով ալ ստուգության հավատիքը կրեն. և իրոք այ մեր հետազոտության մեջ միշտ ժամանակակիցներու, գոնե մերձակիցներու վկայության և գրության կդիմենք ստուգության փաստ գտնելու համար»[219]։

Ու հետո կավելցնե. «Բայց մյուս կողմանե անձնական կիրքերու կամ անհատական կարծիքներու ծառայած չըլլալու համար, բավական է եղելությունները իրենց հանդամանաց և հարաբերությանց մեջ պատկերացնել և որքան հնարավոր է շափավոր ըլլալ գնահատությանց և քննադատությանց մեջ, ոչ գովեստներ շռայլել և ոչ պարսավանքներ առատացնել, այլ թողուլ, որ ընթերցողներ և ապագաներ ազատ կերպով կշռեն գործերն ու գործիչները և կազմեն իրենց դատողությունները։ Այդ պիտի ըլլա մեր ուղղությունը և պիտի ջանանք որչափ կրնանք այդ մասին հավատարիմ և ճշտապահ մնալ»[220]։

Եվ սակայն Օրմանյան չկրցավ «հավատարիմ» և «ճշտապահ» մնալ միշտ, մանավանդ երբոր հասավ դեպքերուն, որոնց ինք ևս խառնված էր։

Բացառություններ են անոնք, որոնք կրնան անալաո նայիլ իրենց երեկվան գործերուն վրա և զանոնք զննել խստարիբ դատավորի մը պես, ու նույն պաղարյունությամբ դատել նաև իրենց շրջանի մարդիկը։ Թե որքան հաջողեցավ Օրմանյան պաղարյուն այդ դատավորը մնալ՝ պիտի տեսնենք «Խոհք և խոսք»-ին մասին խոսելու ժամանակ։

Հեղինակներ կան, որ պատմություն կշարադրեն հաճախ թեզի մը համար, ջրելու կամ ջատագովելու համար դեպք մը, երևույթ մը, տեսություն մը։ Փաստաբանն ու քարոզիչն են, որ իրենց կողքին կեցած, տուն կուտան իրենց։ Համոզված իրենց տեսակետին ճշմարտությանը, փաստեր ու կռվաններ կորոնեն, համոզելու համար և քեզ։ Օրմանյան այս հեղինակներեն էր։ Բավական է որ համոզում մը արդեն գրված է զայն, այլևս անոր գերին է ա՛լ, և ամեն հնարք կփորձե քեզ ևս գերի դարձնել անոր։

Եթե թեզի մը սիրույն դեպքերը խոսեցնելու իր մտահոգությունը այնքան ալ չի դայթակղեցներ քեզ երբ հին շրջաններն է որ կպատմե քեզի, երբ նոր օրերու կուգամեկ կողմե ավելի ևս կզրգռե հետաքրքրությունդ և մյուս կողմե քեզ կզգացնե, թե արդեն գերի ևս սկսած դառնալ իր նախասիրություններուն, թե ան կփորձե արդեն քեզի ալ ատելի դարձնել իր ատածները, և քեզ բռնի սիրցնել ով որ ինքը կսիրե։

Բոլոր այս թերությունները ոչինչով չեն նվազեցներ սակայն հիմնական արժեքը պատկառելի այս երկին։ «Ազգապատում»-ը մեզ կներկայանա իբրև թանկագին շտեմարան մը, ուր կրնանք հետևիլ Հայ Եկեղեցվո դարավոր կյանքին իր բոլոր հանգրվաններուն և դիմահեղումներուն մեջ։ Կրնանք հետևիլ և հայ ժողովուրդի կյանքին՝ Հայ Եկեղեցվո հետ ունեցած իր առնչությանց մեջ։ Ան մեզ կպարզե հետևաբար առաքելությունը, որուն կոչված էր Հայ Եկեղեցին զորավիգ հանդիսանալու համար հայ ժողովուրդի գոյության, ինչպես և պատնեշ՝ անոր ավանդության ու ապաստան անոր մշակույթին։

Տիտանական այս աշխատանքին ձեռնարկած ատեն, Օրմանյան ոչ ուղեցույց ուներ իր առջև և ոչ ալ աղբյուրներու պատրաստ գանձ։ Համադրական նման աշխատանք մը կատարեր էր Հ. Միքայել Չամչյան մեկուկես դար առաջ, հորինելով «Հայոց պատմության հոյակապ իր երեք հատորները, որոնք լույս տեսան 1784—1786 թվականներուն Վենետիկի մեջ։ Չամչյանի երկը առաջին փորձն էր հայ ժողովուրդի դարավոր կյանքը պատկերացնելու սկիզբեն մինչև իր օրերը, հիմնվելով բոլոր այն աղբյուրներուն վրա, որոնք ծանոթ էին մինչև այդ ատեն։ Բայց մեկուկես դարը, որ անցեր էր Չամչյանեն հետո, լույս աշխարհ էր հաներ անհամար նոր աղբյուրներ, որոնք հեգնանքով կնայեին ցարդ գիտցվածներուն վրա։ Եվ սակայն հրապարակ չէր իջած դեռ նոր գիտնական մը, որ հայոց անցյալը տար նոր համադրության մը մեջ։

Ժ Թ դարը հին արժեքները ցնցեց, բայց չկրցավ նոր շենք կառուցանել նոր առաղձներու վրա։ Հայոց պատմությունը միշտ պահված մնաց մշուշի ետին։ Խորենացին միշտ շարունակեց կախարդել մեր հայրենասիրությունը, թեև նոր աշխարհ մը դուրս եկած էր արդեն հողին տակեն։ Ոչ ոք, ոչ իսկ Ինճիճյան և Գաթրճյան ի վիճակի չեղան արխիվ նետել Չամչյանը, և նոր սերունդները միշտ դասագրքերով մնացին, որոնց մեջ ավանդությունը թմբուկ կդարներ։ Մատաթիա Գարաղաշյան իր «Քննական հայոց պատմությամբ» առաջին փորձն ըրավ ավանդություններու փլատակներուն վրա նոր շենք մը կառուցանելու, բայց նոր-նոր գյուտեր զայն ալ ետև ձգեցին։

Օրմանյան երբ անցավ սեղանին առջև, արդեն անցյալը իր քողը պատռած էր մասամբ, և հնարավոր կդարձներ ավելի ճշգրիտ տեսնել մեր երեկը։ Բայց չկար որևէ գիտական երկ, որ հայոց բովանդակ պատմությունը ընդգրկեր նոր հայտնությանց

[219] «Ազգապատում», Գ, էջ 3976,

[220] Անդ, էջ 3977։

յույսին տակ։ Հետևաբար ստիպված էր Օրմանյան Հայ Եկեղեցվո անցյալը լրիվ ուսումնասիրելու համար՝ հայ ժողովուրդի պատմությունը ուսումնասիրել նախ, գոնե այն դարերին սկսյալ, ուրկէ կսկսեր Հայ Եկեղեցվո պատմությունը։ Հայ Եկեղեցվո պատմությունը գրելու համար պետք էր ճշգրիտ գիտնար ան ուրեմն հայ ժողովուրդի պատմության վերջին զույգ տասնյակ դարերը, և սակայն ոչ մեկ համադրական գործ չուներ առջին, բացի Զամչյանեն, որ ոչ միայն կանգ կաուներ դարուկես առաջ, այլ իր պատմած շրջանին համար ևս ամբողջական չէր, ոչ ալ անկողմնակալ։

«Ուրիշ դժվարություն մըն ալ, որ մեր դիմացը կելլե,— կըսե Օրմանյան.— առաջնորդող պատմագիր մը չգտնվիլն է. դի ազգային ժամանակակից պատմությունը տակավին իր պատմաբանը ունեցած չէ, և կերպով մը այդ դատարկը լեցնելու կոչված կգտնվինք։ Պարտավորյալ պիտի ըլլանք թարթափել առձեռն հիշատակներ, պատահարար հրատարակված տետրակներ և լրագիրներու թերթեր, որոնցմե կատարյալ հավաքածուներ ալ չունինք մեր տրամադրության ներքև, ուստի ընթերցողները ներողամիտ աչքով պետք է նային մեր աշխատության վրա, եթե թերի կետերու կամ թերի բացատրված իրողություններու հանդիպին։ Չի անցյալին համար կարդարանալինք մեզի հասած հիշատակներուն կամ պատմություններուն պարունակին մեջ ամփոփվելով. բայց ժամանակակից անցքերու մասին կճանչնանք, թե ընթերցողներ և ապագաներ իրավունք կունենան մեղմե լիագույն և անթերի պատմություն սպասել։ Վերջապես իրրև աղբյուր պիտի ունենանք մեր անձնական հիշողություններն և հիշատակներն ալ. իբր գի պատմությանս կարգին պետք է առաջ բերենք այն եղելությունները, որոնց ներկա կամ մասնակից գտնվեցանք, և այն գործողություններն ալ, որոնց գլխավոր գործիչը և նույնիսկ պատասխանատու գործիչ եղանք հանրային պաշտոնավարությանց հետևանքով, որոնց կոչվեցանք և զորս կատարեցինք»[221]։

«Ազգապատում»-ը պատկառելի է իր օգտագործած աղբյուրներու թիվով ալ։ Հազվագյուտ են հեղինակներ, որոնք իրենց նյութին մշակման համար աչքե անցուցած ըլլան այդքան երկ, քամած ըլլան անկի հնարավոր հյութը և զայն հիշատակած ըլլան տեղին, ոչ միայն հնարավորություն տալով ընթերցողին քաղվածքը ստուգել, այլև ուսումնասիրողներու օգնելով աղբյուր հայթայթելու իրենց։ Եվ «Ազգապատում»-ի այս առավելությունը ավելի ուշագրավ կդառնա, երբ միտք բերենք պայմանները, որոնց մեջ Օրմանյան հորինեց իր երկը, այսինքն դժվարությունները աղբյուր ճարելու։

Մոլեռանդ իր սիրույն մեջ դեպի Հայ Եկեղեցին, չնայելով որ ուրիշ դավանանքի մը եկած էր անոր, Օրմանյան իր «Ազգապատում»-ին մեջ կպատմե ալեկոծությունները, որոնց մեջեն անցավ Հայ Եկեղեցին, հաջողելով սակայն անվթար պահել իր դիմագիծը, ի հեճուկս մարգորսության բոլոր փորձերուն, որոնք ոչ մեկը խաղաղ չթողուցին հայ ժողովուրդին վերջին տասնհինգ դարերեն, մերթ պարզապես խոռվելով Հայ Եկեղեցվո ներքին անդորրությունը, և մերթ ճակատագրական դառնալով հայ ժողովուրդին համար ալ։

Օրմանյան, հպարտ Հայ Եկեղեցվո կատարած գերով, չի վախնար «Ազգապատում»-ին մեջ պարզելու մեղի նաև տխուր պահերը, ուրկե այդ Եկեղեցին անցավ, և սայթաքումներն ալ, զորս երբեմն ունեցան իր վարիչները։

Տարիքը, ուր խմբագրված է երկը, տուժել չէ տված անոր հստակության և որդեգրած մեթոդին։ Միևնույն հարատևությամբ հասցուցած է իր ծրագրած կետին, այսինքն մինչև 1911, երբ աչքերը փակեր Իզմիրլյան։ Շահեկան էր Օրմանյանը կարգալ այդ թվականեն հետո անցած դեպքերուն մասին, «Ազգապատում»-ի շարունակության մեջ իսկ, թեև «Խոհք և խոսք»-ին մեջ ևս շատ նյութ կա Իզմիրլյանի մահվան հաջորդող վեց տարիներուն համար ալ։ Ամեն պարագայի մեջ, Օրմանյան կրցավ անձամբ իսկ լրման հասցնել իր ծրագրած մեծ գործը, զոր կվախնար չկարենալ լրացնել, և «Ազգապատում»-ի հառաջաբանին մեջ իր երկու ձեռնասուններուն՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի և Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի կհանձնարարեր լրացնել իր երկը, եթե աչքերը փակեր զայն ավարտելե առաջ. Կարապետ իրմե առաջ կմեռներ, իսկ Բարգենի կվիճակեր ցուցակները կազմել «Ազգապատում»-ի, Գ հատորին իբր հավելված, երբ ան լույս կտեսներ 1927-ին Երուսաղեմի մեջ հետմահու, մինչ առաջին երկու հատորները Օրմանյան ինքն էր լույս ընծայեր Պոլսո մեջ 1912—1914-ին։

Որքան ալ առօրյա ընթերցանության մատչելի գործ մը չըլլա «Ազգապատում»-ը և որոշ դժվարություն ևս ներկայացնե փնտռված նյութի մը գիմելու ատեն, և սակայն թանկագին պաշար մըն է ան ուսումնասիրությամբ պարապողներու համար։

(Շարունակելի)

221 «Ազգապատում», Գ. էջ 3977—3978։

ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱՔԻՐՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Շիրակ անունը կապվում է Սարմատական ցեղախմբի անվան հետ, իսկ Գումայրի կամ Կյումրի քաղաքի անունը՝ Քրիստոսից առաջ է դարում սարմատների կառուցած Գուն-յաս քաղաքի անվան հետ։

Շիրակի մասին պատմահայր Մովսես Խորենացին ավանդում է հետևյալը. «Արամայիս իր որդուն՝ բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ ազգով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, Հյուսիսային լեռան՝ Արագածի Թիկունքում, որտեղ շատ շրեր են հոսում, նրա անունով, ասում են, զավառը կոչվեց Շիրակ։ Ուստի թվում է, թե ճշտվում է գյուղացիների մեջ տարածված առասպելը, թե «Քո որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն» (Մովսես Խորենացի։ «Հայոց պատմություն», Երևան, 1961, էջ 104)։

Շիրակը պատմական Հայաստանի ղլխավոր զավառներից մին էր հետևյալ պատմական սահմաններով. հյուսիսից՝ Աշոցք—Տաշիր, արևելքից՝ Արագածոտն, հարավից՝ Թագրևանդ, արևմուտքից՝ Վանանդ։

Ըստ պատմահայր Մովսես Խորենացու վկայության (նույն տեղում, էջ 128), Տրդատ Մեծը Շիրակը պարգևում է Կամսարականներին, որոնք կոչվում են նաև «Տեարք Շիրակայ»։ Շիրակում Կամսարականների ոստանը Երվանդաշատն էր, որը հետագայում կոչվում է Մարմիտ։ Կամսարականների ժամանակ է, որ կառուցվում է Տեկորի հոյակապ տաճարը։ Ախուրյանի աջ ափին, Բարձր Բլուրի վրա, շինված էր նաև Կամսարականների հոյակապ դղյակը, որը Ե դարից ծանոթ էր որպես անառիկ ամրոց։

Ը դարի վերջին քառորդին, Կամսարականները, Շիրակը հանձնելով Բագրատունյաց նախարարության, տեղափոխվեցին Բյուզանդիա։

Բագրատունիներից հետո Շիրակը անցավ մի առժամանակ Զաքարյաններին։ Այնուհետև Շիրակին տիրեցին մոնղոլները։ 1639 թվականի պայմանագրով, Շիրակը անցավ Պարսիկներին, մինչև 1801 թվականը, երբ Վրաստանի հետ միասին Շիրակի մեծ մասը անցավ ռուսական տիրապետության տակ։ Այնուհետև Շիրակը մի առժամանակ կռվախնձոր դարձավ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, մինչև որ Թուրքմենչայի դաշինքով, 1828 թվականի փետրվարի 10-ին, Շիրակը անցավ ռուսներին։

Շիրակը հարուստ է պատմական հուշարձաններով, եկեղեցիներով ու անվանի վանքերով։ Շիրակում են գտնվում հետևյալ վանքերն ու եկեղեցիները.

1. Տեկորի եկեղեցին, Հովհան Մանդակունի երանաշնորհ կաթողիկոսի օրոք, Սահակ Կամսարականի կողմից շինված է Ե դարում։

2. Դպրեվանք կամ Կարմիր վանք, է դարում Ներսես Գ Շինող կաթողիկոսի օրոք, Թարսեղ Ճոն վարդապետի կողմից հաստատված, իսկ Ժ դարում վերականգնված և ճանաչված իր վանական ուսումնարանով, ինչպես վկայում է Ասողիկը։

3. Հռոմոսի վանք կամ Խոշավանք, Անիի հյուսիս-արևելյան կողմը, կառուցված է Հռոմոս գետակի ափին, որը թափվում է Ախուրյան գետը։ Ըստ Ասողիկի, «Ի գաւառին Շիրակայ Հռոմոսին կոչեցեալ վանք շինե-

ցաւ ի ձեռն Յովհաննէսի, որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւն, ևս առաւել յողորմածութեան զարդս։ Պանդուխտների և ճանապարհորդների և առհասարակ կարոտյալների պատսպարումը այս վանքի ավանդությունն եղել է, որ մինչ ցայսօր երևի», վկայում է Աստղիկը։ Վանքը առաջին անգամ շինվում է 936 թվականին Աբաս թագավորի կողմից և վերանորոգվում Հովհաննես Սրմբատյանի կողմից։ Հ. Ղ. Ալիշանը իր «Շիրակ» աշխատության մեջ հիշատակում է վանքի վանահայրերի անունները մինչև 1829 թվականը։ Վերջինն է Ստեփանոս եպիսկոպոս Ջախալյանը, որ և անցնում է արևելյան Շիրակ 1830 թվականին, իր հետ բերելով վանքի սրբությունները։

4. Արգինա վանք։ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը (972—990) ըստ Աստղիկի, Տրդատ ճարտարապետի կառուցմամբ, ի նմին դիւղ շինեաց զկաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք, զգմբեթարդ խորան երկնանման, հանդերձ ևս երեք եկեղեցեօքն նոյնաձև հրաշատեսիլ չքնաղագեղ յօրինուածովքն։ Հայրապետական Աթոռը նույնպես Աղթամարից փոխադրվեց Արգինա Խաչիկ կաթողիկոսի օրով։ Վանքը հետագայում մնաց որպես վարդապետանոց, շարունակելով իր գործունեությունը որպես հայկական դպրության օջախ։

5. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտեցին (պատմաբան), Աստղիկը, Սամվել Անեցին և Վարդան Բարձրաբերդցին կամ Արևելցին հիացմունքով են հիշատակում Մրենի կաթողիկեն, շինված 613—614 թվականներին, Դավիթ Սահառունի իշխանապետի կողմից։ «Ի հրամանէ նորա շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար որ ի քաղաքագեղն Մրենա», Պատմիչները Մրենի կաթողիկեն կոչում են աշխարհահռչակ։ Կաթողիկեի բարձրաքանդակները հայտնի են։

6. Լենինական քաղաքի հյուսիս-արևմտյան կողմը, Ախուրյան գետի ափին, դեռևս այսօր կանգնած է մնացել Վահրամաբերդ կոչվող գյուղի մոտերքում հռչակավոր Մարմաշեն վանքը, կառուցված Վահրամ Պահլավունի իշխանաց իշխանի կողմից ԺԱ դարի վերջերին։ ԺԱ դարում հայկական հորիզոնի վրա փայլող դպրոցներից մին է հանդիսացել Մարմաշենը։ Վանքի արևմտյան աջ կողմում գտնվում է Վահրամ Պահլավունու, Անիի պաշտպանի դամբարանը։

7. Հառիճա վանքը Շիրակում հայտնի էր է դարից։ Սարգիս Ճոն անունով ժամանակի անվանի վարդապետներից մին դասախոսել է այնտեղ։ ԺԱ դարում, թաթարների արշավանքի հետևանքով, անշքանում է վանքը։ Մի դար հետո Զաքարե Ամիր սպասալարը, Ս. Գրիգորի փոքր մատուռին կից, կանգնում է Ս. Աստվածածին եկեղեցին հոյակապ շինվածքով։ Մինչև այսօր տաճարի արևելյան պատի վրա քանդակված կա Զաքարե և Իվանե եղբայրների պատկերաքանդակը։ Հետագայում, 1830 թվականին, Հոռոմոսի սուրբ ուխտի միաբանության տեղափոխման առթիվ, վանքը նորից վերակենդանանում է շնորհիվ Ստեփանոս եպիսկոպոս Ջախալյանի ջանքերի։

Շիրակում հիշվում են նաև Արթիկի շրջանում մանավանդ հին ավերակները Մակոդա վանքի։ Հոգեվանքի և անվանի շինվածքով Իերուսէի Ս. Աստվածածին եկեղեցու։

Շիրակի վերոհիշյալ վանքերը եղել են հայ մշակույթի զարգացման կարևոր օջախներ։ Նրանք այսօր էլ հիացմունքով են դիտվում, որպես հայկական ճարտարապետության նշանավոր կոթողներ։

***

1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, Ադրիանուպոլսի դաշնագրով արևմտահայերին իրավունք է տրվում գաղթել Ռուսաստանի սահմանները։ Կարինի առաջնորդ Գարասպետ արքեպիսկոպոս Այվազյանի և Կարսի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս (Ջախալյան) խաժակնյանի առաջնորդությամբ, մոտ 90 000 արևմտահայեր գաղթում են ռուսական սահմանները։ Առաջին խումբը կարնեցի գաղթականների, բաղկացած 7 300 բնտանիքից, բնակվում է Ախալցխայի և Ախալքալակի շրջաններում։ Երկրորդ խումբը, կարսեցիք, 2 500 բնտանիք, բնակվում է արևելյան Շիրակում։

Կայսերական կարգադրությամբ այս երկու հոգևոր առաջնորդների տեսչության է հանձնվում այդ շրջաններում բնակեցված նոր գաղթականությունը։

Ստեփանոս արքեպիսկոպոսը հաստատվում է Հառիճայի վանքում, Հոռոմոս վանքի միաբանությամբ և իր հետ բերած եկեղեցական գարդ ու անոթեղենով։ Ստեփանոս արքեպիսկոպոսը հիշվում է որպես «առաջին առաջնորդ երրորդ նորոգութեան վանացն Հառիճոյ», այն է, իբր 595 ամաց ամայութեան այնորիկ, յաւուրս գաղթականացն անդր փոխադրեաց Օսմանեան սահմանաց յամի 1830, որ մաքրազարդեալ բազում աշխատութեամբ յաւերանացն դարաւոր ժամանակաց, արար տեղի բնակարան հոգևորական ուխտի բարեզարդեալ զմենաստանն ընդ առաջնոյ կարգի բարեզարդութեամբ իւրոյ»,— գրում է Արել վարդապետ Մխիթարյանցն իր «Պատմութիւն մենաստան Հառիճոյ» փոքրածավալ աշխատության մեջ (1856, Տփղիս, էջ 42—43),

իսկ «ի սմին ժամանակի ծերունի Պողոս վարդապետ Ջալատեան Կարնեցի, առաջնորդ Բասենայ, ընդ գաղթելոցն ժողովրդոց բարձեալ զկայս վանաց Հասան Ղալայի Ս. Աստուածածնի և զհրաշագործ պատկեր Յոթն վիրաց Աստուածածնի, անցանի ի սահմանս Ռուսաց ի Տայս, ուր վտարանդեամբ չգտեալ տեղի բնակութեան, դառնայ ի Շիրակ գաւառ յամի 1832 ի վանս Մարմարաշենայ յամայիս և ժամանակին, ցանկացեալ մնալոյ անդէն» (էջ 36—37)։ «Պողոս վարդապետ եկեալ յառաջնորդութենէ Բասենոյ Հնձուց վանաց Հասան Ղալուս,—ճշտում է նույն տեղում Աբել վարդապետը՝

Ստեփանոս արքեպիսկոպոսը օգտվելով իր առաջնորդական իշխանությունից, միևնույն ժամանակ աչքի առաջ ունենալով այն, որ Մարմաշենի վանքը գտնվում է ռուս-թուրքական սահմանի վրա, որտեղից Յոթ վիրաց հրաշագործ սուրբ պատկերը հեշտ է փախցնել վերստին իր նախկին վանքը, կամենում է այն փոխադրել Հառիճայի մենաստանը, պատճառաբանելով միաժամանակ, թե գաղթական ժողովրդի համար ծանր է միևնույն շրջանում երկու վանք պահել։ Հովհաննես Ը Կարբեցին, Ստեփանոս արքեպիսկոպոսի խնդրանքի վրա, հրամայում է Պողոս վարդապետին Յոթն վիրաց սուրբ պատկերով և վանքի բոլոր գարդերով ու անոթեղենով փոխադրվել Հառիճա վանք։

Յոթն վիրաց սուրբ պատկերի փոխադրումով ավելանում է Հառիճա վանքի նշանակությունը, «ի սակս հրաշագործ պատկերին անդրը լինելոյ, լինի և մենաստանն Հառիճայ հռչակաւոր ուխտատեղի ողջոյն վիճակի Շիրակայ, ունելով դամն ողջոյն մեծագումար նուէրս ջերմեռանդութեան ժողովրդոց» (Աբել վարդապետ, նույն տեղում)։

Հիշատակված սրբապատկերը նկարվել է մագաղաթի վրա։ Մագաղաթի մի երեսում պատկերվել է Փրկչի հարության նկարը, մյուս երեսում՝ Ս. Աստվածածինը նստած և ծնկներին Հիսուսի մարմինը՝ խաչից իջեցված։ Արտասուքը ծորում է մայրական աչքերից, իսկ սրտի վրա խրվել են յոթը սրեր, յորսը՝ աջակողմում և երեքը՝ ձախակողմում։ Տիրամոր սրտին խրված յոթը սրերը յոթը վերքեր են բացել, խաչի վրա Հիսուսի արտասանած յոթ խոսքերով.

Ա.— Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։

Բ.— Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս։

Գ.— Այսօր ընդ իս իցես ի դրախտին։

Դ.— Կին դու, ահա որդի քո, և ահա մայր քո։

Ե.— Ծարաւի եմ։

Զ.— Ամենայն ինչ կատարեալ է։

Է.— Հա՛յր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։

Խոսելով Յոթն վիրաց պատկերի մասին, Աբել վարդապետը գրում է. «Հրաշագործ սուրբ պատկերն Յոթն վիրաց անուանեալ Աստուածածնի, նկարեալ որպէս տաւանդութեամբ ասի, ի Ղուկաս աւետարանչէ» (նույն տեղում)։

Հ. Ղ. Ալիշանն իր «Շիրակ» աշխատության մեջ գրում է. «Եկեղեցին Ս. Աստուածածնի նշանաւոր ուխտատեղի համարեալ է վասն Յոթն վիրաց անուանեալ պատկերին, զոր համարին նկարեալ ի Ղուկայ աւետարանչէ և բերեալ ի Հայս ի Գրիգորէ Մագիստրոսէ» (էջ 155)։

Հնձուց վանքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման մասին գրի առնված ավանդության բազմաթիվ հիշատակություններ կան Մովսես Խորենացու, Հակոբ Կարնեցու, Ալիշանի և Հ. Ոսկյանի մոտ։

Հնձուց վանքն է «յորոց և յիշատակէ Մովսէս Խորենացի, զոր հիմնարկեալ է Մեծն Ներսէսի կաթողիկոսին... եւ ելեալ Ս. Հայրապետն... գնացեալ հասին ի գիւղն Հնձուց զէմ յարեալս կոյս ի բարձրաւանդակ տեղին և անդ բնակեալ նստան... և ի գիշերին այնմիկ տեսիլ զարմանալի ետես Ս. Ներսէս յայտնապէս, որ Ս. Աստուածածին նստեալ դեմ յանդիման վէմին ծիրանազգեստ փայլակնացայտ... և ընդ լուսանալ առաւօտուն, հրամայեաց զօրացն քարինս բերել և էարկ հիմն եկեղեցւոյ ի նոյն տեղին... որ է մինչև ցայսօր հռչակաւոր և միաբանակեայց տեղիք, որ այժմ Կարմիր վանք կոչի և ունի յայն անապատ կուսանոց»։

Հ. Ղ. Ալիշան իր «Այրարատ» մեծածավալ աշխատության մեջ (էջ 21) գրում է. «Ի հիւսիսային արևելակողման Հասանղալու լերին Միրենեաց կառուցեալ է Բասենայ վանքն, անուանեալ Ս. Աստուածածին, այժմ Կարմիր վանք որպէս ասեն ի Գրիգոր Մագիստրոսէ։ Փոքրիկ և հաստակառոյց եկեղեցու, երբեմն գմբեթաւոր՝ այժմ խարխլեալ, առ որով ոռամբ ցուցանիւր կարծեցեալ գերեզման Մագիստրոսի և խաչ վէմ բազմաստիճան, եղծ գրով, զոր ոմն ի յետին առաջնորդաց տեղւոյն ետ խախտել առ ի քնութիւն ինչ»։

Հնձուց վանքը վերանորոգել է Գրիգոր Մագիստրոսը և նվիրել է վանքին նշանավոր հրաշագործ «Յոթ վերք»-ը 1830-ական թվականներին, դպրոցի ժամանակ։ այդ նկարը բերվում է Շիրակ, ինչպես նշվեց։

Հիշատակության արժանի է պատմական հետևյալ դեպքը։ 1851 թվականի նոյեմբերին Ներսես Ե Աշտարակեցի հոգևորական կաթողիկոսը հիվանդագին դրության մեջ գտնվելով, ցանկանում է համբուրել սուրբ պատկերը։

ԸՆԹՑՈՂԻՆ ԸՆԿԵՐՈՒՏՈՒՆ ԺՈՎՍՈ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ



ՈՒՂՂՈՒՄ

էջմիածին» ամսագրի սույն՝ 1962 թվականի Հուն-
ի համարի 48-րդ էջի 2-րդ սյունակի 19-րդ տողը
հրից) կարդալ ժողովը Կրոնական ժողովի անդամ
նեարեր..., 40-րդ տողը՝ կընտրեր Կրոնական ժողովի
նդամ: Օր...: 50—52-րդ տողերը՝ կդեր լիազոր
ատավիրակության մը, որուն կրնկերանար, Ազգային-
ուրեսփոխանական ժողովին կողմե, Վանան Թեմեյան:
Գատվի-...

Ուստի Ս. Էջմիածնի սինոդը հրամանագրում է Հառիճայի վանքի վերատեսուչներին՝ նոքն վիրաց սուրբ պատկերը անհապաղ ուղարկել Ս. Էջմիածին, «պատշաճավայել հանդիսութեամբ». Հրամանը բերող Շահպազյան Հակոբ վարդապետը, միանալով վանքի վերատեսուչների ու Տ. Նահապետի հետ, «ձիավորներով առաջնորդված, սուրբ պատկերը հասցնում են Ս. Էջմիածին» (տե՛ս «Հառիճայի վանական ընկ. հիշատակարան», Կ. Կոստանյան, Ալեքսանդրոպոլ, 1910, էջ 24)։

Այնուհետև 1840 թվականին մեծ հանդիսությամբ հիմք է դրվում Լենինականի Ս. Աստվածածին ավագ եկեղեցու և հոգևոր դպրոցի, որը հետագայում ավելի ընդարձակվում է և կոչվում Վիճակային ուսումնարան։ Ավագ եկեղեցու կառուցումը տևում է 13 տարի։ Եկեղեցու կառուցումը բոլորովին չվերջացած, 1852 թվականի հոկտեմբերի 27-ին, Ալեքսանդրոպոլի հոգևոր կառավարությանը Ղուկաս արքեպիսկոպոսը Ս. Էջմիածնից հայտնում է, որ «ներսես Ե կաթողիկոսն հարդելով Ալեքսանդրոպոլի հայ ժողովականների խնդիրքը, բարեհաճեցավ Սիրական աղա Գորոյանցի ձեռքով վերադարձնել Հառիճայի Յոթն վիրաց սուրբ պատկերը, այն պայմանով, որ հոգևոր կառավարությունն առժամանակ այն դնե նույն Ալեքսանդրոպոլու Ս. Աստվածածին ավագ եկեղեցում, մինչև իշխանությունն անե վախճանական տնօրինություն» («Հիշատակարանս», էջ 25)։

Յոթն վիրաց սուրբ պատկերը հաստատվում է եկեղեցու ձախակողմյան ավանդատանը։ Նշանակվում է լուսարար, սպասավորելու համար ուխտավորներին։ Այժմ էլ նկարը նույն տեղում է։

1858 թվականին միաժամանակ սկսվում է Ալեքսանդրոպոլի Ս. Փրկիչ և Ս. Նշան եկեղեցիների կառուցումը։ Ս. Փրկչի կառուցողները նպատակ են դնում միջնադարյան անվանի հայ ճարտարապետ Տրդատի գլուխգործոցը հանդիսացող Անիի Կաթողիկեի նմանությամբ կառուցել այն, իր նրբաքանդակներով և երկնասլաց գմբեթով։ 1876 թվականին վերջանում է այս հոյակապ կոթողը։ Ավելի շուտ է վերջանում Ս. Նշան եկեղեցու կառուցումը։ Ճարտարապետական կոթողներ հանդիսացող այս երեք եկեղեցիները կառուցվել են Ալեքսանդրոպոլի ջերմեռանդ հավատացյալ քաղաքացիների սրբաբուխ նվիրատվությամբ։

1891 թվականին Ս. Աստվածածին ավագ եկեղեցին հարստանում է քանդակազարդ ոսկեզոծ փակ խաչկալով, զարդարված սրբանկարներով, ուր մասնավորաբար աչքի է ընկնում Ս. Սեղանի Աստվածամոր մեծ պատկերը, Հիսուս Մանուկը դրկում։ Այդ պատկերի վրա կարդում ենք, ոսկետողերով գրված, հայտնի հայ տաղանդավոր մի վարպետի անունը. պատկերի վերևում՝ «Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ զօրացոյց զտկարս։ Վարդգէս Սուրէնեանց աւարտել զսա, ամէն։ Եւ արդ նկարեցաւ պատկերս Սրբոյ Աստուածածնի ըստ խմաստուն օրինակի և կաթողիկն ոնոյն նախնեաց մերոց ի նոր Նախչեան։ Հայոց ՌՅԽ»։ Իսկ պատկերի ներքևում հիշատակագրվել է. «Պատկերս յիշատակ է Ալեքսանդրապոլ քաղաքի եր.....նիրեց Աստուածածին աւագ եկեղեցւոյ մօր Դշխուհի Խաչատրեանց Ասլանեանց, թիւն Տեառն 1891, ի Հայոց ՌՅԽ»։

Եկեղեցու զանգակատան առաջ կառուցվում է աղբյուր հուշարձան՝ ի պետս հավատացյալ ուխտավորների։

Ս. Աստուածածին ավագ եկեղեցին եղել է առաջնորդանիստ եկեղեցի։ Ըստ Կ. Կոստանյանի անտիպ հուշերի, 1880-ական թվականներին սույն եկեղեցին ունեցել է 31 ծխատեր քահանա։

Ս. Աստվածածին ավագ եկեղեցին, շնորհիվ իր հաստատուն կառուցվածքի, լավ է պահպանվել։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի օրով, 1958 թվականին, եկեղեցու տանիքը լրիվ ցինկապատվեց և ներսը ամբողջովին յուղաներկվեց, իսկ 1961 թվականին եկեղեցու հատակը պատվեց խճանկարով։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՆՇՎՈՒՄ Է Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԸ.— Փետրվարի. 8-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Ա. Քոչինյանի նախագահությամբ կայացավ հայ գրերի ստեղծող և խաղաղության հիմնադիր Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարության հանձնաժողովի առաջին նիստը։

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի տոնակատարության համար քննարկել է հանձնաժողով հետևյալ կազմով. Ա. Քոչինյան (նախագահ), Ա. Աբրահամյան, Ս. Ադիբեկյան, Հ. Այվազյան, Ս. Առաքելյան, Վ. Ավետիսյան, Հ. Բաղդասարյան, Լ. Գևորգյան, Բ. Գրիգորյան, Մ. Դավթյան, Վ. Դարբինյան, Ն. Զարյան, Ս. Զորյան, Է. Թոփչյան, Ռ. Խաչատրյան, Լ. Խալիկյան, Վ. Համբարձումյան, Գ. Հայրյան, Կ. Հասանով, Գ. Հասրաթյան, Ն. Հարությունյան, Ա. Հովհաննիսյան, Խ. Հովակիմյան, Գ. Հովհան, Ա. Ղազարիբյան, Լ. Ղարիբջանյան, Հ. Մարգարյան, Է. Միրզոյան, Մ. Մատոյան, Վ. Նալբանդյան, Ռ. Պարսամյան, Գ. Ջահուկյան, Գ. Սնակ, Վ. Սիրքն, Շ. Սիմոնյան, Լ. Ստեփանյան, Շ. Վարդումյան, Ս. Վարդանյան։

Նիստում քննարկվեցին հոբելյանի հետ կապված միջոցառումները։ Որոշվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի ծնունդյան 1600-ամյակի հոբելյանական հանդիսավոր նիստը հրավիրել մայիսի 26-ին, Երևանում։ Հոբելյանական հանդեսին մասնակցելու կհրավիրվեն հյուրեր Մոսկվայից, Լենինգրադից, միութենական ռեսպուբլիկաներից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից։

Հոբելյանական հանդիսավոր նիստեր կգումարվեն նաև Լենինականում, Կիրովականում, Աշտարակում։ Ռեսպուբլիկայի շրջանային կենտրոններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, դպրոցներում կկազմակերպվեն գրական երեկոներ, կկարդացվեն զեկուցումներ,

Հանձնաժողովը Հայաստանի Գիտական հրատարակչություն, Գիտությունների ակադեմիայի և Գեղական համալսարանի հրատարակչություններին հանձնարարեց լույս ընծայել Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքին և գործին նվիրված գիտական աշխատություններ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՔՆԱԳԱՐՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԱՏՅԱՆՆԵՐԸ.— Անցյալ դարի կեսերին Կամենեց-Պոդոլսկ քաղաքից Կիևի արխիվն են տեղափոխվում Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի նիստերի արձանագրությունները, որոնց մեծ նշանակություն ունեն ուկրաինական այդ հինավուրց քաղաքի ԺԶ—ԺԷ դարերի տնտեսական ու քաղաքական պատմությունը, Պոդոլիայում, Գալիցիայում և Մոլդավիայում հաստատված հայ գաղթականների սոցիալ-տնտեսական և իրավական կյանքը, հայ-լեհական, հայ-ուկրաինական ու հայ-ռումինական հարաբերությունները ուսումնասիրելու համար։

Ուշագրավ այդ պատմական վավերագրերը, որ արդեն իրենց վրա էին հրավիրել մի շարք հայ գիտնականների ուշադրությունը, 1894 թվականին դատնում են Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության Արևելյան հանձնաժողովի հատուկ քննության առարկան։ հատկապես այն պատճառով, որ նրանց մեծագույն մասը կազմված էր պատմության բեմից վաղուց անհետացած պոլովցիների (դեշտաղների) մեռած լեզվով և լեհերեն, երկու դեպքում էլ հայ տառերով։

Պոդոլիայի հայերի մի մասը յուրացրել էր պոդոլցիների լեզուն և օգտագործում էր այն պաշտոնական գրագրություններում։ Մասնագետների միահամուռ կարծիքով, այդ արձանագրությունները հանդիսանում էին գիր ու գրականություն չունեցած պոլովցիների մեռած լեզվի ուշ ժամանակաշրջանի քաջատիպ արժեքավոր հուշարձաններից մեկն աշխարհում։

Տարիներ շարունակ այդ արձանագրությունները մեծագույն խնամքով պահվում էին Ուկրաինական ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվում, բայց Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ նրանց անհետացան։ 1944 թվականին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի տնտորիչեսկի ժուռնալ-ում Կիևի արխիվի մարիլ Վ. Ռոմանովսկու հոդվածից հայտնի դարձավ, որ այդ արձանագրությունները, ուրիշ այլ արժեքավոր փաստաթղթերի հետ միասին, ոչնչացվել են հիտլերյան ներխուժողների կողմից 1943 թվականին, Կիևից նրանց նահանջելու նախորյակին։

Սակայն պարզվում է, որ հիտլերականները, նախքան Կիևի արխիվի հրկիզումը, թայանել և երկաթուղային յոթս վագոնով դեպի Գերմանիա էին ուղարկել հազարավոր արժեքավոր փաստաթղթեր, որոնց հետ նաև հայկական դատարանի արձանագրություններ։ Այդ վագոններն ընկնում են սովետական զորքերի ձեռքը և վերադարձվում Կիև։ Այժմ Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները հիմնականում կան (32 մեծագիր դրքերից ոչնչացել կամ անհետ կորել են միայն հինգը) և այժմ պահվում են Ուկրաինական ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվում։

Մատենադարանը, հաշվի առնելով այդ արձանագրությունների մեծ արժեքը, հրատարակության է պատրաստել նրանց հնագույն, հայերեն կազմված մասը (1572—1575 թ. թ.), որը պարունակում է ավելի քան 600 արձանագրություն։ Այդ աշխատանքն իրագործել է պատմական գիտությունների թեկնածու Վ. Գրիգորյանը։

Ինչպես հաղորդում է Մատենադարանի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանը, կամենեցյան դատական արձանագրությունների լույս ընծայումը նշանավոր ներդնում կլինի Լեհաստանի և Ուկրաինայի Սիգիզմունդ Ա թագավորի կողմից 1519 թվականին հայերի համար նախատեսված դատաստանագրքով, որի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած է Մխիթար Գոշի հռչակավոր «Հայոց դատաստանագիրքը» (ԺԲ դ.)։ Այդ դատարանը փաստորեն եղել է Կամենեցի հայերի ինքնավարությունն իրագործող մի հիմնարկ, որը գոյություն է ունեցել ԺԴ դարի կեսերից մինչև ԺԸ դարի վերջը։

Արձանագրությունները հետաքրքրական և արժեքավոր նյութ կտան ոչ միայն պատմաբաններին, տնտեսագետներին ու իրավաբաններին, այլև լեզվաբաններին, որովհետև նրանք մասամբ գրված են Կամենեցի հայերի առօրյա խոսակցական լեզվով։ Առաջին անգամ հրապարակվող այս նյութերի մեջ տեղ կգտնեն նաև հայատառ զվիշաղերեն և հայատառ լեհերեն մի քանի արձանագրություններ։

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ.— Վերջերս Ալ. Մյասնիկյանի անվան Պետական ռեսպուբլիկական գրադարանը լույս ընծայեց «Հովհաննես Թումանյան» սովորածավալ բիբլիոգրաֆիան, որը կազմել ու հրատարակության է պատրաստել գրադարանի տեղեկատու բիբլիոգրաֆիայի բաժինը։

Թումանյանի ստեղծագործություններն առանձին գրքերով ու ժողովածուներով հրատարակվել են ռուսերեն, ադրբեջաներեն, բելոռուսերեն, կիրգիզերեն, ուզբեկերեն և այլ ժողովուրդների լեզուներով։ Մի շարք գործեր թարգմանվել են էսպերանտո լեզվով։ Այս բաժնում տրված են Թումանյանի այն ստեղծագործությունների նկարագրությունները, որոնք լույս են տեսել գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, սերբերեն, չեխերեն, լիտվերեն, հունգարերեն և այլ լեզուներով։

Այս ամենը դեռ լրիվ ցանկը չէ այն բոլորի, ինչ դուրս է եկել մեծ բանաստեղծի գրչի սակիցը։ Բիբլիոգրաֆիայում առանձին ցույց են տրված այն պարբերականները, ժողովածուները ու դասագրքերը, որտեղ տպագրվել են Թումանյանի բանաստեղծությունները, պատմածքները ու հեքիաթները։

Գեղարվեստական ստեղծագործություններից բացի Թումանյանը թողել է նաև շատ արժեքավոր այլ ժառանգություն՝ հրապարակախոսական, գրական-քննադատական հոդվածներ և նամակներ, որոնք լայնորեն արտացոլվել են բիբլիոգրաֆիայում։ Հետաքրքրական շատ նյութեր կարելի է գտնել «Հովհաննես Թումանյանը գեղարվեստական գրականության մեջ», «Թումանյանը երաժշտության մեջ», «Թումանյանի կատարած թարգմանությունները» բաժիններում։ Գրքում զգալի տեղ է հատկացված մեծ բանաստեղծին ու նրա ստեղծագործություններին նվիրված նյութերի նկարագրություններին։

«Հովհաննես Թումանյան» բիբլիոգրաֆիան մի լուրջ առաջընթաց քայլ է հայ դասական և սովետական գրողների մատենագրության ստեղծման ճանապարհին, որին ձեռնամուխ է եղել Պետական գրադարանը։ Արդեն հրապարակի վրա են Աբովյանի, Շիրվանզադեի, Դեմիրճյանի, Չարենցի, Բակունցի և ուրիշների բիբլիոգրաֆիաները։ Դժվարահավաք ու շնորհակալ գործ են կատարել բիբլիոգրաֆներ Եվգենյա Սարգսյանը, Բյուրեղ Ասատվածատրյանը, Մանիկ Բաբայանը, Վերա Կանտուրին և Էմմա Հովհաննիսյանը։

Բովանդակալից, լավ սիրով գրված նախաբան և խմբագրի բարեխիղճ, մանրակրկիտ աշխատանքը, որ կատարել է բանասիրական գիտությունների թեկնածու Էդուարդ Ջրբաշյանը, դրքի արժանիքներից մեկը պետք է համարել։

Ջ. ԴԻԿԿԵՆՍԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿԵՐ.— Վերջերս Աբովեանի աշխատողների տանը տեղի ունեցավ անգլիացի նշանավոր միսիոներ Չարլզ Դիկկենսի ծննդյան 150-ամյակին նվիրված երեկո, որ կազմակերպել էին Հայաստանի Գրողների միությունը և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը։ Երեկոյին ներկա էին գրողներ, արվեստագետներ, կուլտուրայի և գիտության գործիչներ, ուսանողներ, մայրաքաղաքի հասարակության ներկայացուցիչներ։

Բացման խոսքում Հայաստանի Գրողների միության բարեուղար, բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը ասաց. «Չարլզ Դիկկենսը դասական ռեալիզմի հիմնադիրն ու առաջին խոշոր ներկայացուցիչն էր ԺԹ դարի անգլիական գրականության մեջ։ Նրա հրաշալի վեպերը համաշխարհային ընթերցասրահ են դուրս եկել, շնորհիվ այն բանի, որ դրանց մեջ մեծ վարպետությամբ վերարտադրված է իսկական կյանքը։ Դիկկենսի երկերը հարազատ են նաև հայ ընթերցողին։

Այնուհետև ականավոր գրագետի կյանքի ու գրական գործունեության մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Սոդոմոնյանը։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի դիրեկցիան վերջերս ձեռք է բերել մի շարք աշխատանքներ, որոնք այդի ընկնող տեղ կգրավեն մեծ բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հարուստ ցուցանմուշների շարքում։

Դրանց թվում է մանրանկարիչ Էդ. Ղազարյանի գործը, որ նա անվանել է «Հայ գրականության փառքը». Դա եզնիկարի մի փոքրիկ սյուն է, որի վրա ամրացված են իրար զուգահեռ երկու ոսկրեա սկավառակներ։ Դրանցից մեկի վրա փորագրված է Մովսես Հայաստանի գերբը, որը միաժամանակ մի խոշորացույց է։ Նրա միջով գիտողը տեսնում է Ավիտառուցիչների գունավոր դիմանկարը նկարի տակ միկրոսկոպիկ տառերով գրված է նրա «Հեթ՝ ըստ Հայրենից» բանաստեղծության վեց տողը։

Երևանի ընդհանուր տեսարանը և հարտարապետական առանձին տեսարաններ պատկերված են օրգանական ապակուց պատրաստված սկավառակի վրա։ Այն զարդարված է հայկական մանրանկարչության գեղեցիկ դրվագներով։ Այստեղ վերջնամասում ամրացված է մի փոքրիկ գոնազարդ գրքույկ, որի վրա փորագրված է «Աբու-վալա Մահարի»։ Նրա կազմի բացվածքին հարմարեցված խոշորացույցից երևում է անապատով ընթացող ուղտերի քարավանը։

Շնորհ բերված աշխատանքների մեջ կան նաև Մ. Սարյանի «Արագածը», Ն. Գողոսյանի «Ավետիք Իսահակյան» խճանկարը, Կ. Սարգսյանի «Իսահակյանը և Տագորը Մխիթարյան վանքում», Ա. Մելքոնյանի «Իսահակյանը Արփաչայի ափին», Հր. Ռուխկյանի իլյուստրացիաները «Աբու-վալա Մահարի» պոեմի թեմաներով, Հ. Սիրավյանի «Զվարթնոցում» և այլ գործեր։

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Մարտի 5-ին Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ Սիլվա Կապուտիկյանին նվիրված գրական-երաժշտական երեկո։

Գարուշ Սեակը իր բացման խոսքում Սիլվա Կապուտիկյանի կյանքի ու գործունեության մասին խոսում է հուզիչ ու փոխանցիկ ջերմությամբ։

Ժողովրդական դերասանուհի Մեսրոպյա Սիմոնյանը արտասանում է Սիլվա Կապուտիկյանի «Մայրիկիս» բանաստեղծությունը։ Հանդիսության գեղարվեստական բաժին իրենց ներդրումն են բերում Տաթևիկ Սազանդարյանը, Թամարա Դեմուրյանը, Հրաչուհի Ջինանյանը, Լուսիկ Քոչյանը և Վոլոդյա Արաքելյանը։ Նյութի են ունենում նաև Հայաստանի պետական երգչական խումբը և ժողովրդական երգի-պարի անսամբլը։

Երեկոյի վերջում, ընտրյալ բանաստեղծուհին շնորհակալական խանդաղատալից խոսքեր է ասում և հանդիսականների բուռն ցանկության ընթացքում տալով, արտասանում է «Հազար իմ որդուն» բանաստեղծությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Վերջերս Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում կայացավ Հայաստանի կոմպոզիտորների 5-րդ համագումարը։

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ է. Միրզոյանը բարի գալուստ մաղթեց համագումարի բազմաթիվ հյուրերին, որոնք Մոսկվայից, Լենինգրադից և հանրապետական այլ հանրապետություններից ժամանել էին, համագումարի աշխատանքներին մասնակցելու համար։ Այնուհետև կոմպոզիտորների միության վարչության հաշվետու զեկուցումով հանդես եկավ միության նախագահ է. Միրզոյանը։

«ՄԱՆԿԱԿԱՆ ԱԵՆԱՐՀ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԽԱՆՈՒԹԸ.— Այսպես է կոչվելու մանուկների համար Երևանում կառուցվելիք ունիվերսալ խանութը, որը կլինի Հայաստանի առևտրի ձեռնարկություններից խոշորագույնը։

Հինգ հարկանի այդ բազմալուր շինությունը, որ նախագծվել է Հայաստանի և Վրաստանի մի խումբ հարտարապետների ջանքերով, կբարձրանա Նալբանդյան փողոցի ու ապագա գլխավոր պողոտայի (այժմյան Սպանդարյան փողոցի շարունակություն) հատման վայրում և կլրացնի Լենինի հրապարակի հարտարապետական անսամբլը։ Երեխաների համար դա լինելու է մի հետաքրքրական աշխարհ, ուր կվաճառվեն մանկական ամեն տեսակի ապրանքներ։

Շենքի առաջին մասը, որի շինությունը կձեռնարկվի այս տարի, ձգվելու է գլխավոր պողոտայի երկայնքով 70 մետրի վրա։ Նրա ավելի քան 2000 քառակուսի մետր մակերեսով վաճառասրահներում կլինեն մանկական հագուստի, կահույքի, խաղալիքի, գրենական պիտույքների, սպորտային, երաժշտական, աշխատանքային գործիքների և զանազան այլ ապրանքների բաժիններ, շենքը կունենա վերելակներ և շարժվող սանդուղքներ։

ԳԻՇԵՐՈՓԻԿ ԴՊՐՈՑՆԵՐ.— Գեղատեսիլ Նորքում վերջերս բարձրացել է մի շինություն։ Դա գիշերօթիկ դպրոցի նոր շենքն է, որն առաջիկայում կհանձնվի օգտագործման։ Այստեղ իրենց պարապմունքները կսկսեն մայրաքաղաքի 600-ից ավելի երեխաներ։

Ներկայումս Հայաստանում գործում են 20 գիշերօթիկ դպրոցներ, որոնցում ընդգրկված են շուրջ 5900 երեխաներ։ 1961 թվականին նման երկու հաստատություններ բացվել են Երևանում, մեկական՝ Հոկտեմբերյանում ու Կիրովականում։ Սանատորիական տիպի գիշերօթիկ դպրոց է կազմակերպվել Դիլիջանում։

Այս դպրոցների պահպանման, երեխաների հագուստի, սննդի և այլ նպատակների համար պետական միջոցներից միայն անցյալ տարի ծախսվել է շուրջ 3 000 000 ռուբլի։ Հաջորդ տարիներին այդ գումարը շատ ավելի կաճի։ Նախատեսված է մինչև 1965 թվականը գիշերօթիկ դպրոցներում ընդգրկված երեխաների թիվը հասցնել ավելի քան 24 հազարի։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

(Հրանտ Արմենի «ՄԱՐԶՊԱՆԸ ԵՎ ՍՊԱՐԱՊԵՏԸ» գրքի մասին)

Այս գրքի մասին գրախոսական գրելիս, մարդ ակամա մտածում է, թե արդյո՞ք հարգելի քանասերը, մեզ էլ, մյուս գրախոսների նման, չի մեղադրի անդիմության մեջ, որ չեն կարողացել ազդյուրները, ծանոթ չեն պատմական փաստերին։ Պետք է ասել, թե, որ Հրանտ Արմենը նույնպես լավ չի կարողացել պատմական ազդյուրները։ Բայց մենք նրան այդ մեղադրանքը չենք ուզում տալ. մենք նրան մեղադրում ենք պատմական փաստերը միակողմանի, միամտնավոր ձևով ըմբռնելու մեջ։ Պատմարանը պետք է ճիշտ արտացոլի պատմական իրականությունը, նա բազմակողմանի կերպով պետք է քննի տվյալ դարաշրջանի մասին եղած փաստական նյութը և ըստ այնմ հանի իր եզրակացությունը։ Միակողմանի, սուբյեկտիվորեն չի կարելի շարադրել պատմությունը, այն էլ Վարդանանց պատերազմի պատմությունը, որը նվիրական է եղել հայ ժողովրդի համար և որի մասին հայագիտությունն ստեղծել է մեծ գրականություն։

1951 թվականին արտաքսահմանում ցրված հայությունը և Հայ Եկեղեցին, իր Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ, պատրաստվում էին տոնել Վարդանանց պատերազմի 1500-ամյակը, որը նաև հայ ժողովրդի նվիրական տոնն է։ Անշուշտ այդ տոնակատարությունն ուներ նաև քաղաքական մեծ նշանակություն։ Նա նպաստում էր հայրենասիրության ամրապնդմանը և է՛լ ավելի էր համախմբում արտաքսահմանի տարբեր երկրներում ցրված հայ բեկորները Հայ Եկեղեցու և հայրենասեր կազմակերպությունների շուրջը։

Արդյո՞ք այդպես էր մտածել Հրանտ Արմենը, երբ գրում էր իր սույն աշխատությունն այդ տոնակատարության ժամանակ։ Ո՛չ. նա չի ունեցել այդ դիտակցությունը և չի ըմբռնել այդ տոնակատարության ազգային-հայրենասիրական նշանակությունը։ Գուցե և ըմբռնել է, բայց նա իր այդ աշխատությամբ թիկունքից է հարվածել հայ ժողովրդին։ Մենք այս մեղադրանքը չէինք տա հեղինակին, եթե նա իր աշխատությունը գրեր ու հրատարակեր տոնակատարությունից մի հինգ տարի առաջ կամ հետո. կասեինք՝ դա դիտական գործ է և նրա հետ կվիճեինք գիտականորեն։ Բայց քանի որ նա գրել ու հրատարակել է տոնակատարության շրջանում (1950—1952), նպատակ է ունեցել նսեմացնելու և թուլացնելու այդ ազգային-եկեղեցական տոնը։ Ճիշտ է, նա իր աշխատության ներածականում ասում է, որ գիրքը պատրաստ է եղել 1944 թվականին, բայց դա չի երևում ներածությունից ու վերջաբանից։

Հրանտ Արմենի դրախոսվող սույն աշխատությունը, որ լույս է տեսել Լոս-Անժելոսում 1952 թվականին, բաղկացած է ներածությունից, առաջին, երկրորդ, երրորդ մասերից, 17 գլխից և վերջաբանից, ընդամենը 247 էջ։ Բուն նյութը սկսվում է երրորդ մասից (172—245 էջերը), ընդամենը 73 էջ, որը կազմում է աշխատության մոտ 30 տոկոսը։ Հետևաբար, աշխատության 70 տոկոսը շատ քիչ է առնչվում բուն նյութի հետ։ Նա իր աշխատությունը սկսում է մի ընդարձակ ներածականով, մոտ 45 էջ, որը նույնպես քիչ է առնչվում շարադրվելիք դեպքերի հետ։

Աշխատության առաջին և երկրորդ մասերի պատմական նյութը սկսում է Հայաստանի առաջին բաժանումով Հռոմի և Պարսկաստանի միջև և վերջանում է Արշակունիների թագավորության վերացումով Արևելյան Հայաստանում 428 թվականին, մոտ 45 տարվա պատմություն, որը դարձյալ կապ չունի իր շարադրած նյութի հետ։ Եթե հեղինակը նպատակ է դրել իր առաջ դրել Հայաստանի Դ դարի վերջին քառորդի և Ե դարի առաջին կեսի պատմությունը, այն ժամանակ աշխատության վերնագիրը չի համապատասխանում իրականությանը։ Բայց ավելի ճիշտ կլինի ասել, որ հեղինակն ուզեցել է իր աշխատության ծավալը մեծացնել և կողմնակի նյութերով լցեր է լրացրել, որը բոլորովին ավելորդ է։ Նրա աշխատության խնդիրն է՝ պարզաբանել Վասակ մարզպանի և Վարդան սպարապետի վարած քաղաքականությունը կամ բռնած դիրքը 450—451 թվականների հանդեպ, թե դրանցից ո՞րն է ճիշտ։ Այդ մասին է խոսում աշխատության երրորդ մասը, որին էլ կվերաբերեն մեր դիտողությունները։

Հայ-պարսկական այն պատերազմը, որը տեղի է ունեցել 451 թվականին և հայտնի է Վարդանանց պատերազմ անունով, հայ ժողովրդի պատմության մեջ ամենից ավելի հռչակված, ազգային նվիրական պատմական դեպքերից մեկն է և այդ պատճառով իր արժանի տեղն է գրավում հայ ժողովրդի պատմության մեջ։ Հայ ազատագրական պայքարի պատմության մեջ Ավարայրին կարող է նմանվել միայն 1918 թվականի մայիսի Սարդարապատի (այժմ Հոկտեմբերյան) մեծ ճակատամարտը թուրքական եկամոլների դեմ, որն իր ձևով ու բովանդակությամբ, կռվող ուժերով ու պայքարի մեթոդներով նման է Վարդանանց պատերազմին։

Վարդանանց պատերազմի մասին տեղեկություն են տալիս հայ պատմագիրներից հետևյալները.

1. Եղիշեի «Վարդանանց պատմությունն»[1], որն ականատեսի գործ է և գրված է դեպքերից 8—10 տարի հետո։ Բայց մի շարք հայագետներ, որոնց թվում և Հրանտ Արմենն անհիմն կերպով համարում են երկրորդական աղբյուր։ Սակայն իրականում Եղիշեի աշխատությունն իր տված հարուստ փաստերով, որպես ականատեսի գործ, պետք է համարել առաջին աղբյուր։ Ճիշտ է, Եղիշեն շատ հաճախ իր ուշադրությունը դարձրել է լեզվական ոճերի, դարձվածքների, ներբողների, ողբերի ու կրակոտ մեղադրանքների վրա

[1] Մենք օգտագործում ենք Ե. Տեր-Մինասյանի աշխարհաբար թարգմանությունը, Երևան, 1946։

և երբեմն էլ նրա պատմությունը նմանվում է լեզվի շենքության առաջ։ Դրա համար էլ, նա իր մեջ լեզվի պատճառով շատ է տուժել, աջ ու ձախ կողմերից ենթարկվել է հարձակումների։ Նրա քննադատները նշում են, որ նրա երկը պատմություն չէ, այլ մի դյուցազնավեպ է, կամ թե, ինչպես Հրանտ Արմենն է ասում, պարզ մի քարոզգիրք։ Բայց իրականում, երբ խորն ես ուսումնասիրում Եղիշեի աշխատությունը, տեսնում ես, որ նա ոչ միայն պատմական երկ է, այլև 450—451 թվականների դեպքերի, առանձնապես ապստամբության առաջացման պատճառների ու Ավարայրի ճակատամարտի ընթացքի մասին շատ ավելի արժեքավոր տեղեկություններ է տալիս, քան Ղազար Փարպեցին։ Թե միայն վերցնենք Վարդան սպարապետի ճառը Ավարայրում, որ իրենց երկերում բերում են երկու հեղինակներն էլ, կտեսնենք Եղիշեի առավելությունը։

Ղազար Փարպեցու աշխատությունը շատ է մեծարվում որոշ հայագետների կողմից, բայց իրականում նրա աշխատությունն էլ ունի լուրջ թերություններ, որոնք չեն տեսնում Եղիշեի հակառակորդները։ Ղազար Փարպեցու աշխատությունը կարդալիս, ընթերցողի մոտ ստացվում է այն տպավորությունը, որ կարծես մի պաշտոնական պատմում է իր ցավերի մասին, շատ հաճախ էլ ընկնում է ժայրահեղության ու չափազանցություններին մեջ և ցատահոսություն է անում։

Սակայն այս բոլորը չեն արժեքազրկում Ղազար Փարպեցու աշխատության արժանիքը։ Միայն տեսակետի վրա են կանգնած այն հայագետները, որոնց թվում և Հրանտ Արմենը, որոնք Ե դարի այդ երկու պատմիչներին հակադրում են միմյանց։ 450—451 թվականների պատմական դեպքերի մասին հավաստի և արժեքավոր աղբյուր են հանդիսանում Եղիշեի և Ղազար Փարպեցու աշխատությունները, որոնք չպետք է հակադրել իրար, թե ո՞րն է ճիշտ, ո՞րը սխալ։ Նրանց իրար լրացնում են և այդ երկու հեղինակների աշխատությունների հիման վրա միայն կարելի է Ավարայրի ճակատամարտի մասին դրել գիտական պատմություն։

2. «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց». Թիֆլիս, 1909, Բ դրվագ, էջ 79—233։ Ղազար Փարպեցին իր աշխատությունը գրել է Ե դարի վերջին, Վահան Մամիկոնյանի պատվերով։ Ինքն ականատես չի եղել դեպքերին, տեղեկությունները հավաքել է գրավոր աղբյուրներից և Ավարայրի անցքերին ականատես եղած մարդկանցից լսելով։ Հետևաբար, Փարպեցու աշխատությունը երկրորդ կարևոր աղբյուր է 450—451 թվականների պատմության լուսաբանման համար։

3. «Ներսէսի եպիսկոպոսի Պատմութիւն». Երևան, 1939 թ., էջ 23։ Սեբեոսը Ե դարի պատմագիր է, ունի մի կարևոր տեղեկություն, որ Վարդանին համարում է կամիր և հարված է հասցնում սպարապետի հակառակորդներին։

4. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 58—60։

5. «Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 130—140։

Այս երկու պատմագիրներն ապրել ու գործել են Թ դարի երկրորդ կեսին և Ժ դարի առաջին կեսին։ Սրանք քեռ ավելի երկար են կանգ առնում Վարդանանց պատերազմի վրա, բայց նրանց գործերի մեջ խառն են հետագա դեպքերի, հատկապես 572 թվականի երկրորդ Վարդանի ապստամբության արձագանքները։

6. «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի». Թիֆլիս, 1912, էջ 126—131։ Մովսես Կաղանկատվացին Ժ դարի պատմիչ է, տալիս է ընդարձակ տեղեկություններ Վարդանանց պատերազմի մասին, բայց գրվել է Եղիշեից և Փարպեցուց։

7. «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական». Ս. Պետերբուրգ, 1885, էջ 78—79։ Ասողիկը Ժ դարի և ԺԱ դարի սկզբների պատմագիր է. Վարդանի և Ավարայրի մասին տալիս է որոշ տեղեկություններ, բայց քաղել է հին հեղինակներից։

8. Կիրակոս Գանձակեցի. «Պատմություն Հայոց» Երևան, 1961, էջ 34։ Գանձակեցին ԺԳ դարի պատմագիր է, շատ քիչ է խոսում Վարդանանց դեպքերի մասին, եղածն էլ քաղել է հին աղբյուրներից։

9. «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 74—78։ Վարդանը ԺԳ դարի պատմիչ է, խոսում է Վարդանանց անցքերի մասին կրկնելով Եղիշեին ու Փարպեցուն։ Բայց իր կողմից ավելացնում է, որ բոլոր նախարարները համախմբվել են Վարդանի շուրջը, որը մինչև իր մարտիրոսվելը, 42 պատերազմի մեջ հաղթանակ է տարել։

10. «Պատմութիւն նահանգին Սիսական տաճարայ Ստեփաննոսի Օրբէլեան արհեպիսկոպոսի Սիւնեաց». Թիֆլիս, 1918, էջ 57—68։ Օրբելյանը ԺԳ դարի պատմագիր է, ավելի ընդարձակ է խոսում Վարդանանց պատերազմի մասին, բայց հիմնականում իր տեղեկությունները քաղում է Եղիշեից ու Փարպեցուց և միայն ավելացնում է, որ Վասակն երկյուղ էր կրում ու չէր ուզում մասնակցել ապստամբության երեք պատճառով. 1) որ իր երեխաները պատանդ էին Տիզբոնում թագավորի մոտ, ինքն որպես ծնող մտածում էր նրանց փրկության մասին, 2) վախենում էր իր թշնամի Վարազվաղանից, որը նույնպես թագավորի մոտ էր, 3) վախենում էր, որ լզրկվի այն մեծ ու երանելի փառքից և իր հայրենական տերությունից, որին հասել էր մեծ ջանքերով։ Այս երեք պատճառով, ասում է Օրբելյանը, մտածում ու մաշվում էր, և ոչ գիշերը քուն ուներ և ոչ էլ ցերեկը հանգստություն։ Հավանաբար Օրբելյանը օգտագործել է Սյունյաց Գետրոս եպիսկոպոսի գրառումները, որոնք մեզ հայտնի չեն։ Սյունյաց նախարարության լատադով Օրբելյանը որևէ փորձ չի անում արդարացնելու Վասակին։

Այսպիսով, փաստորեն Վարդանանց պատերազմի մասին հիմնական աղբյուրները մնում են Եղիշեի և Ղազար Փարպեցու աշխատությունները, մյուսները կա՛մ կրկնում են, կամ թե շատ չնչին լրացումներ ունեն։ Իսկ օտար աղբյուրներն էլ տեղեկություններ չեն տալիս։ Հրանտ Արմենը մի կողմ է մղել Եղիշեին և իր գիրքը շարադրել է միայն Փարպեցու աշխատության հիման վրա, այն էլ խիստ միակողմանի ու միտումնավոր։

Հրանտ Արմենի նման բանասերները ժխտում են Եղիշեին և նիհիլիստական վերաբերմունք են ցույց

տալիս ոչ միայն դեպի նա, այլև դեպի Վարդանանց պատերազմը։ Այդ է ցույց տալիս Հրանտ Արմենի «Մարդպանը և Սպարապետը» աշխատությունը։

450—451 թվականներին հայերի մղած ազատագրական կռիվների, առանձնապես Ավարայրի ճակատամարտի մասին, հայագիտությունը ստեղծել է մեծ գրականություն։ Ուսումնասիրողների մեծ մասը, սկսած Հ. Միքայել Չամչյանից, այդ կռիվներն ու Ավարայրի ճակատամարտը համարում են կրոնական պատերազմներ։ Այդ տեսակետը պաշտպանողների թիվն են դասվում համարյա բոլոր դասագրքերի հեղինակները, Հայ Եկեղեցու պատմություն գրողները, բացառությամբ միջնակարգ դպրոցների մի քանի դասագրքերի, հատկապես 1914 թվականին Վենետիկում լույս տեսած Հ. Սահակ Տեր-Մովսիսյանի «Հայոց պատմություն» աշխատության, ուր հեղինակը Վարդանանց անցքերը մեկնաբանում է որպես «ազգային պատերազմներ»։ Իսկ մեկնաբանները ավանդական կերպով այդ դեպքերը բնութագրում են որպես կրոնական հողի վրա առաջացած ապստամբություններ։

Անշուշտ առաջին տեղը պատկանում է Ստ. Գալանանցի «Հայոց պատմություն» աշխատության, ուր 5 դարի շարժումները համարվում են առաջին և երկրորդ կրոնական պատերազմներ։ Բայց ուսումնասիրողների մի այլ խումբ, որոնց թվում Մ. Գարագաշյանն իր «Քննական պատմություն հայոց» աշխատության 4-րդ մասի 111—212 էջերի մեջ, որ նվիրել է Վարդանանց անցքերի լուսաբանմանը, բնութագրում է որպես միջֆեոդալական պայքար։ Հ. Մանանդյանը, Գարագաշյանից ավելի առաջ գնալով, իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», (Երևան, 1934 թ., էջ 280—302) աշխատության մեջ, պարզ ու որոշ բնութագրում է որպես նախարարական ապստամբություններ, այսինքն հայ ֆեոդալները պայքարում են պարսկական ֆեոդալների դեմ իրենց իրավունքները պաշտպանելու համար։ Հայ Եկեղեցին Վարդանանց անցքերը համարում է ազգային-կրոնական պատերազմներ։ Իսկ սովետական հայ պատմագրությունը և պատմավիպասանությունը պարսկական տիրապետության դեմ ուղղված Վարդանանց շարժումները բնութագրում են որպես ժողովրդա-ազատագրական պատերազմներ։

Հայագետների ճնշող մեծամասնությունը, բացի մի քանի հեղինակներից, Վարդանանց շարժումները համարում են ճիշտ, տեղին ու ժամանակին կատարված անցքեր և դատապարտում են Վասակին ու իրավացի կերպով արդարացնում Վարդանին։ Վասակին արդարացնելու առաջին փորձը կատարում է Մ. Գարագաշյանը, համարելով նրան խոհեմ, հեռատես, հայրենասեր և նույնիսկ մի դյուսվ բարձր Վարդանից։ Գարագաշյանից հետո հայ բանասեր-պատմաբաններից Ն. Ադոնցն է, որ նույնպես իր «Марзпан Васак перед судом историков»[3] աշխատության մեջ փորձ է անում արդարացնել Վասակին, որ իբր թե նրա վարած քաղաքականությունն ավելի ճիշտ է եղել, քան Վարդանինը։ Նույն կարծիքին է նաև Լեոն[4]։

Ծանոթանալով Հրանտ Արմենի աշխատության երրորդ մասին, դալիս ենք այն եզրակացության, որ նա իր աշխատության այդ մասը շարադրել է բազմավաստակ պատմաբան Լեոյի աշխատության հիման վրա և քայլ առ քայլ հետևում է նրան։ Ճիշտ է, հեղինակն իր աշխատության առաջաբանում ցույց է տալիս, որ իր գործը պատրաստ է եղել 1944 թվականին, այնինչ Լեոյի «Հայոց պատմություն» աշխատության երկրորդ հատորը լույս է տեսել 1947-ին։ Բայց իրականությունն այն է, որ երկուսի շարադրանքը նույնն է։

Բերենք մի քանի օրինակ։ Լեոն Եղիշեի գործը համարում է դյուցազներգական մի վեպ, որ գրել է քարոզչական նպատակով (էջ 48 և 49) և իր աշխատությունը շարադրում է ըստ Ղազար Փարպեցու։ Նույնն է ասում նաև Հրանտ Արմենը, միայն մի տարբերությամբ, որ Լեոն երբեմն հաշվի է նստում Եղիշեի հետ և բնդունում է ապստամբության մեծությունը, այնինչ Հրանտ Արմենը խղճուկ ու ողորմելի մի շարժում է համարում Վարդանանց պատերազմը և ավելի է մեծարում Վասակ մարզպանին, բոլորովին մոռանում է Վարդան սպարապետի դերը ու նրան դարձնում իբր «հիվանդ» Ղևոնդ երեցի ձեռքին մի գործիք։ Լեոն նշում է, որ Վարդանն ու իր կողմնակիցները վճռել էին մեռնել, նույնն է ասում նաև Հրանտ Արմենը։ Լեոն հոգևորականների դերը մեծացնում և Վարդանին դարձնում է նրանց ենթակա հլու մի կամակատար, նույնն ավելի խիստ անում է Հրանտ Արմենը և այլն։

Հրանտ Արմենը, գրելով սույն աշխատությունը, նոր աշխարհ բաց չի անում Վարդանանց պատմության ուսումնասիրության բնագավառում։ Նա ասում է այն, ինչ որ հայագիտության ներկայացուցիչներն ասել են մոտ 60—70 տարի առաջ։ Սակայն իրականության առաջ չմեղանչելու համար, նշենք այն «նորությունները», որ նա առաջ է քաշել իր գրքում։ Նրա աշխատության երրորդ մասի վերնագիրն է «Ապստամբություններ, որ բազաքային պատերազմի փոխվեցան»։ Դա առաջին. երկրորդ՝ որ 450—451-ի շարժումները դեկավարել է «հիվանդ» Ղևոնդ երեցը։ Հետևաբար Վարդանանքը պետք է փոխվի Ղևոնդյանք անունով և երրորդ, որ Ավարայրում հայ կռվող ուժերի թիվը չի անցել 9—10 000-ի սահմաններից։ Ըստ երևույթին Հրանտ Արմենը չի հասկացել, թե ինչ բան է քաղաքային, ավելի ճիշտ քաղաքացիական պատերազմը։ Քաղաքացիական պատերազմի նպատակն է հին հասարակարգը փոխել նորով, կամ վերացնել հին հասարակարգի մնացորդները։ Հայ նախարարները իրար դեմ շատ են կռվել, նրանց կռիվները կարելի՞ է շփոթել քաղաքացիական պատերազմի հետ։ դա առնվազն թյուրիմացություն է։ Արդյո՞ք Վարդանանց շարժումները նման նպատակ են ունեցել և հետապնդել են մի նոր հասարակարգի ստեղծումը։ իհարկե ոչ։

---

2 Մ. Գարագաշյան. «Քննական պատմություն հայոց», մասն Դ, էջ 143—182, Թիֆլիս, 1895։

3 Н. Адонц, «Марзпан Васак перед судом историков» (записки Восточн. отдел. имп. Археолог. общ. XV С. Петербург. 1901, стр. 0121—0130.

4 Լեո, «Մ. Մեսրոպ», Թիֆլիս, 1904, էջ 289. համարյա նույն ոգով է շարադրված նաև «Հայոց պատմության» Բ հատորը, Երևան, 1947, էջ 45—80։

Ամեն պարագայում հայերի իրար դեմ մղած կռիվները քաղաքացիական լինել չեն կարող, իսկ Ավարայրն առավել ևս քաղաքացիական կռիվ չէր, այլ հայ ժողովրդի ազատագրական պայքարն էր Սասանյանների ու նրանց հետ միացած հայ դավաճան նախարարների դեմ։ Հեղինակի սխալը բխում է նրանից, որ նա չի ըմբռնել Վարդանանց պատերազմի նպատակը և ընկել է սոր ու ձոր։ Առանց Եղիշեի Վարդանանց պատերազմը հիշա լուսաբանել հնարավոր չէ։

371 թվականին Ցիրավի ճակատամարտից մինչև 451 թվականը, ավելի քան 80 տարի, Հայաստանը չի ենթարկվել ծանր պատերազմների ու ավերումների։ Այդ տարիներին երկիրը տնտեսապես ու մշակութապես առաջադիմում է, առանձնապես զարգանում են արհեստները, առևտուրը, գիրն ու գրականությունը։ Ճիշտ է, 387 թվականին Հայաստանը բաժանվում է Հռոմի և Պարսկաստանի միջև, երկրի մեծագույն մասը անցնում է պարսիկներին, որոնք 428 թվականին վերացնում են Արշակունիների թագավորությունն Արևելյան Հայաստանում, բայց և այնպես հայ նախարարները և ժողովուրդը լուրջ դժգոհություններ հանդես չեն բերում պարսիկների դեմ, որովհետև այդ տարիներին Տիգրանը չէր խառնվում Հայաստանի ներքին գործերին, երկիրը պահպանում էր իր ինքնավարությունը, ծանր չէին արքունի հարկերը և այրուձիու ծառայությունը ու չկար կրոնական հալածանք։

Ե դարի կեսերին Հայաստանը թե ենթակա էր պարսիկներին, բայց որպես ինքնավար միավոր, բռնել էր զարգացման մի այնպիսի ուղի, որով մրցում էր Պարսկաստանի հետ, ոչ միայն արհեստավորական արտադրանքներով և առևտրով, այլև իր առաջավոր մշակույթով ու կրոնական հարցերով կապված էր Արևմուտքի հետ։ Դա ձեռնտու չէր պարսկական ռազմատենչ ազնվականներին, որոնց գլուխը տվյալ ժամանակաշրջանում կանգնած էին երկրում մեծ ազդեցություն ունեցող Մեհրներսեհ հազարապետը և մոգերը, մոգպետ գլխավորությամբ։ Սրանց ձեռքին գործից էր Հազկերտ թագավորը։ Այդ պատճառով խնդիր է դրվում Տիգրանի արքունիքի առաջ՝ վերացնել այդ մրցակցությունը, հայերին կտրել Արևմուտքի ազդեցությունից ու ձուլել պարսիկների հետ։ Սրանց են հակել Վարդանանց շարժումների գլխավոր պատճառները, որոնք վրիպել են Հրանտ Արմենի ուշադրությունից։

Ըստ Եղիշեի (էջ 114—115), Դենշապուհի աշխարհագիրը վնասում է հայ ընակչության բոլոր խավերին։ Այդ աշխարհագրով առհասարակ ծանրանում են երկրից դանվող հարկերը, եկեղեցին ու հոգևորականները, որոնց մինչ այդ ազատ էին հարկերից, ենթարկվում են հարկատվության, նախարարները անտեղի մեղադրվում ու հեռացվում են իրենց պաշտոններից։ Հազարապետության պաշտոնը պարսիկներին անցնելով, փաստորեն նրանց ձեռքն էր անցնում արքունի հարկերի բաշխումն ու գանձումը, ֆինանսական գործի կառավարումը և դատավորությունը։ Վերջինի անցումով պարսիկների ձեռքը, փաստորեն դրաշտական մոգերի միջոցով Հայաստան պետք է բերվեին պարսկական օրենքներ ու դատավարական այն բոլոր ձևերը, որոնք գոյություն ունեին Պարսկաստանում։ Այդ առնվազն պարսկականացման քաղաքականությունն էր, որովհետև հայերը պետք է հեռանային իրական օրենքներին, սովորություններին, կենցաղին ու կրոնին։ Եղիշեի ասելով, այս բռնությունների նպատակն էր, որ հայերը նեղվեն և ընդունեն մոգերի օրենքներն ու կրոնը։

Տիգրանի արքունիքի այս քաղաքականությունը, որը վարում էր Դենշապուհը Հայաստանում, հետապնդում էր երկու նպատակ։ Առաջին, սահմանափակել հայ նախարարների և հոգևորականների դարավոր իրավունքները, ավելացնել երկրի հարկերը ու ստատկացնել եկեղեցիները։ Երկրորդ, վերացնել հայերի ինքնավարությունը, մշակութային ու կրոնական անկախությունը։ Այդ եղանակով Տիգրանի արքունիքը մի կողմից սպառնում էր Հայաստանի փաստական ինքնուրույնությանը, իսկ մյուս կողմից եկեղեցու և իշխանների գոյությանը ու երկրի տնտեսական, մշակութային, կրոնական անկախ կյանքին։ Սրանք էին այն արմատական պատճառները, որոնք հայերին մղեցին դեպի 451-ի պատերազմը։

Այս բոլորի դիմաց իրենից ինչ է ներկայացնում Ղազար Փարպեցու հաղորդած տեղեկությունը (էջ 79—80)։ Այս դեպքում պատմաբանը Եղիշեն է և ոչ թե Փարպեցին։ Եթե Հրանտ Արմենը լավ ուսումնասիրած լիներ Եղիշեին, նա հակագիտական, սխալ եզրակացության չէր հանգի Ավարայրի ու Վարդան Մամիկոնյանի մասին։ Վասակի և Վարազվաղանի պայքարով չէր կարող առաջանալ համաժողովրդական մեծ պատերազմ, ինչպես եզնում է ցույց տալ Փարպեցին։

Ըստ Ղազար Փարպեցու, Արշավիր Կամսարականը պարսկական առյանում Վասակին մերկացնելու համար ասում էր, որ նա է Վարդանին փախուստի ճանապարհից հետ դարձրել, հավաստիացնելով նրան, որ նամակ կգրեն կայսրին, նրանից օգնություն կխնդրեն, իսկ եթե նա մերժի, այն ժամանակ իր մոտ եղած արքունի զորամարով, հոներից վարձու զորք կվերցնեն և կավերեն պարսիկների երկիրը, իր որդիներին փրկելու համար էլ Հայաստանում եղած բոլոր պարսիկներին բանտարկել կտա, մինչև որ թագավորն ազատի իր զավակներին (Փարպեցի, էջ 179—181)։

Հրանտ Արմենը, հենվելով այս տվյալների վրա, կառուցում է իր տեսությունը, այսինքն «Մարզպանին հանդուգն ծրագիրը» ապստամբության մասին, որ իբր թե 450—451 թվականների ապստամբության միտքը հղացել է Վասակը, նա է կազմել ապստամբության ծրագիրը և հայտնել հայ ավագ նախարարների ու եպիսկոպոսների հրամիրած ժողովում (Փարպեցի, էջ 221)։ Նախ պետք է նշել, որ Արշավիր Կամսարականն այդ հարցը առաջ քաշելով պարսկական առյանում, իրենց պաշտպանելու համար, գունազարդել է, երկրորդ, Վարդանի փախուստի մասին Եղիշեի մոտ տեղեկություններ չկան, այդ մասին հիշատակում է միայն Փարպեցին և վերջինի բուն տեքստից էլ լի երևում, որ Վարդանի վերադարձի գործը միայն ինքը Վասակն է կազմակերպել։ Երկու պատմագիրների տվյալներից պարզ երևում է, որ ապստամբություն կազմակերպելու միտքը առաջ է բերել ժողովուրդը

հոգևորականների հետ միասին և ստիպել են նախարարներին միանալ իրենց հետ։

Հրանտ Արմենին պետք է պարզ լիներ, որ նախարարները Տիգրանում առերես ուրանալով, որոշել էին վերադառնալ իրենց տեղերը, ապրել իրենց տներում, պահպանելով քրիստոնեությունը. դա լավագույն ելքն էր նրանց համար։ Եթե դա հնարավոր չլիներ, այն ժամանակ աժեն մեկը կարող էր իր ընտանիքով գնալ ուսար երկիր. ապստամբության մասին խոսք չի եղել։ Վարդան Մամիկոնյանը, հաշվի առնելով նախարարների անմիաբանությունը, Վասակ մարզպանի տատանվող դիրքը, որ նա Անդի դեպքից հետո Սյունիքից զորք է բերել տվել մոգերին պաշտպանելու, թույլ է տվել նրանց մտնել նախարարների տները և տարածել քրիստոնական կրոն, որ նախարարներից շատերը թույլատրել են իրենց կայմանները կառուցել կրակատներ, որով աստիճանաբար երկիրը կարող էր լցվել ատրուշաններով, որպես հեռատես ու դիվանագետ զորավար, որոշում է ժամանակավորապես ընտանիքով գնալ Բյուզանդական Հայաստան և ապասել հարմար ժամանակի։ Նա իրեն դիմող պատգամավորներին ասում է. «Եվ չլինի, թե մեզանից մեկը կարծի, թե մենք, որ փախել ենք, սրի ահից ենք փախել... այլ մեր նենգավոր խարեբայությունից է...» (Փարպեցի, էջ 124—125)։

Անշուշտ, Վասակի համար մեռնում էր Վարդանի հեռանալը, դրանով կայտառվեր այդ ազդեցիկ մարդուց։ բայց միաժամանակ խիստ երկյուղ էր կրում, որ Հազկերտը անմամբ ճանաչում էր Վարդանին որպես մեծ զորավարի, ուստի թույլ տալ նրան անցնել Բյուզանդական Հայաստան և օգտագործվել Իրանի դեմ, մեռնում չէր Տիգրանի արքունիքի համար և ինքը Վասակը որպես մարզպան, կարող էր դրա համար պատասխանատվություն կրել։ Բացի այդ, Վարդանը Բյուզանդական Հայաստան անցնելով, կարող էր տեսնվել կայսրի ու նրա զորավարների հետ, ստանալ նրանցից օգնություն, վերադառնալ Արևելյան Հայաստան և բարձրացնել ապստամբություն, այն ժամանակ Վասակը կլիներ դատապարտվեր։ Ահա այս երկու պատճառով էլ, Վասակը կողմ էր նա վերադառնալուն։ Պետք է նշել, որ Վարդանի վերադարձման հարցը քննվել է նախարարների և հոգևորականների ժողովում, Վասակն էլ նրանց հետ միասին որոշել են մարդ ուղարկել և նա վերադարձնել նրան։ Այնպես որ, Վարդանին վերադարձնելու նախաձեռնությունը չի պատկանում միայն Վասակին։ Իսկ այդ ցույց է տալիս, թե որքան մեծ է եղել Վարդանի հեղինակությունը երկրում, որ ստանց նրան, հնարավոր չէր բարձրացնել ապստամբությունը։

Վարդան Մամիկոնյանը նա վերադառնալով, հաստատվում է Շահապիվան քաղաքում, բայց տեսնելով, որ մոգերը, օգտվելով նախարարների ապստամբական դրությունից, լեռյան հոգևորականների և ժողովրդի դիմադրությամբ, ընդարձակում են իրենց գործունեությունը Հայաստանում և ժողովրդի ու հոգևորականների մեջ առաջացրել են մեծ դժգոհություններ, նա անմիջապես 450 թվականի օգոստոսին, իր մոտ հրավիրելով եպիսկոպոսների, աշքի ընկնող քահանաների, ավագ տանուտերերի ու ռազմուղների խորհրդակցություն է հրավիրում և որոշում են վերջ տալ ապստամբական վիճակին, բարձրացնել ապստամբություն։ Այդ որոշումից հետո քարկոծում են զավաճան Ջանդազանին, ապա իրենց տրամադրության տակ եղած զորքը բաժանում են մասերի, նշանակում պահապան գնդեր երկրի տարբեր գավառներում մոգերի գործունեությունն արգելելու, իսկ Վարդանն իր գնդով գնում է Անդ գյուղաքաղաքի կողմերը, Պարսկաստանից սպասվող զորքերին դիմադրելու համար։ Որոշված որը Ջաբեհավանում կոտորում են պարսկական զորքերին ու մոգերին, երևելիներին էլ բռնելով պահում են բանտերում իրենց հանդության տակ։ Այնուհետև հարձակվում են այն բերդերի ու ավանների վրա, որոնց պարսիկները ձեռքն էին, քանդում, ավերում են Արտաշատում, Գառնիում, Անիում, Արտագերսում և այլ վայրերում պարսիկների շինած ատրուշանները, բնակության վայրերն ու կրապաշտության տեղերը։ Այսպիսով, 450—451 թվականների անցքերը սկսվում են Անդի ժողովրդական ցասումով, երբ անկազմակերպ ժողովուրդը տարերայնորեն, վրեժխնդրությամբ լցված, Ղևոնդ երեցի գլխավորությամբ հարձակվում են մոգերի վրա, չարդում ու եռ դում Անդի եկեղեցուց, որը փոքրում էին վերածել ատրուշանի։ Ժողովրդական այս տարերային շարժման սարսափի տակ, մոգպետն զգում է, որ թագավորի քաղաքականությունը խախտվում է Հայաստանում, բայց նրան հանգստացնում է Վասակը։ Ապա տեղի է ունենում Ջաբեհավանում պարսկական զորքերի ու մոգերի կոտորածը հայկական կազմակերպված զորամասերի ու ժողովրդական աշխարհազորականների կողմից՝ Վարդան սպարապետի գլխավորությամբ։ Դա քաղաքական մի խոշոր ցույց էր զորքի ու զորավարի կողմից, ստիպելու Սասանյան արքային դադարեցնելու իր հալածանքի քաղաքականությունը։ Այնուհետև Ադվանքում Վարդանի մղած հաղթական կռիվները պարսկական զորքերի դեմ և հանների հետ կնքած պայմանագիրը այնքան են մեծացնում սպարապետին, որ նա դառնում է ժողովրդական հերոս։

Արդ, այս բոլորից հետո, ո՞վ է գլխավորում ժողովրդական շարժումը, Վարդա՞նը, թե՞ Վասակը։ Մենք կարծում ենք, որ Արշավիր Կամսարականի իրենց արդարացնող մեղադրանքով, Վասակը չի կարող դառնալ ապստամբության «հանդուգն ծրագիրը» կազմող։ Ինչպես նշել ենք, ապստամբությունն առաջ է բերել ժողովուրդը հոգևորականների հետ։ Երկրի առաջավոր հայրենասեր իշխանները, Վարդան սպարապետի գլխավորությամբ, մասնակցում են ապստամբության ու գլխավորում այն։ Ահա այս է իրականությունը։ Ցենց մխում, որ Վասակը, Ջաբեհավանի դեպքերից հետո, Վարդանի ու նրա կողմնակիցների ճնշման տակ, ստիպված է եղել կարճ ժամանակով մասնակցել ապստամբության, գրել ու ստորագրել է գրություններ ուղղված բյուզանդական կայսրին ու զանազան անձնավորություններին, երդվել է Ավետարանի վրա ու ստորագրել։ Բայց շատով նա է կանգնել ապստամբությունից, բյուզանդական կայսրի կողմից հայերին օգնելու մերժողական պատասխանի վրա։

Այժմ տեսնենք, թե Հրանտ Արմենը Վասակի դավաճանությունից հետո ի՞նչպես է բնութագրում հայերի պատերազմը պարսիկների դեմ.

«Հայաստանյաց եկեղեցին պիտի չարունակե տանել Վարդանանցը, քանզի ան իր պատմության մեջ Աստուծին և Քրիստոս վերջին անգամ ըլլալով ապստամբություն մը կազմակերպեց և տենդագին հմտություն մը կազմակերպեց և տենդագին հմտությամբ ալ վարեց պայքարը։ Տատամսող Վարդանը գործի մղեց, որ շնորհիվ Սահակ կաթողիկոսին իր ստացած չերմ կրոնական կրթության, հղավ հու կամակատարը ապստամբության իրական առաջնորդ Ղևոնդ երեցին։

Այս հիվանդագին ծերունի քահանան, հակառակ իր հիվանդ վիճակին—Քրիստոս ալ ճիշտ այդ պատճառով—խուլ հանդգնությամբ քաղաքական տեսակետները առ ոչինչ համարեց, չդայնատ գործունեության տվավ ինքզինքը, ու անընկճելի ոգիով քարոզեց խաչակրություն մը, ուր ինքն իսկ զենք բարձրացնելով, իր օրինակով հրահրեց ուրիշները» (էջ 43)։

Այս բնութագրումով Հրանտ Արմենը թույլ է տվել կոպիտ ու հակագիտական սխալներ.

1) Ճիշտ չէ Վարդանանց պատերազմի կազմակերպումը վերագրել «հիվանդ» Ղևոնդ երեցին։ Ինչպես ասել ենք, այդ ապստամբությունը կազմակերպել է ժողովուրդը, որի մեջ պետք է հաշվել ժամանակի հայրենասեր հոգևորականներին, որոնց թվում և Ղևոնդ երեցին ու նախարարներին և առաջին հերթին սպարապետ Վարդան Մամիկոնյանին։

2) Հայ եկեղեցին և նրա հայրենասեր հոգևորականները Ավարայրից հետո շատ մեծ դեր են խաղացել օտար բռնակալների դեմ մղած հայ ժողովրդի ազատագրական ապստամբությունների ու կռիվների ժամանակ։ Այդ մասին կարելի է բերել շատ փաստեր։

3) Վարդան Մամիկոնյանը տատամսող չէ, ոչ էլ գործիք Ղևոնդ երեցի ձեռքին. ընդհակառակը, Ավարայրի ոգին կազմում է Վարդան սպարապետ իր բանակով, որը կարողացավ հանձարեղ կերպով կազմակերպել ժողովրդին, օգտագործել Ղևոնդի նման հմուտ հայրենասեր քարոզիչներին՝ Ավարայրի մարտն ավելի հայող վարելու համար։

4) Սխալ և հակագիտական մի թեզ է «հիվանդ» Ղևոնդ երեցին Ավարայրի պատերազմի զեկավար դարձնելը։ Ղևոնդ երեցը որպես քարոզիչ մեծ դեր է խաղացել և օգնել է Վարդանին, դա անժխտելի իրականություն է, բայց նա չի եղել Վարդանանց պատերազմի առաջնորդը և Վարդանի նման խելոք, հմուտ, դիվանագետ զորավարը, որի զորավարության համբավը հայտնի է նաև Իրանում ու Բյուզանդիայում, չէր կարող Ղևոնդ երեցի ձեռքին դառնալ կամակատար։

5. Ավելի սխալ, հակագիտական է այն, որ Հրանտ Արմենը Ղևոնդ երեցին համարում է հիվանդ, որը հիվանդագին կերպով առաջ է մղել ապստամբության գործը։ Նշանակում է, որ Ավարայրը խելահեղ, հիվանդ մի ծերունի մարդու ցնդաբանության արդյունք է, որ առ ոչինչ է համարել քաղաքական տեսակետները և ինքը զենք վերցրել ու իր օրինակով հրահրել է և ուրիշներին։ Այստեղ են ասում, որ նիհիլիզմը հասել է իր գագաթնակետին։ Հեղինակը փաստորեն ժխտելով Ավարայրը, ընկել է նման սխալների մեջ։

6. Եռատ ավելի արտառոց ու պատմաբանին անվայել է և այն, որ նա Ավարայրը նմանեցրել է խաչակրաց արշավանքներին։ Մի՞թե հայտնի չէ հեղինակին, որ խաչակիրները Տիրոջ գերեզմանը փրկելու պատրվակով, ալխատում էին գրավել Մերձավոր Արևելքի հարուստ երկրները, կողոպտել դրանք։ Հայ ժողովուրդը Ավարայրում բարձրացնելով ազատագրության դրոշը, չէր ձգտում գրավել Պարսկաստանը և կողոպտել այն։ Հայերը խաչակրության կարիք չունեին։ Նրանց նպատակը պարզ էր. պայքարով աշխատում էին պահպանել իրենց ինքնուրույնությունը և հետ մղել պարսիկներին Հայաստանից։

Այժմ անդրադառնանք նախարարների խմբավորման, նրանց թվի ու զորքի քանակի մասին։ Ըստ Հրանտ Արմենի, հայ նախարարների մեծ մասն Ավարայրի դեպքերի ժամանակ բռնում է չեզոք դիրք և չի մասնակցում պատերազմին։ Նա իր աշխատության մեջ այդ չեզոք նախարարների թիվը մի տեղում նշում է 40, մի այլ տեղում 50 նախարար։ Մեզ հասած «Գահնամակ»-ում նշված են 70 և «Զորանամակ»-ում 86 նախարարությունների անունները։ Այս երկու փաստաթղթերը հայտնի են, հարկ չենք համարում մատնանշել աղբյուրները։ Ն. Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» (глав. X, количественный анализ нахарарства, էջ 236—237) արժեքավոր աշխատության մեջ, մանրամասն կերպով քննել է հին Հայաստանում եղած նախարարական տոհմերի թիվը և ընդամենը հաշվում է 50 նախարարական տուն, որը միանգամայն համապատասխանում է Զենոբ Գլակի, Փավստոս Բյուզանդի, Ղազարի, Մովսեսի, Խորենացու և Ղազար Փարպեցու տվյալներին, մանավանդ որ այդ փաստաթղթերի մեջ նույն տոհմերի անունները կրկնվում են մի քանի անգամ։

Ըստ Շահխաթունյանի հրատարակած «Զորանամակ»-ի, հայ զորքերի թիվը 124 000 է եղել, որից նախարարությունների ու ազատների զորքի թիվը հասնում է 84 000-ի, իսկ մնացած 40 000-ը կազմում են արքունի գնդերը։ Ըստ այդ փաստաթղթերի, 1 000 և 1 000-ից ավելի զորք ունեն 23 նախարարություն, 500 և 500-ից ավելի՝ 10 նախարարություն, 50-ից մինչև 300՝ 53 նախարարություն։ Այս 86 թվից որ դուրս հանվեն կրկնվող նախարարությունների անունները և զորավարները, այն ժամանակ նախարարությունների թիվը Դ—Ե դարերում 50-ից աւելի չէր կարող լինել։ Այդ են ցույց տալիս նաև հայ պատմագիրների տվյալները. թեև նախարարական տոհմերի թիվը շատ է ցույց տրված, բայց զորքի թիվը մոտ է իրականությանը։

Հրանտ Արմենը գտնում է, որ հայ զորքի թիվը պակասել է Ե դարում. դա ճիշտ չէ։ Հայ բնակչության թիվը Ե դարում ավելի շատ էր, քան նախորդ դարերում, հետևաբար զորքի թիվը չէր կարող պակասել, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հայկական բանակը հիմնականում համալրվում էր գյուղացիներից։ Ճիշտ է նաև այն, որ Արևմտյան Հայաստանը և երկրի հարավային որոշ շրջաններն իրենց նախարարներով ու զորքով անջատվել էին և չէին մտնում Արևելյան Հայաստանի մեջ։ Մեր ստուգումից պարզվում է, որ անջատված գավառների զորքի թիվը 16 000-ից ավելի չէր։ Պարսկաստանում եղած հայ զորքի թիվը, որ մի քանի

անգամ փոփոխվել էր։ Գարեգին Սրվանձտյանի գնահատմամբ, 10 000-ից ավելի չէր կարող լինել։ Ցեղոց դիրք բռնող նախարարությունների թիվը նախ թիվ էր, և երկրորդ, դրանք երկրորդական կարգի նախարարություններ էին, որոնց զորքի թիվը 8 000-ից չէր անցնում, իսկ ինչ վերաբերում էր Վասակի և նրա կողմնակիցների զորքի թվին, ապա նրանք 24 000-ից ավելի զորք չեն ունեցել։ Այսպիսով, Ավարայրի պատերազմին մասնակցող հայ զինվորների թիվը 38 000-ից չէր անցնում, ուստի Վարդան սպարապետը հանդիսատ կերպով կարող էր պատերազմի դաշտ բերել ավելի քան 70 000 կռվող մարտիկներ։ Հետևաբար, իրավացի է Եղիշեի այն պնդումը, թե «...ավաքսուն հազարից ավելի են» (էջ 172) կամ թե, «... եվ Նրանց ընդհանուր թիվը եղավ 66 000 մարդ ձիավոր և հետևվակ» (էջ 176)։ Մինչև է. Դաշտ Փարպեցին հայերի զորքի թվի մասին տեղեկություն չի տալիս։ Բայց դա իրավունք չի վերապահում որևէ մեկին հերքելու Եղիշեի իրական տվյալները։ Ըստ Եղիշեի, Վասակի կողմնակից նախարարներն էին 1. Արտակ Ռշտունին, 2. Գաղիշո Խորխոռունին, 3. Գյուտ Վահեունին, 4. Տիրոց Թագրատունին, 5. Մանեհ Ապահունին, 6. Արտեն Գարեղենիցը, 7. Հնդուղ Ակյան, 8. Ներսեհ Ուրծան, 9. Վարազշապուհ Գալունին, 10. Մանեն Ամատունին «և ուրիշ շատ ազատ մարդիկ արքունի տնից, որոնց ոստանիկ են անվանում և իր ամբողջ աշխարհը լիովին սպատամբեցրեց և ուրանալ տվեց...» (Փարպեցի, էջ 169)։ և իրեն Վասակի հետ միասին 11 հայ իշխան անցնում են Քշնամու կողմը, որոնց զորքի թիվը, եթե ընդունենք, որ Սյունիքի 19 400 զինվորներն էլ միացել են Վասակի հետ, հազիվ հասնում էր 22 500 մարդու։ Պատմագիրների ասելով, Վասակյաններն իրենց հետ տարել էին նաև արքունի զորքերի որոշ մասը և դրանով նրանց զորքի թիվը հասել է մոտ 24 000-ի։ Իսկ պատերազմի կողմնակիցների մասին Եղիշեն գրում է. «Եվ Նրանց բոլորը շատապով եկան-հասան պատերազմի տեղը, յուրաքանչյուրն իր զորքով ու ամբողջ պատրաստությամբ, նրանք և ովքեր ի բնե հաստատ էին մնացել իրենց տեղում, 1. Ներշապուհ Արծրունին, և 2. Խորեն Խորխոռունին, և 3. ինքը սպարապետը, և 4. Արտակ Գալունին, և 5. Վահան Ամատունին, և 6. Վահեունյաց դունը, և 7. Թաքուլ Դիմաքսյանը, և 8. Արշավիր Արշարունին, և 9. Շմավոն Անձևացին, և 10. Տաճատ Գնթունին, և 11. Ատում Գնունին, և 12. Խոսրով Գարեղյանը, և 13. Կարեն Սահառունին, և 14. Հմայակ Դիմաքսյանը, և 15. Լլի մի ուրիշ Դիմաքսյան Գագրիկը, և 16. Ներսեհ Քաջբերունին, և 17. Փարսման Մանդակունին, և 18. Արտեն Ընձայացին, և 19. Այրուկ Սկիտին, և 20. Վրեն Տաշրացին, և 21. Ապրսամ Արծրունին, և 22. արքունի Շահխոռապետը, և 23. Խուրս Սրվանձտյանը, և 24. Քաղյանները, և 25. Ակյացիները, և 26. Տրպատունիները, և 27. Ռշտունիների զորքը, և արքունի բոլոր զորձակալներն ամեն մեկն իր զորքերի հետ միասին» (էջ 175—176)։

Բացի սրանցից, Վարդանի կողմն են եղել նաև 28. Մեհրշապուհ Մարդպետական նախարարը, որ, ըստ Փարպեցու, Ավարայրի ճակատամարտում եղել է ներշապուհ Արծրունու օգնականներից մեկը։ Նրա տյուրեին Վարդանի գնդումն էր Աղվանքի կռվի ժամանակ։ 29. Փափազ Առավեղյանը, առհասարակ Առավեղյան տոհմը, 30. Թափռայան տոհմը, Տիգրանում դատվում են այդ տոհմից Բարիկը և Հոհանը, 31. ըստ Փարպեցու, որպես ապստամբության մասնակից, Տիգրանում դատվում է նաև Աշոցա իշխանը։ Այսպես, եթե սույն 31 ցուցակից հանենք կրկնվող տոհմերի իշխանների անունները՝ Ապրսամ Արծրունին, Հմայակ Դիմաքսյանը և Գագրիկ Դիմաքսյանը, ապստամբության կողմը մնում են 28 նախարար, որոնցից երկուսն առանց տանուտերների, մասնակցում են միայն զորքերը (Վահեունյաց, Ռշտունյաց) տոհմերի կրտսեր անդամների զեկավարությամբ, իսկ 26 տոհմ իրենց պետերով ու զորքերով Վարդանի կողմն էին։

Եղիշեի այս մեջբերումից երևում է, որ ամբողջ արքունական զորքն իրենց զեկավարներով, նույնպես Վարդանի կողմն էր։ Տիգրանի արքունիքը թե 428-ին վերացրել էր Արշակունիների թագավորությունը Հայաստանում, բայց արքունի գնդերը չէին ցրել և ինչպես Եղիշեն է ասում,... «թեպետև հարկը Փարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ» (էջ 19)։ Արքունի գնդերը, որի ճնշող մեծամասնությունը, վերը նշված հավատարիմ նախարարների զորքերը միասին, աշխարհազորականներով կազմում էին Ավարայրի հայկական բանակը, որի թիվը 60 000-ից երբեք պակաս լինել չի կարող։ Ուստի հիշտ չէ Հրանտ Արմենը, որ հենվելով Փարպեցու տվյալ Առանձար Ամատունու առաջապահ գնդի 300 թվի վրա, հայ զորքի բանակը պակասեցնելով իջեցնում է մինչև 9—10 000-ի։ Հրանտ Արմենն այս 9—10 000-ի դիմաց ցույց է տալիս, որ Վասակյաններն ունեին 23 000 զինվոր։ Միաժամանակ նշում է, որ Վարդանը, հարձակվելով Սյունիքի գավառների վրա, հաղթում, ավերում և սովի է մատնում բնակչությանն ու զորքին։ Արդյո՞ք սա զարմանալի չէ։ Ավելին, եթե հայերի կռվողների թիվն այդքան քիչ էր Ավարայրում, պարսիկներն ինչ կարիք ունեին մեծ բանակի, փղերի երամակների և «անհաղթ Մատյան գնդի», որի թիվը 10 000 մարդուց ավելի էր, այն էլ մինչև ատամները զինված։ Այս գնդով պարսիկները հաստիստ կերպով կարող էին ջարդել հայերին։ Բայց քանի որ նրանց նման ուժերով էին եկել Հայաստանի վրա, պարզ է, որ հայերն Ավարայրում ունեին կազմակերպված մեծ բանակ։

Հրանտ Արմենը վերը նշված նախարարներին խրար հետ համեմատելով եզրակացնում է, որ երկրի աշխի ընկնող իշխաններից 6-ը գնում են Վասակի, 6-ը Վարդանի հետ։ Սա նույնպես հիշտ չէ։ Վասակի կողմնակից 11 իշխաններից Ակյա Ընձուղը, Ուրծա Ներսեհը, Գալունի Վարազշապուհը և Ամատունի Մանեհը տոհմի տանուտեր չեն, համարվում են երկրորդական անդամներ։ Գաղիշո Խորխոռունիի տանուտեր լինելը չի հաստատվում։ Մինչև է, նրան կանչել են Գարսկատան, բայց չի մասնակցում Արտաշատի ժողովին։ Նրա կողքին կային Վրիվ և Խորեն Խորխոռունիներ. թե սրանցից ո՞րն է տանուտերը, պարզ չէ։

վրիվ մասնակցում է Արտաշատի ժողովին, իսկ հարյուրներ տոհմի զորքերով մասնակցում է Վարդանի բոլոր կռիվներին։ Արտեն Գարեգյանը Վասակի խմբի հետ է, իսկ նույն Գարեգյանը տոհմի զորքով Վարդանի կողմն էր. «Ով է տանուտերը պարզ չէ։ Փաստորեն Վասակի կողմն էին անցել իրենց զորքերով միայն Տիրոր Բագրատունին և Մանեհ Ապահունին։ Տիրոց Բագրատունին այդ ժամանակ որևէ ակտիվ գործով աչքի չի ընկել, նա չի կանչվել Գարեգատան, չի մասնակցել Արտաշատի ժողովին, հայտնի չէ մի որևէ կռվում և այն։ Պարզ է, որ Բագրատունյաց տոհմը ե գարի առաջին կեսում ակտիվ դեր չի խաղացել հայ հասարակական ու քաղաքական կյանքում։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի 50 նախարարական տոհմերից մոտ 35-ը մասնակցել են 450—451 թվականների անցքերին։ Փաստական իրողությունն այն է, որ հայ նախարարների և բանակի մեծ մասը Վարդանի կողմն էր ու գնում էր Ավարայր պատասխան տալու պարսկական նվաճողներին։

Ինչ վերաբերում է Բյուզանդիայից օգնություն խնդրելու համար մեկնած դեսպանների հարցին, ըստ Եղիշեի, Բյուզանդիա դեսպան է գնացել Առամ Գնունին, ըստ Փարպեցու, Վահան Ամատունին, Հմայակ Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին։ Այս երկու դեսպանություններն էլ պետք է ընդունել որպես պատմական իրականություն։ Երկու պատմագիրներն էլ մեկը մյուսին լրացնում են։ Անգրի դեպքից և Վարդանի վերադարձից հետո նախարարները որոշում են միասնել ժողովրդի ու հոգևորականների հետ, բարձրացնել ապստամբություն և ելած շարժումներին տալ կազմակերպված բնույթ։ Այդ պատճառով էլ Առամ Գնունուն ուղարկում են Թեոդոս կայսր մոտ օգնություն խնդրելու։ Կայսրը խոստանում է օգնել հայերին և Առամ Գնունին շտապով վերադառնում է Հայաստան ու հայտնում ուրախ լուր։ Վասակ Մարզպանն այդ լուրից հետո ավելի է մոտենում ապստամբներին։ Առամի այցը Բյուզանդիա և վերադարձը տևել է ունեցել 450 թվականի հունիս և հուլիս ամիսներին։ Բայց շատով լուր է ստացվում Թեոդոսի մահվան (450 հուլիսի 28) և նոր կայսր Մարկիանոսի գահակալության (450 օգոստոսի 24) մասին։ Ուստի նոր կայսրից օգնություն խնդրելու համար կարիք է զգացվում նոր դեսպանության, և այս անգամ ավելի հեղինակավոր դեսպանություն է ուղարկվում, վերը նշված իշխաններից։ Անշուշտ այս գործում մեծ դեր է խաղում նաև Վասակը, որը մեծ հույսեր է կապել բյուզանդական օգնության հետ։ Այս նոր դեսպանությունը Բյուզանդիա է մեկնել Աղվանքի կողմից առաջ, 450-ի սեպտեմբերին։ Սակայն նոր կայսր Մարկիանոսը մերժում է նախկին կայսրի խոստացած օգնությունը և այդ մերժման լուրը Հայաստան է հասնում նոյեմբերի վերջերին, երբ ապարապետ Վարդան Մամիկոնյանը Աղվանքում պարսիկների դեմ մեծ հաղթանակ էր տարել։

Վասակ մարզպանը, որ մինչ այդ ապստամբների կողմն էր, մանավանդ Թեոդոս կայսրի օգնություն տալու խոստումից հետո, նոր կայսրի մերժման լուրը լսելով, անմիջապես նա է կանգնում ապստամբությունից, անցնում պարսիկների կողմը և պատկառում է հայկական ազգական ուժերը, այդի ընկնող նախարարների ընտանիքները ձերբակալում, տեղափոխում է Սյունիք, ապա Գարակատան, Միհրներսեհից զորք է պահանջում ու լցնում երկրի բերդերն ու ամրոցները, քանդում է հայ, վրաց և աղվան ժողովուրդների միաբանությունը, Վարդանի վերադարձից հետո պարսկական զորքերի միջոցով փակում է Դերբենդի անցքը հոների առաջ։

Վարդանը լսելով Վասակի դավաճանությունը - գործած չարիքները, անմիջապես Դերբենդից վերադառնում է Հայաստան 450-ի դեկտեմբերին, իսկ Վասակը վախենալով, Արտաշատից այնքան արագ է փախչում Սյունիք, որ չի կարողանում իր հետ տանել ունեցվածքն ու ավարը, որ կողոպտել էր պետական պահեստներից ու Այրարատ նահանգից։ Վարդանը իր զորքով արագ գրավում է պարսիկներից այն բոլոր բերդերն ու ամրոցները, որոնց Վասակի միջոցով տիրել էին, իսկ գերի ընկած պարսիկներին պահում է երկրի անառիկ ամրոցներում։ Սակայն ուսուցիչի պակասության պատճառով ստիպված է լինում զորքի մի մասը ցրել տարբեր գավառներ, գարնանը հավաքելու պայմանով։ Այդ ժամանակ Ատրպատականի սահմանից վերադարձել էր նաև Ներշապուհ Արծրունու գունդը։ Վարդան ապարապետն իր մոտ է պահում մի քանի աչքի ընկնող ավագ նախարարներին ու կարճ ժամանակվա ընթացքում տեր է դառնում Թագավորանիստ բոլոր վայրերին։ Այնուհետև առանձին գնդեր է ուղարկում Սյունիք, գրավում նրա մի շարք գավառները և այնպես նեղն է դնում Վասակին, որ նրա զորքն ու ժողովուրդը նեղվելով ուսուցիչից, ստիպված ուտում էին ձիերի ու էշերի միսը։ Այս հանգամանքը չի մոռանում նաև Հրանտ Արմենը, բայց մեղադրում է Վարդանին։ Այսպիսով, չնայած Վասակի դավաճանությանն, բայց և այնպես, 451 թվականի հունվար ամսին, երկրի դրության տեր է դառնում Վարդանն իր կողմնակիցներով։ Հրանտ Արմենին հարց ենք տալիս, թե արդյո՞ք 9—10 000 զորքով հնարավոր էր այս բոլորը կատարել։ Իհարկե ոչ։

Այս բոլորից հետո, Վարդան Մամիկոնյանը բանտից մի պարսիկ է բերում նախարարների մոտ և ցույց է տալիս նրան այն բոլոր վնասները, որ հայերը հասցրել են Թագավորին ու Վասակին և նրան ուղարկում է Թագավորի մոտ, որ հրաժարվի իր քաղաքականությունից։ Հաղթելու Թագավորը, հաշվի առնելով մոգերի ու զորքի կոտորածը Զարեհավանում, պարսկական բանակի պարտությունը Աղվանքում, իր զորքերի նոր կոտորածը Հայաստանում և Սյունյաց երկրի մի շարք գավառների ավերումը, ստիպված է լինում նա վերցնել կրոնափոխության առաջարկը և ներում շնորհել մոգերին ու զորքերին կոտորողներին։ Բայց քանի որ Թագավորն իր քաղաքականության մի մասից է հրաժարվում, Վարդանն ու իր կողմնակիցները որոշում են շարունակել պայքարը։ Ահա սա է իրականությունը, Վասակ չէ, որ ձեռք էր բերել կրոնի ազատության ու ներում շնորհելու հրամանները, այլ Վարդան ապարապետի վերոհիշյալ գործերը։ Այնուհետև երկու կողմերն էլ պատրաստվում են պատերազմի։ Պարսկական մեծ բանակը, որ փղերի երամակներով, անհաղթ

Մասյան գնդով եկել ու կանգ է առել Փարպեցու գաղտնում, դավաճան Վասակի զորքերի հետ. 451 թվականի գարնանը, շարժում է դեպի Հայաստանի խորքերը։

Վարդան զորավարն էլ իր բանակով շտապում է թշնամուն դիմադրել Հայաստանի սահմանագլխին, թույլ չտալ նրան մտնել երկրի խորքը։ Վարդանի բանակը կանգ է առնում Արտազ գավառի Ավարայր դաշտում, Տզմուռ գետի ափին, որովհետև այնտեղ էր հասել ու կանգ առել պարսկական բանակը. Մուշկան Նիխորական-վուրտի գլխավորությամբ։

Ըստ Եղիշեի, Միհրներսեհը Վասակից իմանալով, որ Վարդանի բանակի թիվը 60 000-ից ավելի է, պահանջում է, որ քաջ զինվորների ամեն մեկի դեմ երեք մարդ դնի (էջ 172), այսինքն մի հայ կռվողի դիմաց պարսիկները դնում են երեք զինվոր։ Վարդանի ճառն Ավարայրում, ըստ Եղիշեի և Փարպեցու, իրարից շատ տարբեր է։ Փարպեցին փաստորեն ոչինչ չի ասում, այնինչ Եղիշեի հաղորդածը պատմական մի մեծ փաստաթուղթ է ու լուսաբանում է շատ խնդիրներ։ Այդ ճառից նախ երևում է, որ պարսկական բանակը թվով շատ շատ է հայկականից. «չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու սրի դեմ թիկունքներս դարձնենք»,— ասում է Վարդանը։ Սա մի կողմից ցույց է տալիս, որ թշնամու զորքի թիվը մեծ է, և մյուս կողմից այն, որ Վարդանն իր բանակն Ավարայր է տարել ոչ թե մեռնելու, այլ հաղթելու համար։ Երկրորդ, «... ես չեմ մոռացել և հիշում եմ,— ասում է Վարդանը,— թե ինչպես ես և ձեզանից ոմանք այն ժամանակ անօրեն իշխանին խրախճիեմ, մոլորեցրինք (բնագրումները մերն են— Հ. Հ.), ինչպես մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսուն նրա ամբարիշտ կամքը իրը կատարեցինք» (էջ 177)։ Սա ցույց է տալիս, որ Տիրոտոմում թագավորին մոլորեցնողն առաջին հերթին ինքը Վարդանն է եղել։ Ուստի չի կարելի հավատալ ընծայել Փարպեցուն, որ իբր թե նա ուզում էր մեռնել ու չփոխել իր հավատը։ Եթե Վարդանն էլ իր ճառում չասեր այդ, հնուն պատմաբանը պետք է ենթադրի, որ հայրենասեր զորավարը չէր կարող բռնել համառության ուղին, զոհել իր անձը և թողնել Հայրենի երկիրն իր թախին։

Ըստ Եղիշեի, պարսիկ զորավար Մուշկան Նիխորական-վուրտան իր բանակը դասավորում է հայերի դեմ, առաջ է բերում փղերի երամակները և բաժանում գնդերի, ամեն մի փղին 3 000 սպասավոր զինվոր է նշանակում, ապա կարգի է բերում բանակը և ճակատ է կազմում մեծ դաշտի երկարությամբ։ Մի շարք բնագրեր զորամասեր և Մասյան գունդը կենտրոնացնում է աջ թևում, որ համապատասխանում էր հայերի ձախ թևին։ Նույնպիսի պատրաստություն է տեսնում նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանը։ Նա, ըստ Եղիշեի, իր բանակը բաժանում է չորս մասի։ Առաջին զորագունդը կենտրոնում հանձնում է Ներշապուհ Արծրունուն, օգնական՝ Մոկաց մեծ իշխանը։ Երկրորդ զորագունդը աջ թևում հանձնում է Եղեգն Եղեղնունուն, օգնականներ՝ Ընձայեցին և Ներսեհ Քաջբերունին։ Երրորդ զորագունդը ձախ թևում հանձնում է Թաթուլ Վանանդեցուն (Դիմաքսյանին), օգնական՝ Տաճատ Գնթունին, չորրորդ զորագունդը վերցնում է ինքը, օգնականներ նշանակելով իր փեսա Արշավիր Կամսարականին և իր փոքր եղբայր Համազասպյանին, որպես ուժեղակ զորամաս։ Թուլացող թևին օգնություն ցույց տալու համար (էջ 89)։ Ըստ Փարպեցու, բանակը բաժանում է երեք թևի և վերջապահ կենդ։ Միջին թևը հանձնում է Ներշապուհ Արծրունուն, օգնականներ՝ Միհրշապուհ Մարդպետականը, Արշավիր Կամսարականը և Արտակ Մոկացին։ Այ թևը հանձնում է Եղեգն Եղեղնունուն, օգնականներ՝ Թաթուլ Վանանդեցուն և Ներսեհ Քաջբերունին։ Ձախ թևը վերցնում է ինքը, օգնական է նշանակում Փափագ Առավեղյանին, իսկ վերջապահ գունդը հանձնում է իր եղբայր Համազասպյանին (էջ 152—153)։

Պատմագիրների այս վկայություններն իրար չեն հակասում, այլ լրացնում են իրար։ Երկու պատմագիրներ ասելով, Վարդանն իր բանակը բաժանում է չորս մասի, առաջին և երկրորդ գնդերի հրամանատարները նույն են, տարբերվում են երրորդ և չորրորդ թևերի հրամանատարները և համարյա բոլոր օգնականները։ Անշուշտ այստեղ պետք է հետևել Եղիշեին այն հարցում, որ Վարդանն որպես բանակի ընդհանուր հրամանատար, չէր կարող իր զորքը թողնել բախտի քմահաճույքին և բանակի մի մասը վերցնելով, կռվի մեջ մտնել թշնամու հետ ռազմաճակատի մի մասում, աջաթող անելով ռազմաճակատի ընդհանուր ղեկավարությունը։ Պարզ է, որ նա կվերցներ չորրորդ զորամասը, պաշտպանելու թիկունքը, գնություն ցույց տալու թուլացող թևերին և ղեկավարելու ընդհանուր ռազմաճակատը։

Այսպիսով, 451 թվականի մայիսի 26-ի վաղ առավոտյան, կազմ ու պատրաստ իրար դեմ առ դեմ կանգնած էին հայկական և պարսկական բանակները։ Առաջինն իր քաջ զորավար Վարդանի գլխավորությամբ պատրաստ էր մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելու իր Հայրենի երկրի, ժողովրդի ու եկեղեցու անկախությունը, հետևաբար, մղում էր արդարացի ազատագրական պատերազմ, իսկ երկրորդն եկել էր Հայաստանը նվաճելու, ժողովրդին կողոպտելու և բռնի կերպով զրադաշտական կրոնը տարածելու համար, հետևաբար, մղում էր անարդարացի նվաճողական պատերազմ։ Ահա այս է, որ չի հասկացել Ամարպանը և Սպարապետը դրքի հեղինակը։

Հրանտ Արմենն իր աշխատության մեջ պարսկական բանակի թիվը խիստ պակաս է ցույց տալիս, սակայն այդ չի երևում պատմիչների տվյալներից։ Եթե պարսկական բանակի կռվող զինվորների թիվը քիչ լիներ, նրանց կարիք չունեին փղերի և Մասյան գնդի, բայց քանի որ բանակի հետ բերել էին փղերն ու Մասյան գունդը, պարզ է, որ բանակի թիվը մեծ է եղել։ Պարսիկների երեք պարտությունները Վարդան զորավարից Հայաստանում և Աղվանքում խիստ վախեցրել էին նրանց, մանավանդ որ պարսկական բանակը կազմելու ժամանակ հայերը, վրացիները և աղվանները միասին էին։ Այս հանգամանքները հաշվի առնելով, պարզ է, որ թշնամին մեծ բանակ պիտի ուղարկեր Հայաստան, կարճ ժամանակվա ընթացքում իր հաշիվները հայերի հետ մաքրելու համար։ Առհասարակ աղբյուրները պարսկական բանակի թվական կազմի մասին տեղեկություններ չեն տալիս, Փարպեցին նույնիսկ հայերի թվի մասին տվյալներ չունի։ Ուստի պարսկական

բանակի մոտավոր թիվը պետք է նշել կողմնակի փաստերով։

Պատմագիրները փղերի գնդին երամակ են անվանում, դա նշանակում է, որ նրանց քանակը շատ է եղել, ոչ պակաս 30—40 փղից, որովհետև 10—15 փղին երամակ անվանել հնարավոր չէ։ Քանի որ Մուշկան Նիսալավուրը փղերին գնդերի բաժանելուց հետո նշանակել է յուրաքանչյուր փղին 3 000 դինվոր, որ նրա պաշտպանության տակ առաջ չարժվեն, ուստի պարսկական բանակի թիվը 120 000—130 000-ից պակաս լինել չէր կարող. մանավանդ որ Միհրներսեհը վասակի միջոցով իմանալով, որ հայերի զորքի թիվը 60 000-ից ավելի է, ինչպես ասում է Եղիշեն, կարգադրում է, որ յուրաքանչյուր քաջ կռվողների դիմաց նշանակեն երեք պարսիկ դինվոր։ Եթե պարսկական զորքերի վրա ավելացնենք նաև դավաճան Վասակի զորագնդերը, թշնամու զորքի թիվը մոտենում է 180 000 դինվորի։ Եթե հայկական զորքը մեկ երեքի դեմ Ավարայրում կանգնած լիներ, սպարապետ Վարդանը թշնամու բազմության խնդիրն ասաջ չէր քաշի։

Ավարայրի ճակատամարտը տեղի է ունենում 451 թվականի մայիսի 26-ին, շաբաթ օրը և տևում է մի ամբողջ օր, ըստ Եղիշեի, վաղ առավոտվանից մինչև ուշ երեկո՝ մոտ 14—15 ժամ, ըստ Փարպեցու, տևում է շատ կարճ 3—4 ժամ։ Այս ճակատամարտը նկարագրել են երկու պատմագիրները, Եղիշեն ավելի ընդարձակ, իսկ Փարպեցին խիստ համառոտ։ Ըստ Փարպեցու, ճակատամարտը դեռ նոր էր սկսել, երբ պարսկական զորքը մեծ թվով հարձակվում է հայերի վրա, դիմադրությունը լինում է շատ կարճ, լքում է առաջանում նրանց շարքերում և սկսում են փախչել։ Պարսիկները տեսնելով հայերի փախուստը, սկսում են շրջապատել ու կոտորել, շատերին էլ պատերազմի դաշտից դուրս, արգելում ամուր տեղերում, կոտորում ու դերի վերցնում։ Սա ցույց է տալիս, որ Փարպեցին, ինչպես սխալ մեկնաբանություն է տվել ապստամբության պատճառների մասին, այնպես էլ ճիշտ չի շարադրում նաև Ավարայրի ճակատամարտի ընթացքը և հետևանքը։

Փարպեցու այս անգույն բացատրության դիմաց տեսնենք, թե ինչ է ասում Եղիշեն. «Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին, նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և պարսից զորքի ալ թևը շարդելով՝ թշեց գազանների կողմը և շուրջը պատելով կոտորեց մինչև նույն տեղը։ Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց, ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց։

Եվ պատերազմի գործը երկարելով, օրը տարաժամեց և երեկոյան դեմ դադարեց. շատերն իրենց մահվան օրհասը դուան. մանավանդ որ դիակներն այնպես խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտերը...։ Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը...։

Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին...։

Բայց որովհետև հայոց մեծ սպարապետն ընկել էր պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք դիմավոր չկար մեջտեղում... Նրանց ցանուցիր եղան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը...» (էջ 190—192)։

Հայկական բանակը Ավարայրում չպարտվեց, ինչպես իրավացի նշում է Եղիշեն. գլխավոր հրամանատարի մահից հետո միայն թողեց բաց ճակատամարտ մղելու տակտիկան. նա քաշվեց պատերազմի դաշտից և ընտրեց պարտիզանական կռիվ վարելու, թշնամու բանակը մասերի բաժանելու ու հյուծելու տակտիկան։ Այդ կռիվներից հայտնի են Տայքի, Արցախի, Տմորիքի և այլ վայրերի հերոսական կռիվները, որոնց նախ հնարավորություն տվեցին հոներին սկսելու իրենց արշավանքները և երկրորդ, պարսիկները ստիպված եղան փոխել իրենց քաղաքականությունը և վերականգնել երկրի ինքնավարությունը. տնտեսական, մշակութային և կրոնական անկախությունը։

Հայ ժողովուրդը, թե՛ այդ ժամանակ և թե՛ դրանից հետո, երբեք պարտված չի զգացել Ավարայրում։ Արդյոք ինչն է ստիպել Հրանտ Արմենին միտումնավոր կերպով մի կողմ շարտել Եղիշեին, մի ամբողջ օրվա, 14—15 ժամ տևող մահու և կենաց հերոսական ահավոր մարտը փոխարինել մի քանի ժամվա կռվով, որ հայերը դլխովին ջարդվել ու փախչել են։ Ապա ո՞ւր մնաց պարսիկների ոչնչացած 3 544 դինվորի սպանությունը։ Ապա ո՞ւր մնաց Եղիշեի այն պնդումը՝ «ոչ թե մի կողմը հաղթեց և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին»։ Արդո՞ք կարելի է պատմական այս փաստը հաշվի չառնել և միայն հիմք ընդունել Փարպեցու ոչինչ չասող շատ համառոտ տեղեկությունը և թեթևակի եզրակացություն հանել Ավարայրի ճակատամարտի մասին, մի ճակատամարտ, որով հայ ժողովրդի լավագույն զավակները կասեցրին Սասանյան ներխուժողների հաղթարշավը։

Ըստ Եղիշեի, Ավարայրում հայերը զոհ են տվել 1 036 մարդ, պարսիկները՝ 3 544։ Ըստ Փարպեցու, հայերը զոհ են տվել 286 մարդ, իսկ Ավարայրից հետո՝ 750, իսկ պարսիկները՝ 3 544։ Եթե հիմք ընդունենք Փարպեցու տվյալը և Հրանտ Արմենի եզրակացությունները, դուրս է գալիս, որ պարսիկները հայերից 16 անգամ ավելի զոհ են տվել Ավարայրում, բայց և այնպես նորից հայերը կարճ ժամանակվա ընթացքում չարդվում ու փախչում են։ Պարզ է, այստեղ ճիշտ է Եղիշեն և պետք է հիմք ընդունել նրա թվական տվյալները։

Եղիշեի ասելով Ավարայրի ճակատամարտը ծանր պայմանների մեջ էր դրել զորավար Մուշկան Նիսալավուրին. «Իսկ ուրացողների և հեթանոսների կողմից այն օրը ընկան 3544 մարդ։ Նրանցից ինը հոգի խիստ պատվավորներից էին, ուստի և շատ խորը վշտացավ Մուշկան Նիսալավուրը։ Մանավանդ երբ տեսավ, որ իր զորքի ստացած սաստիկ հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան հայերինը, նրա ուժն ու զորու-

թյուններ կոտրվեց, ընկավ, և նրա սիրտը չէր հանգստանում, որ մտածի ու որոշում անի. որովհետև պատերազմն այնպես լվերջացավ, ինչպես ինքը կարծում էր։ Մանավանդ երբ նայում էր ու տեսնում իր կողմից ընկածների բազմությունը և հաշիվ էլ էր անում ու այնքան շատ էր ցանում իր դրքից ընկածների հալոց դրքից ընկածների համեմատությամբ, առավել ևս այն երևելի մարդկանց պատճառով, որոնց հականեռ հանվանեռ ճանաչում էր թագավորը,— այդ մարդը մեծ ազդեցության մեջ էր ընկնում։ Դեպքերն արդարությամբ գրել և հայտնել՝ վախենում էր թագավորից, բայց թաքցնել էլ չէր կարող, որովհետև այսպիսի մեծ կոիվը ծածկել չէր լինի» (էջ 192—193)։

Այս բոլորից հետո պետք է ասել ու ասել Հրանտ Արմենին, որ չի կարելի մերժել այս փաստերը և ասել, որ Եղիշեի գիրքը պատմական երկ չէ, այլ վիպասանություն, մերժել Ավարայրի մեծությունը, ուր ոչ միայն խոցվեց պարսկական մեծ բանակը, այլ մեծ ցարդ առաջավ և պարսկական զորավար Մուշկան Նիսայավուրսը կանգնեց ծանր դրության առաջ։

Հրանտ Արմենը իր աշխատությունը վերջացնում է հետևյալ բանաձևումով. «Մեզ մեն փեսրվար ամսուն Եղիշեն է, որ երկյուղածությամբ կոտնի և ոչ թե պատմական դեպք մը կամ դեպքեր, իրենց հյորիտ ներկայացումով։

Տեսնենք վիպասանությունը, եթե կուզենք, բայց դիտենանք պատմական իրողությունը» (էջ 247)։

Այսպիսով, մեղադրվում է Վարդանանց պատերազմը որպես պատմական իրողություն։ Վարդանը և մյուս գործիչները պատմական անձնավորություններ չեն և եթե եղել են, քաղաքական մեծ գործիչներ չեն, այդ բոլորը ստեղծել է վիպասան Եղիշեն և նրա տեսնն է, որ կատարում ենք։ Նիհիլիզմը հասնում է իր բարձրագույն կետին։ Եվ այս ասվում է Վարդանանց պատերազմի 1500-ամյակի, համազգային մեծ տոնի առթիվ։

Հրանտ Արմենն իր այդ գրքով փաստորեն աշխատել է ուրբ հարված հասցնել, ոչ հայության համար կարևոր ազգային-հայրենասիրական նշանակություն ունեցող այդ տոնակատարությանը։ Ահա թե ո՞ւր են հասցնում հեղինակին իր դրքի ազատությունն ու անպատասխանատվությունը։

Հրանտ Արմենը հոգևորականներին համարում է ապազգայության կազմակերպիչներ նաև նրա համար, որ նրանք ստանում են մահվան պատիժ։ Դա նույնպես ճիշտ չէ։ Պարսկական զորամասերը մահվան էր դատապարտել նաև նախարարներին։ Բայց հետագա քաղաքական դեպքերը հնարավորություն են տալիս նրանց ազատվելու։ Հազկերտը հոներից պարտություն կրելով մեղադրում է մոգերին, սրանք էլ արդարանալու համար մեղքը գցում են հոգևորականների վրա և դրա համար էլ թագավորի հրամանով դիմատում են։

Ղևոնդ երեցը հիվանդ չի եղել Ավարայրի ժամանակ, դա չի երևում Եղիշեի աշխատության բուն տեքստից։ Նրա հիվանդությունը երևան է եկել միայն հարցաքննության վերջին շրջանում, այն էլ հայտնի չէ, թե նա իրո՞ք հիվանդ էր, թե իր գործի մեջ ավելի հետևողական լինելու համար է Դենշապուհը նրան հիվանդ դարձրել։ Իսկ եթե իրոք հիվանդ է, դա եղել է նրա ձերբակալումից հետո միայն, բանտային ծանր պայմանների հետևանքով, մանավանդ որ նա տարիքով ավելի մեծ էր և չի դիմացել դժվարություններին։

Հրանտ Արմենի աշխատությունից երևում է, որ ոչ միայն նախարարները, որոնց հերքումը նշեցինք վերևում, այլև հոգևորականների զգալի մասը դնացել է Վասակի հետ։ Դա նույնպես ճիշտ չէ։ Նրա կողմնակից հոգևորականների թիվը նախ շատ չնչին էր և երկրորդ, ոչ մի տեղի ընկնող հոգևորական չի գնացել նրա հետ։ Ճիշտ է, Հրանտ Արմենը փորձեր է անում Կորյունի նման հոգևորականին համարել Վասակին համակիր, միայն նրա համար, որ նա իր աշխատության մեջ գովում է Սյունյաց իշխանին։ Բայց դրանով Կորյունը չէր կարող դառնալ Վասակյան և դեմ գնար Սահակ-Մեսրոպյան խմբին։ Կորյունն իր աշխատությունը գրել է Ավարայրից առաջ։

Հրանտ Արմենը ժխտելով Ավարայրը և նրա զորժիչներին, գալիս է այն եզրակացության, որ Հայ եկեղեցին մահմեդականության դեմ պայքարելու համար առաջ է քաշել Եղիշեին և նրա գրքի հիման վրա, տոն է սահմանել և ամեն տարի կատարում է այդ տոնակատարությունը։ Եթե Ավարայրը չունենար համաժողովրդական նշանակություն, ո՛չ Եղիշեն կլիներ և ո՛չ էլ տոնակատարությունը։ Եթե մի որևէ դեպք տեղի չունենա, ի՞նչպիսի գրքեր էլ որ գրվեն, դա ժողովրդական նշանակություն ունենալ չի կարող։ Ժողովուրդն է թելադրել Եղիշեին իր աշխատությունը գրելիս։ Ավարայրը մնացել է ժողովրդի հիշողության մեջ, նա պատմվել է սերնդից սերունդ և հասել է մեզ, դրա համար էլ Եղիշեն իր գործով ապրում է բոլոր դարերում և բոլոր ժամանակներում։

Վարդանանց պատերազմը միայն տեղական նշանակություն չունեցավ, նա դուրս եկավ հայկական սահմաններից և ստացավ միջազգային նշանակություն։ Հայ ժողովուրդն իր պայքարով փրկեց Առաջավոր Ասիայի զարգացած մի շարք ժողովուրդներին Տիզբոնի ձուլող քաղաքականությունից, Ենոքիվ հայ ժողովրդի հերոսական պայքարի, այդ քաղաքականությունը ձախողվեց և Հազկերտի հետ մեռավ։

Հրանտ Արմենի նույն աշխատության մեջ կան նաև ասարկելի շատ կետեր, անճշտություններ, փաստական ու թվային սխալներ։ Նա հնարավորություն չի ունեցել օգտագործել ժամանակակից հայագիտության վերարերող բազմաթիվ աշխատություններ։ Բայց մենք բոլորի վրա կանգ առնել չենք կարող։

Ամփոփելով մեր դիտողությունները Հրանտ Արմենի «Մարդպան և Սպարապետ» աշխատության մասին, եզրակացնում ենք, որ սույն աշխատությունը գիտական նորություններ չունի, աշխատության նպատակն է նսեմացնել Վարդանանց պատերազմի 1500-ամյակի տոնակատարությունը և Վարդան Մամիկոնյանի խաղացած դերը Ավարայրում, որպես մեծ զորավարի։

Հ. Ս. Հ.